

ՏԱՆԻՄԱՐՔԻ ՄԷՋ ԶԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ ԺԽՏՈՂ ՑՈՒՑԱԶԱՆԴԵՍԸ ՄԵԾ ԱՂՍՈՒԿ ԿԸ ՅԱՌԱՋԱՑՆԵ

Տանիմարքի մէջ բուռն բանավէճեր ծաւալուած են, Հայոց ցեղասպանութիւնը ժխտող ցուցահանդէս կազմակերպելու թագաւորական Գրադարանի որոշման առթիւ:

Հարցին շուրջ անդրադարձած են ոչ միայն Քոփենհագենի գլխաւոր թերթերը, այլ նաեւ եւ երկրի մշակութի նախարարն ու թուրք մտաւորականները:

Թագաւորական Գրադարանին ուղղած իրենց բաց նամակին մէջ, երեք տասնեակէ աւելի թուրք արուեստագէտներ ու գրողներ պահանջած են չեղեալ յայտարարել այդ ցուցահանդէսը, որ «ոչ միայն կը ոտնահարէ պատմական արդարութիւնը, այլեւ կը հարուածէ թուրքիոյ ժողովրդավարացման»:

«Առանց սեփական պատմութիւնը անկեղծօրէն ընդունելու, թուրքիա չի կրնար արդիւնաւէտ ժողովրդավարութիւն ունենալ: Մինչդեռ թուրքիոյ կառավարութիւնը աւելի քան 90 տարի է ի վեր՝ բռնութիւն կը գործածէ պատմական ճշմարտութեան վրայ եւ յառաջ կը տանի իր ժխտողական քաղաքականութիւնը: Եւ այս ցուցահանդէսը կ'աջակցի այդ քաղաքականութեան», - ըսած են նամակի տակ ստորագրած թուրք մտաւորականները:

Հարցին անդրադարձած է նաեւ Տանիմարքի մշակութի նախարարը: Կառավարութեան ներկայացուցիչը ըսած է, որ մշակութային կառուցները պէտք է կարողանան պատմական դէպքերու հետ

առնչուելու ժամանակ, գերծ մնալ արտաքին ուժերու ճնշումներէն: Թէեւ նախարարը յստակ անուններ չէ յիշած, սակայն ակնյայտ է, որ ան ակնարկած է թրքական կողմի ճնշումներուն, քանի որ վիճարկող ցուցահանդէսը կազմակերպելու որոշումը կայացուած էր թուրքիոյ դեսպանին հետ հանդիպումէն անմիջապէս յետոյ:

«Այս նոյնն է, եթէ այսօր մենք հնարաւորութիւն տանք նեո-նացիստներուն ցուցահանդէս կազմակերպել «այսպէս կոչուած Հոլոքոստ» վերտառութեամբ», - ըսած է Խորհրդարանի անդամ Նիքոլայ Վիլմուսէն: Մամուլը կը գրէ, որ պատգամաւորը նաեւ հարցում ուղարկած է արտաքին գործոց նախարարութեան, պարզաբանելու համար թէ, արդեօք պետութիւնը այս հարցով ճնշումներու ենթարկուած է Անգարայի կողմէ:

«Այս անընդունելի որոշում է, որը կը վիրաւորէ գոհերու յիշատակը ու կ'ամբաստանէ պատմական կեղծիքը», - իր հերթին յայտարարած է Սոցիալ Դեմոկրատական կուսակցութեան ներկայացուցիչ Լարս Ասլան Ռասմուսը: - «Տեղի ունեցածը ցեղասպանութիւն էր, եւ թուրքիան պէտք է ընդունի այդ», - յայտարարած է թրքական արմատներ ունեցող քաղաքական գործիչը:

Թագաւորական Գրադարանի տնօրէնը, սակայն, քննադատութիւնները չէ ընդունած եւ կը պնդէ, թէ այս քայլով ինք ընդամէնը կ'ուզէ ներկայացնել վիճաբանող երկու կողմերու տեսակէտները:

ԵՐՈՍԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԱԽՁԳՈՒՇԱՅՆԵ ՐԱՅԱՍՏԱՆԻՆ

Եւրոմիութեան արտաքին յարաբերութիւններու գլխաւոր յանձնակատարի խօսնակ Մայա Կոչիւեան չի չը ներկայացուցած է Եւրոմիութեան պաշտօնական տեսակէտը Ռուսաստանի եւ մի քանի այլ նախկին խորհրդային հանրապետութիւններու հետ Մաքսային Միութեան (ԵւրԱզէս) մէջ մտնելու Հայաստանի հաւանականութեան վերաբերեալ:

Քեթրին Էշթընի խօսնակը «Ազատութիւն» ռատիոկայանի հետ զրոյցի ընթացքին խուսափած է ուղղակիօրէն հաստատել Հայաստանի մօտ Եւրոմիութեան դեսպան Տրայըն Հրիսթեայի այն յայտարարութիւնը, թէ Հայաստանը պէտք է ընտրութիւն կատարէ ԵՄ-ի եւ «ԵւրԱզէս»-ի միջեւ:

«Իմ կարծիքով, միշտ աւելի լաւ է պարզել սկզբնաղբիւրի հետ: Ծառ յաճախ նման յայտարարութիւնները սխալ կը ներկայացուին: Մենք այժմ կը բանակցինք Ընկերակցութեան համաձայնագրի եւ խոր ու համապարփակ ազատ առեւտուրի պայմանագրին շուրջ: Հայաստանը ազատ ու ինքնիշխան է իր ուզած համաձայնագրին մէջ մտնելու հարցով, որը շարքին նաեւ երրորդ երկրներու հետ համաձայնագրի մէջ մտնելու առումով», - ըսած է Մայա Կոչիւեան չի:

Խօսնակը աւելցուցած է, որ Հայաստանի անդամակցութիւնը ազատ առեւտուրի պայմանագրով:

Շարք էջ 4

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊԻՏԻ ՉՄԱՍՆԱԿՑԻ ՆԱԽԱԳԱՅԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

«Զորքորդ ինքնիշխանութիւն» թերթին տրուած հարցազրոյցի մը ընթացքին Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեան յայտնած է, որ պիտի չմասնակցի յառաջիկայ նախագահական ընտրութիւններուն:

Տէր-Պետրոսեան որպէս պատճառ յիշած է իր տարիքը: «Քանի որ, ինչ կ'ուզէք ասէք, 68 տարեկան մարդը նոյն եռանդն ու աշխատունակութիւնը չի կարող ունենալ, ինչ 40-60 տարեկանը, որը, թերեւս, նախագահի պաշտօնին յաւակնող քաղաքական գործիչների օպտիմալ տարիքն է: Հետեւաբար, ասպարէզ պէտք է իջնեն ինձնից աւելի երիտասարդները», ըսած է Հայաստանի առաջին նախագահը:

Ան յիշեցուցած է տակաւին նախորդ նախագահական ընտրութիւններէն առաջ իր այն յայտարարութիւնը, որ նախագահի պաշտօնը ստանձնելէ ճիշդ երեք տարի յետոյ պատրաստ էր վերջնականապէս հեռանալ քաղաքականութենէն՝ ժողովուրդին օրինական ընտրութիւններու միջոցաւ երկրի նոր նախագահ ընտրելու հնարաւորութիւն տալով:

Հարցին, թէ տարիքային հանգամանքէն բացի իր չառաջադրման այլ պատճառ չկա՞յ, նախկին նախագահը պատասխանած է, որ ցանկութեան պարա-



Հայ Ազգային Գոնկրէսի առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեան

գային շատ պատճառներ կարելի է գտնել: «Բայց երբ գոյութիւն ունի մէկ հիմնական պատճառ, միւսների մասին անիմաստ ու աւելորդ է խօսել, ինչպէս չղօղանջող գանգի վերաբերեալ միջնադարեան անեկղոտում: Այնուամենայնիւ, քանի որ շատ էք պնդում, ասեմ. կայ եւս մէկ, թէեւ աննշան, զուտ տեխնիկական պատճառ, որը գրեթէ անհնար է դարձնում իմ առաջադրումը: Բայց այն չեմ ուզում բացայայտել, որովհետեւ մեր ցինիկ իրականութեան

Շարք էջ 4

ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆ ԴՐԱԿԱՆ ԿԸ զԱՅԱՍՏԵ ԻՐ ՎԵՐԸՆՏՐՈՒԵԼՈՒ ՅԱՒԱԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

«Ես լաւ հնարաւորութիւն ունեմ հայ ժողովրդի վստահութիւնը նուաճելու եւ նախագահի պաշտօնում երկրորդ ժամկէտում վերընտրուելու համար», - «Ռոսիա-24» հեռատեսիլ ալիքով յայտարարած է Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեան:

Որպէս իր նախագահութեան տարիներու յաջողութիւններ Սարգսեանն առանձնացուցած է հասարակական բաց միջոցառումները, երբ մարդիկ մրցակցային պայքարով ազատօրէն կը քննադատեն իշխանութիւններուն եւ զանգուածային լրատուամիջոցներու ազատութեան ապահովումը:

Յայտնելով, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամի հետեւանքով Հայաստանի տնտեսութիւնը 14 տոկոսանոց անկում ապրած էր, Հայաստանի նախագահն ըսած է. - «Այս տարիներու ընթացքում մենք կարողացել ենք վերականգնել տնտեսութիւնը՝ 2011 թուականին արձանագրելով ՀՆԱ-ի 4 տոկոսանոց աճ: Այս տարի ակնկալում ենք 7 տոկոս՝ մօտ 3 տոկոսանոց սղաճի պայմաններում»:

Այսուհանդերձ, ան չէ հերքած, որ սոցիալ-տնտեսական ոլորտէն ներս բազմաթիւ խնդիրներ կան: «Մենք ապրում ու զարգանում ենք բացառիկ բարդ, շրջա-

փակման պայմաններում: Մենք անգամ ուղղակի երկաթուղային կապ չունենք Ռուսաստանի, ԱՊՀ երկրների հետ: Սա նշանակում է, որ մեր արտահանողները միւսների հետ հաւասար պայմաններում չեն աշխատում: Բայց մենք ընտելացել ենք այդ պայմաններին, եւ փորձում ենք զարգացնել տնտեսութեան այն ոլորտները, որոնք մրցունակ են եւ որոնց չի խանգարում տրանսպորտային բաղադրիչը», - «Ռոսիա-24»-ի հարցազրոյցի ընթացքին ըսած է Հայաստանի նախագահը:

Անդրադառնալով արտագաղթի հարցին, Սերժ Սարգսեան նախ ըսած է, որ այդ երեւոյթը բնորոշ է բոլոր զարգացող երկրներուն, ու աւելցուցած. - «Մենք, իհարկէ, ոչ մի դէպքում չենք պատրաստուում անյաղթահարելի խոչընդոտներ ստեղծել այն մարդկանց համար, ովքեր ուզում են իրենց կեանքը կառուցել այլ երկրներում, որովհետեւ չի կարող երկիրը բանտ դառնալ սեփական քաղաքացիների համար: Միակ ճանապարհը երկրում այն պայմանները ստեղծելն է, որոնք դրսում հրապուրում են մեր քաղաքացիներին: Բայց դրա համար ժամանակ է պէտք, եւ ես համոզուած եմ, որ այդ մարդիկ վերադառնալու են Հայաստան»:

ՇՆՈՐՅԱՒՈՐ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ

Կաթողիկէ համայնքի Ս. Ծնունդի տօնին առթիւ «Մասիս» կը շնորհաւորէ հայ Կաթողիկէ համայնքը, մաղթելով յաջողութիւն, բարօրութիւն եւ բարգաւաճ տարի մը:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՏԱՐԿՈՒՄ Է ՄԱՐԴՈՒՑ, ՄՏՔԻՑ, ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ԱՐԱՑԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

Հայաստանը յորձանուտում է՝ օլիգարխներին, օլիգարխների արտաքին ու ներքին «տանիքների», գերքաղաքական պարտադրանքներին, հանրային վայրիվերումների, մասնագիտական տկարությունների, երկրի ինտելեկտուալ վերնախաւի անտեղեկությունների ու անպատասխանատուության շունդալից վայրընթացի մէջ:

Երկիրն արագութեամբ դատարկուում է մարդուց, մտքից, տրամաբանութիւնից, յոյսից ու իմաստից, բայց եւ քննարկում ենք:

Ամէն օր, ամէն ժամ, ամէն պահի՝ ընտրութիւն, Փութիւն ու Եւրոպա ենք քննարկում: Եւ խօսելուց առաջ էլ մեզ նեղութիւն չենք տալիս սահմանելու մեր ասելիքի գոնէ տիրոջութները:

Գերքաղաքականն ու աշխարհայեացքայինը, ռեզիոնանսն ու հանրայինը մի տեղ խառնած՝ խօսում ենք: Եւրասիականութեամբ ենք, եւրազիացութեամբ, ինքնորոշում, քաղաքացիականանում: Բայց ամէն ինչը մի տեղ, նոյն կաթնաշառի, նոյն մարդկանցով ու նոյն հնոտի մտքերով:

Հայաստանի ժողովուրդը որպէս ներկայ գարգացող աշխարհի մաս, պարտաւոր է գնալ առաջ, վերցնելով ամենաառաջաւորը երկրագնդի ցանկացած մշակոյթից, նորոյթից, նուաճումից: Սա պահի ասքիոմատիկ պահանջն է, եւ քննարկման առարկա չի էլ կարող լինել:

Մենք պէտք է վերցնենք Եւրոպայից էլ, Ամերիկայից էլ, Զինաստանից էլ, նոյնիսկ Հոնոկուրասից էլ, եթէ մի բանն այնտեղ առաւել է մնացածից:

Մեր հանրային առաջընթացը որեւէ կապ չունի պետական արտաքին կողմնորոշումների հետ: Աշխարհն ազատ է, վերցրու այն, ինչը կարելու է համարում, շփուիւր նրա հետ, ումից լաւը, առաջաւորը կը սովորես: Որպէս գործիքներ ընտրիր այն, ինչը ամենաէֆեկտիւնը կը լինի քո հարցերը լուծելու համար:

Այս ամէնը մեր ներքին կողմնորոշման, գիտակցման ու անելիքի հարցեր են: Ոչ մէկը մեր ձեռքը չի բռնել, մեր ուղեղը չի կողպել ու պարտադրել, թէ արա ամենայնուայնացը, ռուսականը, ասիականը, ծայրահեղը, կամ թրքական մոլորամը երգիր:

Հենց մենք ենք մեր եղած արժէքայինով ճամբայ տուել մեր սոցիալին՝ պլպլալու որպէս մարգարիտ: Մենք ենք մեզ կաղապարել: Մենք ենք մեր նորմալիւն լլկացրել ու մեր գլխին նստեցրել սրիկային ու տականքին:

Մեր խնդիրը մեր արժէքայինը վերակերտելն է: Այնանհնար է բերիք, ֆիզիքայէս ներմուծել, բերել, տարածել: Նաեւ ոչ ռուսը, ոչ եւրոպացին ու ոչ էլ ամերիկացին չի կարողանալու դա անել, եթէ մենք փակ ենք նորի առջեւ հոգեբանորէն:

Եղածի մերժումը եւ նորի մուտքը պրոցես է, որը մեր վերնախաւը պէտք է կարողանայ սկզբնաւորել, ներդնել, քարոզել, տարածել: Իշխանութիւններին այս հարցում չի կարելի մեղադրել: Այն կոնսերւատիւ է համարեա բոլոր երկրներում: Դա իշխանականի հոլթիւնն է, եւ մենք բացառութիւն չենք:

Եթէ ամերիկեան սահմանադրութեան հանդէպ մեծագոյն յարգանքը եւ հանրային օրինականութեան ներքին կապանքները չլինէին, վերջին տարիների ամերիկեան իշխանութիւնները, որոնք երեւի ամենայնուայնացներից էին աշխարհում, երկիրը կործանած կը լինէին:

Ես գտնում եմ, որ այլեւս որեւէ մեղադրանք արտաքին հասցէատէրերին՝ մեր հանրային կողմնորոշման հարցերում, առնուազն անինքնասէր անազնութիւն է:

Մեր յետամնացութեան մեղաւորը ռուսը կամ եւրոպացին, կամ որեւէ այլ մէկը չէ, մենք ենք:

Այսինքն, կողմնորոշումն ունի առնուազն 2 բաղադրիչ՝ հանրային-արժէքայինը, եւ պետական-աշխարհաքաղաքականը:

Եղած յետամնաց արժէքայինի մասով մեղաւորը մենք ենք, եւ վերջ:

Հիմա քննարկենք հայկական պետութեան, այսինքն կոնկրետ իշխանութիւնների խնդիրները կողմնորոշումների առումով:

Հայաստանը գետեղուած է գերքաղաքական շատ կարեւոր խաչմերուկում, ուր բազմաթիւ շահեր ու գործօններ են բախուում իրար: Դրանք են՝ Թուրքիա-Թուրան առանցքը, Ռուսաստանի՝ որպէս ռեզիոնալ գերուժի իր ազդեցութեան սահմանի ճշգրտման գործօնը, նմանապէս ԱՄՆ՝ որպէս գերտերութեան, եւ Իսրայէլի՝ որպէս ռեզիոնալ գերուժի՝ շահերի հարցը, Իրանի հետ պարտադրուող յարաբերութիւնների հարցը, ռոժեղացող Ատրպէյճանի եւ ինքնորոշուած Վրաստանի ռեզիոնալ նպատակային դաշտերը:

Արտաքննապէս իբր քիչ բան է փոխուել վերջին մի քանի տարիներին, բայց եւ խորքային մեծ տեղաշարժեր են կատարուել:

1. Եւրամիութեան ներքին խնդիրների հետ կապուած Թուրքիան արդէն իսկ բաւական յստակ կողմնորոշուել է որպէս ինքնուրոյն գերուժ, եւ կենտրոնացած է գուտ տարածաշրջանային իրաւունքերի ծաւալման վրայ: Նա արդէն անթաքոյց միջամտում է իր հարեւանների ներքին գործերին:

2. Թուրքիա-Ատրպէյճանը գործում են ռեզիոնալ տանդէմի ձեւով: Հայաստանի նկատմամբ նրանց վերաբերմունքն արդէն իսկ միանաշանակ է՝ ազրեսիւ, պրոնալկացիոն եւ անհրաժեշտ գործնական քայլերով Հայաստանը տանում են լրիւ հայաթափման: Նրանք փաստօրէն օրակարգից հանել են Ղարաբաղի հանգուցալուծման խնդիրը, այն փոխարինելով Հայաստանը հայաթափմամբ նուաճելու խնդրով:

Նախորդ տարիների Հայաստանի կողմից արուած բոլոր գիշողական առաջարկները մերժուած են Ատրպէյճանի կողմից հենց այդ նպատակով: Նրանք որեւէ կերպ չեն համաձայնի մեր՝ նոյնիսկ ամենամեծ գիշումներին: Հիմա եթէ մենք Ղարաբաղի հետ Հայաստանի կէսն էլ առաջարկենք, նրանք որեւէ պատրուակով դրանից էլ կը հրաժարուեն, որովհետեւ ակնկալիքն ամբողջ Հայաստանն է:

3. Ռուսաստանն այդպէս էլ չկարողացաւ իր նոր գոյակերպի դոկտրինը մշակել եւ ներկայումս սուլայտանքների մէջ է: Ձեռքի հետ

իրենով է արել Հայաստանի բոլոր ենթակառուցումները, բայց -եւ չի պատկերացում Հայաստանի հանդէպ գերքաղաքական ներձեակերպման խնդիրները:

Եթէ մենք սահմանակից լինէինք Ռուսաստանին, ապա կասկած չունեմ, որ հիմա ընդամէնը ռուսական մարզ էինք: Բայց քանի որ սահմանը չկայ, եւ արանքում էլ ինքնորոշուած ու Ռուսաստանին հակառակորդ Վրաստանն ու Ատրպէյճանն են, ապա քաղաքական, գերքաղաքական լուծումներ գոյութիւն չունեն:

Այդ պատճառով Հայաստանը, որպէս սուբիեկտ, Ռուսաստանի ռեզիոնալ ծրագրերում վաղուց բազմակի իմաստների կրող է:

Որպէս սեփականութիւն՝ այն արդէն վաղուց ռուսներինն է: Որպէս ռուսական գերուժի սահման՝ այն ընդամէնը ռեզիոնալ բազալկարող մայ է, որը ցանկացած պահի կարող է տեղափոխուել: Բայց նաեւ պարզուել է, որ Հայաստանը քրիստոնեայ, սպիտակամորթ մարդկային ռեսուրս է, որը ռուսները դանդաղ արտահանում են երկրից:

Այս առումով մենք նման ենք սպանդանոցում մորթուող ու վերամշակուող կենդանուն, որի ամբողջ նիւթն է օգտագործուում:

Իմ կարծիքով, ռուսականի շահերի ծիրում պատերազմ նախատեսուած չէ: Ընթանալու է տարածքի դանդաղ հայազրկում՝ վերջնականապէս այն գիշելով, որպէս մանրադրամ ներկայացնելով Թուրքիա-Ատրպէյճան տանդէմին՝ այլ հատուածներում գիշումներ կորզելու համար:

Սրանում ոչ մի անսպասելի բան չկայ: Ցանկացած ուժ միջազգային ատենայնուժ գործում է մեծագոյն ցինիզմով եւ հենց նոյն սկզբունքներով: Եւ ռուսները որեւէ մէկից վատը կամ աւելի վատը չեն:

4. Ամերիկացիներն արդէն իսկ կորցրել են իրենց գլոբալ գերքաղաքական տեսլականը՝ այն գիշելով տեղային, հատուածային, ժամանակաւոր դրուածքները մի կերպ պահելու խնդիրներին:

Կոնկրետ մեր ռեզիոնում դրանք ամբողջապէս գիշուած են Իսրայէլին, եւ Իսրայէլն է ռեզիոնալ բոլոր նախաձեռնութիւնների հեղինակը: Եթէ մանրամասն դիտարկենք կատարուողը, ապա կը տեսնենք, որ միակ երկիրը, որը կատարուողից իր համար դրական արդիւնքներ է գրանցում, Իսրայէլն է:

5. Իրանը պաշտպանողական կեցուածքի մէջ է, որովհետեւ Իսրայէլը նրա դէմ է կենտրոնացրել իր միջազգային ողջ լրբբիտական կարողութիւնները եւ նպատակամղուած գնում է պատերազմի սանձազերծման՝ Իրանի դէմ (Թէ ինչու պատերազմ, դա մեծ խօսակցութեան նիւթ է, որը սոյն յօդուածի շրջանակներից դուրս է):

6. Եւրոպան ծանր ներքին պրոբլեմների մէջ է, ներկայումս չի դրսեւորում որեւէ լուրջ արտաքին յաւակնութիւն: Եւ չի էլ կարող, որովհետեւ ինքը միացեալ քաղաքական սուբիեկտ չէ: Փոխարէնը կործուծ է կողմնորոշուել, թէ ինչպէս լուծի իր ծերացող աշխատուժի թարմացման հարցը, գոնէ մասնակիորէն մերժելով մահմեդականութեան յետագայ աճն իր

տարածքում:

Եւ այդ ծիրում արդէն նկատուում է մի անսպասելի միտում: Եւրոպան եւս շահագրգիռ է դառնում Հայաստանի ներքին եւ արտաքին տապալմանը, արտագաղթի պատրաստ հայերին դիտելով որպէս ներկրման արժանի քրիստոնեաների:

Փաստօրէն, գալիս ենք այն համոզման, որ ներկայումս, իր ինքնակամ թուլութեան պատճառով, իր ոչ-սուբիեկտայնութեամբ Հայաստանը որպէս պետութիւն չի կարող նոյնիսկ տեսականօրէն դաշնակից ունենալ՝ բոլոր արտաքին սուբիեկտներն են շահագրգիռ (որոշ վերապահումներով, բացի Իրանից) նրա դանդաղ մահուան մէջ:

Հետեւաբար, այսօրուան ոչ-սուբիեկտային Հայաստան պետութեան արտաքին կողմնորոշումների հարցը մեզանից փաստօրէն կախուած չէ: Եւ Ռուսաստան, կամ Եւրոպա, կամ Արեւմուտք քաղաքական կողմնորոշման հարցերը արհեստածին են ու անիմաստ:

Դիտարկենք, թէ որ արտաքին գործօնները կարող են այս ահագնացող դրուածքները շեղել:

Միակ դրական, բայց եւ դեռ գուտ տեսականօրէն հնարաւոր գործօնը, որը ես կարող եմ նշել, հնարաւոր քրտական պետութեան ստեղծումն է նաեւ թրքական տարածքների հաշուին, որը սահմանակից կը լինի Հայաստանին:

Այդպիսի պետութիւնը անմիջապէս չի կարող մասնակից լինել Հայաստանի կործանմանը, որովհետեւ դա իրեն ձեռնտու չէ: Բայց եւ կը մեծացնի Թուրքիա-Թուրան հեռաւորութիւնը:

Քրտաստանի ստեղծումը տեսականօրէն ձեռնտու է շատ ու շատ արտաքին սուբիեկտներին: Եւ ռուս-


Շարք էջ 20

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆՁԱԿԵԱՆ
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի
 ԽՄԲԱԳԻՐ՝
 ՏՕՔԹ. ԱՐՇԱԿ ԳԱՁԱՆԵԱՆ
 ՎԱՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ
 ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ
MASSIS Weekly
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
 1060 N. Allen Ave.
 Pasadena, CA 91104
 Phone: (626) 797-7680
 Fax: (626) 797-6863
 E-Mail: massis2@earthlink.net
 http://www.massisweekly.com
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)
 Published Weekly
 Except Two Weeks in August
 ANNUAL SUBSCRIPTION RATES:
 USA \$50.00, \$80.00 (First Class)
 Canada \$125.00 (Air Mail)
 Overseas \$225.00 (Air Mail).
 All payments must be made in US funds & Drawn on US banks.
 Periodicals Postage Paid at Pasadena CA.
 Please Send Address Change To MASSIS WEEKLY

ՐԱՅԱՍԱՆ

ՏԻԳՐԱՆ ՈՒՐԻՏԱԿԱՆԵԱՆ. «ՏԵՍԱԿԱՆՕՐԵՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ Ի ՅԱՅՏ ԳԱԼՈՒ ԶԱԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԱՅ»

Տեսականորեն, նախքան Հայաստանի նախագահի ընտրությունները դեռ բազմաթիվ ժամանակ կայ, որպեսզի ինչ-որ թեկնածու նախագահի պաշտօնին համապատասխան ունակություններ դրսևորի եւ ստանայ հասարակության որոշակի խաւի ձայները: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում յայտնել է «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան մամուլի քարտուղար, Աժ պատգամաւոր Տիգրան Ուրիխանեանը՝ մեկնաբանելով սպասուող նախագահական ընտրութիւններում ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի չառաջադրուելը:



Աժ պատգամաւոր Տիգրան Ուրիխանեան

Քային թեկնածուի առկայութիւնը եւ մասնակցութիւնը այս կամ այն քաղաքական գործընթացում ինձ համար էական եւ կարեւոր է: Լաւ է, երբ ընտրութեան լայն հնարաւորութիւն կայ, կայ որակեալ ընտրութիւն եւ, ընդհակառակը, վատ է, երբ նման հնարաւորութիւն չկայ», - ասել է ԲՀԿ մամուլի քարտուղարը: Դիտարկմանը, որ նախագահի ընտրութիւններում հայ հանրութիւնը, փաստացի, զրկուել է այլընտրանքից, Տ. Ուրիխանեանը պատասխանել է, որ այս փուլում չէր ցանկանայ եզրակացութիւններ անել: Երբ յայտնի դառնան բոլոր թեկնածուները, ինքը ճիշդ կը համարի նման վերլուծութիւն կատարելը:

Հարցին, թէ ինչ քաղաքական ճակատագիր է սպասուում ՀԱԿ-ին, Ուրիխանեանը չի պատասխանել՝ կանխատեսումները թողնելով ՀԱԿ-ի գործընկերներին:

«ՉԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»-Ը ԹԵԿՆԱԾՈՒ ԶԻ ԱՌԱՋԱԴՐԻ ԵՒ ՈՐԵՒԵ ԹԵԿՆԱԾՈՒ ԶԻ ՍԱՏԱՐԻ

«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը չի առաջադրելու իր թեկնածութիւնը առաջիկայ նախագահական ընտրութիւններում: Կուսակցութեան համագումարում յայտարարելով իր որոշման մասին՝ Սարգսեանը ընդգծեց, թէ «ընտրութիւններում յաղթում են մինչեւ քուէարկութեան օրը», իսկ այսօրուայ քաղաքական դաշտում ինքն այդպիսի գործչի չի տեսնում՝ նկատի ունենալով նաեւ գործող նախագահ Սերժ Սարգսեանին:



«Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեան

որոնք հակուած են դէմ քուէարկել բոլորին: Բայց մենք ընդհանուր տեսակէտը ասացինք՝ թէ ինչպէս ենք վերաբերում այս ընտրութիւններին: Մնացածը ժամանակի խնդիր է», - յաւելեց նա:

Դիտարկմանը, թէ մէկ ամիս առաջ չէր բացառում իր առաջադրուելու հնարաւորութիւնը՝ հասարակութիւնից ազդակներ ստանալու պարագայում, Սարգսեանն արձագանքեց, որ այդպիսի բան չեղաւ. - «Ես ցաւով պիտի նշեմ, որ շրջեցի հանրապետութեան մարզերի կէսից աւելին, եւ այն ոգեւորութիւնը, ինչ նախկինում կար, բացարձակապէս չկայ: Ես սխալուում էի՝ մտածելով, որ նախագահական ընտրութիւնների շեմ է, քաղաքական կեանքը կ'ակտիւանայ, եւ հասարակութեանը հնարաւոր է այդպէս բերել: Հասարակութիւնն անտարբեր է դարձել»:

«Հետեւութիւններ անելով ներքաղաքական դաշտում եւ մեր հասարակութեան մէջ ձեւաւորուած իրավիճակից, մեր ծրագրերը եւ նպատակները վտանգի տակ չդնելու պատասխանատուութիւնից՝ ես որոշեցի չառաջադրուել առաջիկայ նախագահական ընտրութիւններում: Յուսով եմ՝ չառաջադրուելու ասելիքի կամ կամքի բացակայութեան հետեւանք չէք համարում», - համագումարի ամբիոնից յայտարարեց Արամ Սարգսեանը:

Աւելի ուշ «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «Հանրապետութեան» առաջնորդն ասաց, որ կուսակցութիւնը նախագահի ընտրութիւններում չի սատարելու ոեւէ թեկնածուի՝ ընդգծելով, թէ դա բոլորով չէ:

«Ամսի 18-ին ես՝ որպէս Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի, գնալու եմ ընտրատեղամաս եւ իրականացնելու եմ իմ ընտրական իրաւունքը՝ փակ, գաղտնի քուէարկութեամբ: Կուսակցութեան անդամներից կան մարդիկ,

«ԱԶԱՏՈՒԹԻՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԱՐԿԵՑ ԲԱԳՐԱՏԵԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹԻՒՆԸ

Ընդդիմադիր Հայ ազգային կոնգրէսի պատգամաւոր, Հայաստանի նախկին վարչապետ Հրանդ Բագրատեանի գլխաւորած «Ազատութիւն» կուսակցութիւնը իր համագումարում միաձայն որոշեց առաջարկել Բագրատեանի թեկնածութիւնը առաջիկայ նախագահական ընտրութիւններում:



Նախկին վարչապետ Հրանդ Բագրատեան

Նախկին վարչապետը, ով միառժամանակ դադարեցրել է իր ակտիւ համագործակցութիւնը կոնգրէսի քաղաքական խորհրդի հետ, դեռ անցած շաբաթ յայտարարել էր, որ եթէ Հայ ազգային կոնգրէսի (ՀԱԿ) առաջնորդ, Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանը առաջադրուի Փետրուարի 18-ի նախագահական ընտրութիւններում, ապա ինքը կը հանի իր թեկնածութիւնը, եթէ առաջադրուած լինի:

Համագումարում Տէր-Պետրոսեանի մասին խօսելիս Բագրատեանը ասաց, որ նրա հետ հրաշալի յարաբերութիւնների մէջ են, եւ չի կարծում, որ խնդիրներ կ'ունենան «իրար ճանապարհ խաչաձեւելու»:

«Ես նման մտադրութիւն չունեմ, սա յստակ է: Բայց կայ նաեւ այն, որ կեանքն առաջ է գնում, եւ նոր իրողութիւններ կան», - ասաց նա:

«ՐԱՖՖԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆՆ Է ԴԱՌՆԱԼՈՒ ԶԻՄՆԱԿԱՆ ՄՐՑԱԿԻՑԸ», - ՍՍԵՓԱՆ ՍԱՖԱՐԵԱՆ

«Ժառանգութեան» քաղաքական քարտուղար Ստեփան Սաֆարեանի գնահատմամբ՝ «Հայ ազգային կոնգրէսի» առաջնորդ Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ նախագահական ընտրութիւններում չառաջադրուելու մասին որոշումից յետոյ Րաֆֆի Յովհաննիսեանի շանսերն էլ աւելի են մեծանում, բայց, նաեւ որոշակի ռիսկեր են աւելանում: Tert.am-ի հետ զրոյցում նման կարծիք յայտնեց Սաֆարեանը՝ մանրամասնելով. «Քանի որ մի շարք քաղաքական ուժերի՝ եւ՝ ԲՀԿ-ի, եւ՝ Տէր-Պետրոսեանի, այսպէս ասեմ՝ ուղղակի կամ անուղղակի բոլորողական քայլերը միաժամանակ, մասնակցութեան առումով, ռիսկեր են ստեղծում, ինչը «Ժառանգութիւն» ու Րաֆֆի Յովհաննիսեանը եւ նրան սատարող այլ քաղաքական-հասարակական շրջանակները պէտք է լուծեն»:

կան գաղափարախօսութիւն կրող թեկնածուի առաջադրումը պարտադիր է, եւ որ «լիբերալ թեւը պէտք է մի տեղ հաւաքուի»:

«Իմ առաջադրման մէջ կայ նաեւ ամէն ինչ արագացնելու, որոշակիացնելու պահանջ», - ամբիոնից յայտարարեց նախկին վարչապետը. - «Ի տարբերութիւն հինգ տարի առաջուայ համաժողովրդական շարժման, որն իշխանափոխութեան շարժում էր, վերջապէս մենք փորձենք այդ նոյն շարժման մէջ գտնել գաղափարակից, տնտեսական, քաղաքական հայեացքներում մէկ ընդհանրութիւն ունեցող մարդկանց թիւմ, ազատական, լիբերալ արժէքների, բաց քաղաքականութեան, հրապարակային քաղաքականութեան կողմնակիցների»:

Միւս կողմից, Ս. Սաֆարեանն ասում է, որ այս պարագայում հենց

ՐԱՅԱՍԱՆՈՒՄ ՆԱԽԱԳԱՅԻ ՊԱՇՏՕՆԻ ԶԱՄԱՐ ԽԻՍՏ ՊԱՅՔԱՐ ԶԻ ԸՆԹԱՆԱՅ

Հայաստանի վերջին խորհրդարանական ընտրութիւնների արդիւնքներով, ընդդիմութիւնը նոյնպէս յայտնուել է խորհրդարանում, որով էլ պայմանաւորուած էր երկրի քաղաքական ուժերի մեծ մասի կողմից այդ ընտրութիւնների ճանաչումը: Այս մասին, նշեց Գլխաւորագրիչի եւ տարածաշրջանային համագործակցութեան վերլուծական կենտրոնի ղեկավար, քաղաքագէտ Ստեփան Գրիգորեանը: Նրա խօսքով, երբ ԲՀԿ-ն հրաժարուեց նախագահական ընտրութիւններում թեկնածու առաջադրել կամ պաշտպանել մէկ այլ թեկնածուի, պարզ դարձաւ, որ նախագահի պաշտօնի համար խիստ պաշար չի լինելու, նորմալ կերպով վերընտրուելու է գործող նախագահը, իսկ ընտրութիւնները տեղի կ'ունենան առանց մեծ խախտումների: «Թէեւ Հայաստանում ընտրութիւնները կը ճանաչուեն որպէս իրէպարական կազմակերպութեամբ, կը ծագի ժողովրդավարութեան ապահովման հարցը, որի հիմքում քաղաքական մրցակցութիւնն է», - ընդգծեց քաղաքագէտը: Նրա կարծիքով, ընտրութիւնների ժամանակ հասարակութեանը եւ գործող նախագահին մրցակցութիւն է անհրաժեշտ, որպէսզի Սերժ Սարգսեանը չստանայ 97 տոկոս ձայն: Ելնելով ողջ ժողովրդի շահերից, պէտք է որոշակի մրցակցութիւն ստեղծել:

ԼՈՒՐԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԵՏՔ Է ԾԿՈՒՆ ԼԻՆԻ ԵՄ-Ի ԵՒ ԵՒՐԱՍԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ՀԱՐՑՈՒՄ»

Քաղաքագետ Ալեքսանդր Մարկարովը կարծում է, որ Հայաստանը Եւրոպական Միութեան եւ Եւրասիական Միութեան հետ յարաբերութիւններում պէտք է հնարաւորինս ճկուն քաղաքականութիւն վարի եւ շահաւէտ տարբերակ գտնի:



Քաղաքագետ Ալեքսանդր Մարկարով

Ալեքսանդր Մարկարովը յիշեցրեց, որ վերջին 17 տարիների ընթացքում Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ կնքուել է 170 տարբեր պայմանագրեր ու յուշագրեր, որոնք վերաբերում են տարբեր ոլորտների:

«Վերջին երեք տարուայ ընթացքում եղել են ամենաբարձր մակարդակի հանդիպումները: Եղան երկու պետական այցեր նախագահների մակարդակով: Անվտանգութեան տեսանկյունից Հայաստանը բաւականին լուրջ տեղ է տալիս համագործակցութեանը Ռուսաստանի հետ», - ասաց նա:

Քաղաքագետը նաեւ նշեց, որ Հաւաքական անվտանգութեան պայմանագրի կազմակերպութեան համար Հայաստանը դարձել է յուսալի գործընկեր:

Հրազդանների հետ հանդիպմանը, պատասխանելով հարցին, թէ ի վերջոյ Հայաստանը, որ կառուցող պէտք է ընտրի՝ Եւրոպական Միութիւնը, թէ՞ Եւրասիական Միութիւնը, Ալեքսանդր Մարկարովն ասաց, որ Հայաստանը գիտակցում է տարածաշրջանային իրադրութիւնը եւ Եւրոպայի հետ մերձեցման կարեւորութիւնը:

«Բնականաբար, անհրաժեշտ է իրականացնել քաղաքականութիւն, որը կը լինի շահաւէտ Հայաստանի համար: Ծահաւէտ տարբերակ պէտք է գտնել: Հայաստանը ոչ թէ պէտք է լինի Եւրոպական Միութեան կամ Եւրասիական Միութեան հետ, այլ առաջին հերթին իր հետ», - ասաց նա:

Անդրադառնալով Ռուսաստանի հեղինակած Եւրասիական Միութեան գաղափարին՝ քաղաքագետը նշեց, որ Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ երկար տարիների ընթացքում ստեղծուած յարաբերութիւնները միայն հաստատուած են եւ հանդէս են գալիս որպէս կարեւորագոյն տարր ոչ միայն Հայաստանի, այլ նաեւ Ռուսաստանի համար:

ԱՆԿԱՐԱՅԻ «ԱՆԿՈՂՄՆԱԿԱԼՈՒԹԻՒՆԸ» ԸՍՏ ԵՐԵՒԱՆԻ

«Թուրքիայի համար անկողմնակալ լինելը նշանակում է ոչ թէ կարգաւորմանը սատարել, այլ աջակցել Ադրբեյջանի քայլերին՝ ուղղուած բանակցային գործընթացի ձախողմանը եւ համանախագահների ձեւաչափից ձերբազատուելուն», - յայտարարել է Հայաստանի արտգործնախարարութեան խօսնակ Տիգրան Բալաբեանը:

«Արմենպրես» լրատուական գործակալութեան խնդրանքով մեկնաբանելով Թուրքիայի ԱԳՆ-ի խօսնակի յայտարարութիւնը, թէ «ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահող երկրները պէտք է փոխուեն նրանց կողմնակալութեան պատճառով», Բալաբեանը, Հայաստանի արտգործնախարարութեան

մամուլի եւ տեղեկատուութեան վարչութեան փոխանցմամբ, նշել է նաեւ, որ «Թուրքիան քննադատում է անգամ իռլանդիային՝ պատճառաբանելով աշխարհագրորեն հեռու գտնուելը»:

«Անկողմնակալութիւնը ուղիղ համեմատական է աշխարհագրական հեռաւորութեանը, ինչի փայլուն ապացոյցն է հենց Թուրքիայի օրինակը: Թուրքիան առիթը չի բաց թողնում նորից եւ նորից ապացուցելու միջազգային հանրութեանը, որ իր որեւիցէ միջամտութիւնն այս հարցերում միայն վնաս է հասցնում», - ընդգծել է Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան խօսնակը:

ԵՒՐՈՍԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԱԽՁԳՈՒՇԱՑՆԷ

Շարունակուած էջ 1-էն

րին՝ երրորդ երկիրներու հետ, չի հակասէր Եւրոմիութեան հետ խորացուած ու համապարփակ ազատ առեւտուրի բանակցութիւններուն: Սակայն խնդիրը, ըստ Մայա Կոչիւեանի չի լուծուել, այստեղ կը վերաբերի առաւելապէս մաքսային միութիւններուն, - «Եթէ Հայաստանը որոշէ միանալ որեւէ մաքսային միութեան, ապա այդ անհամատեղելի կը դառնայ Եւրոմիութեան եւ Հայաստանի միջեւ կնքուելիք երկկողմանի խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի պայմանագրին հետ: Հարցը կը կայանայ հոն, որ Մաքսային միութիւնը ընդհանուր արտաքին առեւտրական քաղաքականութիւն ունի եւ անհատ երկրները, որոնք կ'անդամակցին այդ

մաքսային միութեան, այլեւս ինքնիշխան չեն իրենց արտաքին առեւտուրի քաղաքականութեան բնագաւառէն ներս»:

Ինչպէս յայտնած է խօսնակը, Եւրոմիութիւնը Հայաստանի հետ համագործակցութեան խորհուրդի նիստ ունեցած է մի քանի օր առաջ, որու ընթացքին Հայաստան հաստատած է իր հաւատարմութիւնը խոր եւ համապարփակ ազատ առեւտուրի շուրջ ընթացող բանակցութիւններուն կապակցութեամբ:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Ռուսաստանի եւ ԱՊՀ միւս երկիրներուն հետ մաքսային միութեան մէջ մտնելը կը հակասէ Եւրոմիութեան հետ ընթացող բանակցութիւններու շրջագիծէն ներս Հայաստանի պայմանաւորուածութիւններուն:

ԸՍՏ ՆԱԽԱՐԱՐԻ՝ ՇԱՏ ՄԻՐԻԱՅԱՅԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԻԶՆԵՍ ԿԸ ՍԿՍԵՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՅԵՏՈՅ

Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեանը կարծում է, որ նախագահական ընտրութիւններից յետոյ շատ սիրիահայեր կը սկսեն սեփական գործը նախաձեռնել Հայաստանում:

«Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում նախարարը ասաց, որ մինչ համեստ կարողութիւնների տէր սիրիահայերը սեփական գործն են բացում Հայաստանում, աւելի հարուստները սպասում են:

«Հաստատ համոզուած եմ, որ ընտրութիւններից յետոյ տասնեակ սիրիահայեր, մեծ գործարարներ կը դնեն իրենց գործը եւ իրենց շուրջ կը համախմբեն նախ եւ առաջ սիրիահայերին», - ասաց Յակոբեանը:

Նախարարը բացատրում է, թէ ինչու է սիրիահայերի գործ ձեռնարկելը կապում նախագահական ընտրութիւնների հետ. - «Էժառնութիւն, թանկացում, այս բոլորը նշանակութիւն է ունենում ընտրական համակարգի վրայ աշխարհում, ոչ միայն Հայաստանում: Միշտ տեղի են ունենում որոշակի փոփոխութիւններ, եւ ես այն կարծիքին եմ, որ այս ընթացքը մտածելու, խորհելու ընթացք է իրենց համար: Իւրաքանչիւր ընտրութիւն աւելի ամրապնդում, առաջ է մղում երկիրը եւ իրենք, կարծում եմ, ընտրութիւններից անմիջապէս յետոյ դնելու են իրենց գործը»:

Ամփոփելով նախարարութեան անցնող տարուայ գործունէութիւնը՝ նախարարը առանձնացրեց սիրիահայերին, որոնց հոսքն այս տարի Հայաստան կտրուկ աւելացաւ: Յակոբեանն անդրադարձաւ անցած շաբաթ Հայաստանի նախագահի հետ սիրիահայ գործարարների հանդիպմանը՝ նշելով, որ Սերժ Սարգսեանը յանձնարարականներ է տուել տարբեր գերատեսչութիւնների՝ աջակցել Հայաստանում սեփական գործ սկսող սիրիահայերին:

Հայաստանի կառավարութիւնը սիրիահայերի խնդիրների լուծման համար հաստատուած համապարփակ ծրագիր չունի: Յակոբեանն ասում է, որ թէեւ նման ծրագրի բացակայութեանը, անցած ամիսներին կառավարութիւնը կարողացել է ի մի բերել սիրիահայերի խնդիրներն ու մշա-



Սփիւռքի նախարար Հրանոյշ Յակոբեան

կել դրանց լուծման ուղիները: Կառավարութիւնը իր մի շարք որոշումներով արտօնութիւններ է ընձեռել սիրիահայերին Հայաստանի մուտքի վիզա, վարորդական իրաւունք ստանալու գործընթացներում, նրանց երեխաներին հնարաւորութիւն է ընձեռել անվճար մանկապարտէզ, դպրոց ու բուհ յաճախել, անվճար բուժօգնութիւն ստանալ:

Սակայն որոշ սիրիահայեր «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցներում իրենց դժգոհութիւնն են յայտնում՝ նշելով, որ Հայաստանի կառավարութիւնն աւելի շատ խօսում է, քան գործում:

Հայկապահայերից մէկն «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում «Չուարթնոց» օդանավակայանում պատմում էր, թէ ինչպէս են իրենից որդուն դպրոց տեղաւորելու համար մէկ բժշկական տեղեկանքի դիմաց 16 հազար դրամ վերցրել:

«Հրանոյշ Յակոբեանը ասում էր, որ ամէն բան ձրի է: Ներողութիւն, երբ տղաս դպրոց պիտի գնար, գնացինք բժշկական թուղթ ուղեցին, փող ուղեցին, ասացի՝ մեզ համար ձրի է, ասաց՝ թող Հրանոյշը տա ուրեմն: Ինձնից 16 հազար դրամ փող վերցրեցին այն դէպքում, երբ երեխան ոչ մի առողջական խնդիր չունէր», - պատմում է հայկապահայ տղամարդը, ում բողոքին են միանում նաեւ այլ սիրիահայեր՝ դժգոհելով Հայաստանի կառավարութիւնից:

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍԵԱՆ ՊԻՏԻ ՉՄԱՍՆԱԿՑԻ

Շարունակուած էջ 1-էն

մէջ դրան քչերը միայն կը հաւատան», - ըսած է Տէր-Պետրոսեան: Չառաջադրուելու որոշումէն համակիրներու դժգոհութիւններու եւ հակառակորդներու ուրախութեան մասին հարցին ի պատասխան՝ Լեւոն Տէր-Պետրոսեան վստահութիւն յայտնած է, որ որոշ ժամանակ յետոյ համակիրները իրեն կը հասկնան, որ իր որոշումը ճիշդ եւ ազնիւ էր: «Իսկ հակառակորդներին հրճուանքն ու մեծաբանութիւնն ինձ երբեք չեն հետաքրքրել: Չբացառենք նաեւ, որ բացի վերը նշուածից լինելու են

նաեւ իմ որոշումից գոհ ու շնորհակալ եղողներ: Չէ որ շատերի կարծիքով՝ իմ ներկայութեամբ ես ամայացրել եմ քաղաքական դաշտը, ինչի հետեւանքով է, որ Հայաստանում նոր լիդերներ չեն ծնուում», - ըսած է առաջին նախագահը՝ շարունակելով. - «Փոյթ չէ, թէ քաղաքականութիւնից իմ տասնամեայ բացակայութեան ընթացքում այդպիսի լիդերներ այդպէս էլ չծնուեցին, բացառութեամբ Ստեփան Դեմիրճեանի, ով 2003 թուականին յաղթեց Ռոբերտ Քոչարեանին: Այն ժամանակ չծնուեցին, գուցէ հիմա ծնուեն: Տա Աստուած»:



SYRIAN ARMENIAN RELIEF FUND

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P. O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianrelieffund.org

ԸՆՏՐԱԿԱՇԱՌՔ ԲԱԺԱՆՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԼՈՒԾԱՐՈՒԵՆ Քարգազոյ քաղաքագետ Անդրիաս Դուկասեանի հետ

-Պարոն Դուկասեան, օրերս «ՀՀ Նախագահի համար գործողութիւնների Օրագրի» բաց քննարկման նախաձեռնութեան մասին յայտարարութիւն տարածեցիք, առաջարկում էք քննարկել քաղաքացիական հասարակութեան լիրաժէք մասնակցութիւնը սահմանադրական կարգ ձեւաւորելու շուրջ: Ի՞նչ էք ակնկալում:

-Ամբողջ հասարակութիւնը գիտի, որ տարիներ շարունակ ընտրութիւններում յաղթում կամ զգալի արդիւնքի են հասնում ընտրակաշառք բաժանող կուսակցութիւնները: Դրա մասին բաց խօսում է բոլոր ամբիոններից: Ես գտնում եմ, որ Հայաստանը չի կարող ունենալ որեւէ առաջընթաց, մինչեւ այդ կուսակցութիւնները չլուծարուեն: Դա Հայաստանի համար հանգուցային նշանակութիւն ունեցող քաղաքական խնդիր է: Ուստի ակնկալում եմ, որ այդ հարցի քննարկումը ցոյց կը տայ հասարակութեան դիրքորոշումը յանցաւոր եւ անօրինական ճանապարհով պետական իշխանութեան մարմիններում պաշտօններ ձեռք բերող կուսակցութիւնների վերաբերեալ:

-Ո՞րն է կուսակցութիւնները լուծարելու մեխանիզմը, եւ այս օրերին հասարակութեան կողմից արդեօք առաջարկն արժանացել է Ձեր ակնկալած քննարկմանը:

-«ՀՀ Նախագահի համար գործողութիւնների Օրագրում» ես փորձել եմ հիմնաւորել այն քաղաքա-իրաւական գործողութիւնների շղթան, որն անհրաժեշտ է հակասահմանադրական կուսակցութիւնների լուծարման համար: Ըստ գործող սահմանադրութեան, այդ քայլերը կարող է նախաձեռնել միայն Հանրապետութեան նախագահը: Օրագրի քննարկման արդիւնքներն ամփոփելու եմ մինչեւ 2013 թ. Յունուարի 15-ը, որովհետեւ այդ օրը հասարակութեան համար յստակ կը դառնայ այն փաստը, որ նախկինում ընտրակաշառք բաժանող կուսակցութեան կողմից առաջադրուած նախագահի թեկնածուն ԿԸՅ-ում ստացել է գրանցում եւ իրաւունք է ձեռք բերել մասնակցել ընտրութիւններին: Այդ պահից կը գալ ժամանակ ոչ թէ քննարկումներ անելու, այլ գործողութիւնների անցնելու:

-Սեր նախորդ գրոյցին ասացիք, որ բոլոր ուժերը օլիգարխների վերահսկողութեան տակ են, ներառեալ ՀԱԿ-ը: ՀԱԿ-ի լիդերը Ունյայէն չառաջադրուել, ինչպէս ԲՀԿ-ինը: Կարծում էք օլիգարխները չթողցին: Այս պահին քաղաքական պատկերը ի՞նչ է յուշում, օլիգարխների՞, թէ, այնուամենայնիւ, մի քանի հոգու ձեռքին է երկիրը, որոնք էլ կանխորոշում են ընտրութիւնների սկիզբը, ընթացքը, արդիւնքները:

-Շատ պարզ պատկեր ունենք: Սերժ Սարգսեանը ընտրապայքարից հանեց բոլոր նրանց, ում համարել է մրցակից: Բոլորիս համար ակնյայտ է, որ Հայաստանում նախագահի ընտրութիւնները



չեն կարող լինել ազատ եւ արդար, եթէ այդ ընտրութիւններում մասնակցում է ՀՀԿ-ի թեկնածուն: Ուստի 2013 թ. Յունուարի 15-ին քաղաքացիական հասարակութիւնը պիտի ԿԸՅ-ին պահանջ ներկայացնի անվաւեր ճանաչել Սերժ Սարգսեանի գրանցումը: Մենք կ'ունենանք ազատ ընտրութիւններ միայն այն դէպքում, եթէ հասարակութեանը յաջողի մինչեւ քուէարկութեան օրը հարկադրել Սերժ Սարգսեանին հանել իր թեկնածուութիւնը:

-Իսկ քաղաքացիական հասարակութիւնը ուզո՞ւմ է նման պահանջով հանդէս գալ, նկատի առնելով, որ քաղաքացիական հասարակութիւնն էլ բազմաշերտ է: Միւս կողմից, Սերժ Սարգսեանը ՀՀԿ համագումարում իր ելոյթում հենց քաղաքացիական հասարակութեան դերը կարեւորեց պետութեան կայացման մէջ:

-«ՀՀ Նախագահի համար գործողութիւնների Օրագրի» քննարկումը ցոյց կը տայ՝ ինչքանով է պատրաստ քաղաքացիական հասարակութիւնը արգելել հակասահմանադրական կուսակցութիւնների թեկնածուներին մասնակցել ՀՀ Նախագահի ընտրութիւններին եւ պահանջել այդ կուսակցութիւններին լուծարումը:

-Պարոն Դուկասեան, ըստ Ձեզ, ինչպէ՞ս պէտք է հասնել հասարակութեան վստահութեան վերականգնմանը, որովհետեւ գիտեմք՝ կայ վստահութեան դեֆիցիտ, հիասթափութիւն եւ այլն:

-Որպէսզի վերականգնուի հասարակութեան վստահութիւնը պետութեան հանդէպ, անհրաժեշտ է քաղաքացիներին սկսել ընդգրկել պետութեան կառավարման գործում: Իմ կարծիքը՝ թէ ինչպէս կարելի է դա անել, ես չարադրել եմ Օրագրում, որի հետ իւրաքանչիւրը կարող է ծանօթանալ www.andrias.am կայքում:

Ինչ վերաբերում է հասարակութեան վստահութեանը քաղաքական գործիչների նկատմամբ, ապա ինձ համար յստակ է, որ այսօր Հայաստանում ըստ էութեան գրոյցից ստեղծուող ընդդիմադիր դաշտում յաջողութեան կարող է հասնել այն մարդը, ով կոմպետենտ է պետութեան կառավարման հարցերում, ունի խորին համոզմունքներ, բաց է հասարակութեան համար եւ անկեղծ է:

ԵՐՈՒՍԱԴԵՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԲՈՒԹԵԱՆ ՏԵՂԱՊԱՅ ԳԵՐՇ. Տ. ԱՐԻՍ ԱՐՔ. ՇԻՐԿԱՆԵԱՆԻ ԱՅՑԸ «ՄԱՍԻՍ»-Ի ԽՄԲԱՐԱՏՈՒՆ



Անցնող շաբթուան ընթացքին հիւրաբար Գալիֆորնիա կը գտնուէր Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան տեղապահ՝ Գերշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան: Ան կիրակի Դեկտեմբեր 16ին, 2012, Սան Ֆրանսիսքոյի մէջ պատարագեց եւ ապա այցելեց Ֆրեզնօ: Չորեքշաբթի Դեկտեմբերի 19ին, Գերշ. Արիս Արք. Փաստինայի մէջ հանդիպեցաւ «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութեան, ընկերակցութեամբ Պրն. Կարօ Այալթունի:

Վերոյիշեալ հանդիպման ներկայ էին «Մասիս» շաբաթաթերթի գլխաւոր խմբագիր Տօքթ. Արշակ Գազանճեան, ինչպէս նաեւ Գաբրիէլ Մոյոյեան եւ Վահէ Աջապահեան:

Շուրջ մէկ ժամ տեւող այս տեսակցութեան ընթացքին՝ Արիս Սրբազան շահեկան տեղեկութիւններ տուաւ սաղիմահայ կեանքի մասին: Իմացանք թէ նոր պատրիարքի ընտրութիւնը տեղի պիտի ունենայ Յունուարի 23ին կայանալիք միաբանական ընդհանուր ժողովի ընթացքին: Նախ պիտի ընտրուի թեկնածուներու հնգանուն ցանկ մը: Իսկ յաջորդ օրը՝ այդ ցանկէն նոր պատրիարքի ընտրութիւնը:

Գալով նորընտիր պատրիարքի պետական ճանաչումի հարցին՝ այդ մէկը պիտի հաստատուի երեք պետութիւններու կողմէ, Յորդանանի, Պաղեստինի եւ Իսրայէլի:

Երուսաղէմի Ս. Յակոբայ վանքի ժառանգաւորաց վարժարանի աշակերտութեան մասին խօսելով, Արիս Սրբազան յայտնեց, թէ ներկայիս հոգեւոր պատրաստութեան համար կը սորվին 45 աշակերտներ:

Պատրիարքարանի տնտեսական եւ կալուածական հարցերու մասին անդրադառնալով, Արիս Սրբազանը յայտնեց թէ վանքն առ այժմ տնտեսապէս ինքնաբաւ վիճակի մէջ է, իսկ կալուածներու վերահսկողութիւնն ալ ապահով ձեռքերու մէջ կը գտնուին: Այդ գործերով զբաղուող Պատրիարքարանի վերահսկողութեան ենթակայ տնտեսական յատուկ յանձնաժողովներ եւ մասնագէտներ կան, որոնք աշախույժ կերպով կը հետեւին ընդհանուր գործընթացին:

Նոր պատրիարքի ընտրութեան իր թեկնածութեան մասին երբ հարց տուինք՝ տեղապահ Արիս Սրբազանն ըսաւ թէ «Ատրկա միաբանութեան գիտնալիք հարցն է»:

ՍԻՐԻԱՅԱՅ ԵՐԵՒԱՆԵՐԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԵՆ ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԱՄԱՆՈՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻՆ

Լոս Անճելոսի «Ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաների Սուրբ Ծննդի» հայ-ամերիկեան բարեգործական հիմնադրամի նախաձեռնութեամբ տօնական Ամանորի միջոցառումների շարք կը մեկնարկի 2013 թուականի Յունուարի 3-ին Արամ Խաչատրեան մեծ համերգասրահում:

Ինչպէս «Արմենպրես»-ին տեղեկացրեց «Հայաստանի Ֆիլհարմոնիկ կենտրոնի» եւ տնօրէն Լաերտ Մովսէսեանը, Յովհաննէս Պալաջեանի ղեկավարած բարեգործական հիմնադրամը հայ հաշմանդամ եւ ծնողագուրկ երեխաների համար նման միջոցառում իրականացնում է արդէն 13-րդ անգամ: «Կայանալիք միջոցառմանը կը մասնակցի շուրջ տասը հազար երեխայ հանրապետութեան մի շարք մանկատներից եւ այլ հաստատութիւններից», - ասաց Մովսէսեանը:

«Շուրջ 1500 սիրիահայ երեխաներ կը մասնակցեն հիմնադրամի տօնական հանդէպներին», - ընդգծեց կենտրոնի տնօրէնը: Նա նաեւ տեղեկացրեց, որ առաջիկայում «Ծնողագուրկ եւ հաշմանդամ երեխաների Սուրբ Ծննդի» բարեգործական հիմնադրամի նախաձեռնութեամբ՝ երեխաների համար նման ձեւաչափով տօնական միջոցառումներ կ'անցկացուեն նաեւ Լեռնային Ղարաբաղում, մասնաւորապէս՝ Շուշիում եւ Քոլատակ գիւղում: Միջոցառումների շարք կ'ընդգրկի դերասանների, խաղավարների, կրկեսային դերասանների մասնակցութեամբ տօնական հանդէպներ:

Հիմնադրամի նախաձեռնած թուով 13 միջոցառումներին մասնակցել են յատուկ կարգավիճակ ունեցող շուրջ 160 հազար հայ մանուկներ:

www.massispost.com
daily news updateds

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱԿԱՍԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

ՀՈԳՈՒՄ ԾԻՉԸ. «ՄՆԱՑԷՔ ԱՅՍՏԵՂ, ՄԵՉ ՀԵՏ ԿՐԷՔ ԱԶԳԱՅԻՆ ՀՈԳՍԵՐԸ»

Առանց հայրենիքի, առանց հարազատ հողի հետ սերտ կապի, մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին...

ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐԵԱՆ

ՌՈՐԵՐՏ ԴԱԻԹԵԱՆ

Մամուլում եւ հեռուստատեսա- լին հաղորդումներում յաճախ լսում եմ իշխանաւորների, երկրի ղեկա- վարների ելույթներ, մեկնաբանու- թիւններ, որոնցում արդարացում է հայերի Հայաստանից հեռանալու եւ օտար երկրներում գոյութիւն պահպանելու փաստը:

Միայն չէ՛ք չեմ լինի, եթէ ասեմ, որ այդ մարդիկ անտեսում են ազգային հոգեւոր գաղափար- ներն ու մեր գանձերը սրբազան: Յիշէ՛ք, որ երկրում էլ լինէ՛ք, կյանքն ակնթարթ է:

Մի հեռացէ՛ք հայոց սուրբ հողից: Չէ՛ որ այն Ձերն է, ձեր պապերի ու ժառանգների միջոցով է երկիր դարձել: Մի թողէ՛ք ձեր երկիրն ուրիշներին, մի հաւատա- ցէ՛ք քաղաքական կեղծ ու արհես- տական կուսակցութիւնների խար- դախութիւններին: Մնացէ՛ք ձեր հայրենիքում, տէր կանգնէ՛ք ձեր պապերի արիւնով ստեղծուած երկ- րին ու հողին: Պայքարէ՛ք արդա- րութեան, ազնուութեան եւ ձեր իրաւունքների համար: Մի խուսա- փէ՛ք հերոսական քայլերից: Այս դառը իրականութեան մէջ փորձէ՛ք պայքարել ճշմարտութեան եւ սկզբունքայնութեան համար:

Յիսուս տարի շարունակ եղել եմ Հայաստանի գրեթէ բոլոր քա- ղաքներում ու գիւղերում, հանդի- պել ու գրուցել տարբեր մասնագի- տութիւնների տէր հազարաւոր մարդկանց հետ, գրել հազարաւոր յօդուածներ նրանց հայրենասիրա- կան գործունէութեան եւ մարդկա- լին արժանիքների մասին: Որպէս լրագրող այսօր եւս չեմ դադարել նոյն գործը շարունակելուց: Բայց սիրտս թախծով է լցւում, երբ հանդիպում եմ կեանքից դժգոհ, սեփական հողատարածքից յոգնած, անիմաստ կեանքով ապրող, ան- գործունեաց մարդկանց: Ցաւ եմ ապրում յատկապէս տաղանդաւոր մարդկանց, երիտասարդ մասնա- ղէտների՝ «երկնային դրախտ» որո- նողների համար:

Աշխարհի տարբեր քաղաքնե- րում Հայաստանի կրթութեան եւ գիտութեան դիպլոմները գրպա- նում հայ մարդն աղերսներով աշ- խատանք գտնելու է գնում: Մաս- նագէտը համաձայն է աշխատել մատուցող, հաւաքարար, փողոց մաքրող, միայն թէ աշխատանք

ունենայ: Նման սահմակեցուցիչ դէպ- քերի եմ հանդիպել աշխարհի տար- բեր քաղաքներում: Նայել եմ հայի թախծոտ աչքերին ու հեռացել:

Մեր ճակատագիրը շատ ծանր է, մեր մէջքը խորտակեց եւ երկրէ երկիր ընկանք: Ժամանակն է, որ խորհենք, իրար հասկանանք: Արա- գիլները չուեղուց առաջ կանգնում են նոյնիսկ մէկ ոտքի վրայ, նայում իրենց կառուցած բնին ու նոր հեռանում, թռչում են՝ չքանդելով իրենց կառուցածը՝ օրերից մի օր այն պէտք է գալու:

Փորձենք ամրանալ հողին, պայ- քարենք խաղաղութեամբ, պատ- ժենք չարերին: Դուք հայրենիքին էք պէտք, գաղթաշխարհը ձերը չէ: Մի լքէ՛ք երկրի արեւը, հողը, ջուրը, օդը, ձեր անցեալն ու ներ- կան: Դուք էք երկրի տէրը, պայքա- րէ՛ք ձեր իրաւունքների համար: Հայրենիքը ձեզ տուել է լեզու, գեղեցկութիւն, ճշմարտութիւն, ցա- նուցիւր մի դարձրէ՛ք այն:

Յոգնած ու մաշուած գրիչս փորձում է սիրալիք տօնով մեղմել ումանց գայլային ախորժակը, շա- տերի լկտի գործելակերպը:

Հայ գիւղացուն մնաց տառա- պալից մի կեանք, որ նորից հնչեց- նի թունամանեանի տողերը.

«Դարձել է ախպեր, աշխարհը առ ու փախ, Սէրը դարձել սուր ու ջուրը՝ արիւն,

Ոչ ամօթ ունի ուժեղը, ոչ ահ, Վայր եկել է, տարել տկարին...»

Ամօթն ու ահը կորցնելու չափն անչափելի է դարձել, չափը կորել է, չափելու տեղ չի մնացել:

Հայաստանից հեռանալու բազ- մաթիւ պատճառներից մէկն էլ այն է, որ մարդիկ իրենց ապրելու եւ կենսագործունէութեան պայման- ները բարելաւելու նպատակով ստիպուած թողնում հեռանում են հայրենիքից, որպէսզի ոչ միայն իրենք գոյատեւեն, այլ եւ օտար երկրներում մեծ դժուարութիւն- ներով ձեռք բերուած վաստակի մասն ուղարկեն հայրենիք՝ պահ- պանելու ընտանիքի միւս անդամ- ների գոյութիւնը, ինչպէս նաեւ, եթէ հնարաւոր է, հայրենիքից հե- ու պայմաններ ստեղծելն իրենց մօտ տեղափոխելու հարազատե- րին: Այլ խօսքով, մարդկանց հայ- րենիքից հեռացումը հիմնականում կապուած է աշխատանքի եւ կեանքի լաւագոյն պայմանների որոն-

ման հետ: Աշխատանքի որոնման ար- դիւնքում տեղի են ունենում անվե- րադարձելի եւ անօրինական բազ- մաթիւ երեւոյթներ, որտեղ տու- ժում է ոչ միայն անհատը, այլեւ ազգը: Հեռացողների թիւը շարու- նակ մեծանում է:

Հոգեբանական կորուստն աւելի մեծ է, քան տնտեսական շահը: Հայաստանում հասարակութիւնը ծերանում է, բնակչութեան թուա- քանակը նուազում է:

Այսպէս, խախտում է պետու- թեան կառուցուածքային հիմքը, բնակչութեան ծնելիութեան աճը նուազում է: Ազգային անկումներ են գրանցում այլ ոլորտներում:

Նախկին խորհրդային կար- գերի դուներն ու պատուհանները բացուեցին, որի հետեւանքով էլ փոխուեց մարդկանց վարքագիծը, ձեւաւորուեց սոցիալական, տնտե- սական ծանր եւ անվերջանալի շրջան: Մարդկանց մէջ առաջա- ցաւ լարուածութիւն:

Մարդիկ չեն գնահատում իրենց ընդունակութիւնների եւ կատարած աշխատանքի համար եւ վերաւորուած հեռանում են հայրե- նիքից: Անձը հեռանում է հայրենի հողից՝ մոռանալով իր անցեալն ու հայրենիքի սէրը: Հեռանալով երկ- րից, մարդիկ կորցնում են իրենց կեանքի ողջ ձեռքբերածը, ընտա- նիքի վարքագիծը:

Հայաստանում տեղի ունեցող եկամուտների բաշխման խիստ ան- հասարակութիւնը, մարդկանց հասցնում է գրկանքի, որն էլ դառ- նում է հեռացման պատճառ: Հայե- րը դարձել են շարժունակ բնակ- չութիւն:

Գաղթական դառնալու վարքը հայերն աւելի շատ ձեռք բերեցին վերջին քսան տարիների իշխա- նութիւնների գործունէութեան հե- տեւանքով: Եւ այսպէս շարունակ ընդարձակում են կապերն արտա- սահմանում ապրող ազգականների հետ եւ ստիպուած գաղթում են:

Հայաստանից արտագաղթում են ոչ միայն բանուորներն ու արհեստաւորները, այլեւ բարձր որակաւորում ունեցող մասնագէտ- ները: Դա պայմանաւորուած է այն հանգամանքով, որ բարձր որակա- ւորում ունեցող մասնագէտներն ար- տասահմանում աշխատանքի են անցնում առաւել շահաւէտ պայ- մաններով:

Բազմաթիւ մարդիկ արտա-

գաղթում են՝ ելնելով նիւթական շահից: Իւրաքանչիւր արտագաղ- թող ունի իրեն բնորոշ շարժառի- թը եւ սեփական փորձը: Մարդիկ, ի հարկէ, ցանկանում են խուսափել աղքատութիւնից, բայց ոչ բոլոր աղքատներն են արտագաղթում: Այս հարցի վերաբերեալ մօտե- ցումները երկուսն է՝ անհատական եւ կառուցուածքային: Անհատա- կան մօտեցումը դիտում է որպէս իւրաքանչիւր էակի բնական խնդիր: Միւս մասը (ով հնարաւորութիւն ունի) ձգտում է այն տարբերակին, որի դէպքում առաջարկում են ամենաբարձր աշխատավարձը եւ աշխատանքի լաւագոյն պայման- ները: Դա ընդունում է որպէս «մարդկային կապիտալի» նկատ- մամբ մօտեցում:

Այսպէս, ինչպէս կապիտալը տառապում է աշխարհով ներդր- ուելու լաւագոյն տարբերակի փնտրտուքով, այնպէս էլ բարձր մասնագիտացում ունեցող անհատ- ներն էլ ձգտում են այնտեղ, որտեղ հնարաւոր է ստանալ բաւարար եկամուտ՝ օգտուելով «մարդկային կապիտալից»:

Սոցիալ-տնտեսական իրավի- ճակն առաջին հերթին առաջաց- նում է «ուղեղների արտահոսք»:

Երկիրը կորցնում է կրթուած եւ որակաւորում ունեցող աշխատող- ներին, ինչը տանում է երկրի ներուժի թուլացմանը:

Հայաստանը կորցնում է աշ- խատունակ տարիքում գտնուող մարդկանց մի մասը, կորցնում է այն միջոցները, որոնք ծախսուել են աշխատունակ մարդկանց կրթու- թեան եւ մասնագիտական պատ- րաստման վրայ:

Այն մասնագէտները, ովքեր դուրս են գալիս երկրից, խիստ անհրաժեշտ են ազգային տնտեսու- թեան տարբեր ոլորտների զար- գացման համար:

Մնացէ՛ք Հայաստանում, փոր- ձէ՛ք գտնել ձեր իրաւունքներն ու ձայնի արժէքը: Յիշէ՛ք, որ ձեր հեռանալով կործանում էք մնացող- ների եւ ողջ ազգի գոյութեան հեռանկարը: Դուք հեռանում էք երկրից եւ մնացողների վրայ բար- դում երկրի ամբողջ պարտքը: Դատարկում են գիւղերը լեռ- նային, դատարկում են կարիքից: Յոյս ու հաւատ չմնաց, կործանում են ապագայի վառ յոյսերը: Մնացէ՛ք այստեղ, մեզ հետ կրէ՛ք ազգային հոգեւորը:

Ձեր Ծանուցումները Վստահեցէ՛ք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

Bedros S. Maronian 818/500-9585
Siamanto B. Maronian 818/269-0909
SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048
805 East Broadway Glendale, CA 91205
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101
• Life Insurance • Estate Planning • Workman's Compensation
• Health Insurance • Will & Living Trust • Employee Benefits
• Group & Individual • Full Annual Review • Annuity
• Long Term Care • Mortgage Protection • IRA
• Disability • College Planning • 401K & 403B
NEW YORK LIFE Anthem BlueShield Aetna Health Net A Better Decision CIGNA KAISER PERMANENTE
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits
Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է
Coverage & Protection should be on the top of your priority list.



ՀԱՅԱՏԵԱՑՈՒԹԻՒՆԸ ԴԱՐՁԵՐ Է «ԹՐՔԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹԵԱՆ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԲԱՂԱԴՐԻՉ»

ԳԻՈՐԳ ՄՍԱՄՊՈԼՅԱՆ

«Հայատեացու թիւերը երկար տարիներու ընթացքին դարձեր է թրքական ինքնութեան անբաժան եւ առանցքային բաղադրիչներէն մէկը, թէ՛ պետական մակարդակով, թէ՛ հանրային շրջանակներու մէջ», - կը պնդեն Իսթանպուլի մէջ գործող Սոցիալական եւ տնտեսական հետազոտութիւններու հիմնադրամի՝ TESEV-ի մասնագէտները:

«Լսելով Թուրքիոյ հայերը», - այսպէս կը կոչուի հիմնադրամի պատրաստած 130 էջոց գեկոյցը, որ թերեւս առաջին փորձն է վերջին մի քանի տարիներու ընթացքին՝ ի մի բերելու եւ հասկնալու այն բոլոր խնդիրները, որ ծառայեցին Թուրքիոյ հայազգի քաղաքացիներու առջեւ:

Զեկոյցը պատրաստուած է թրքահայ համայնքի մօտ երկու տասնեակ ներկայացուցիչներու հետ կատարուած հարցազրոյցներու հիման վրայ: Անոնք ոչ միայն հայաշատ Իսթանպուլն են, այլեւ Արեւելեան Անատոլիայէն եւ Կիլիկիոյ միակ հայկական գիւղէն՝ Վաքըֆ-ըլէն:

«Թուրքերու մէկ զգալի մասը մեզ չի կրնար իրենց հաւասար համարել՝ ընդունելով հայերը միայն որպէս փոքրամասնութիւն», - նշեր է հարցուածներէն մէկը:

Զեկոյցի հեղինակները կ'արձանագրեն, որ հայերու նկատմամբ խտրականութեան հիմքը՝ ոչ միայն պատմական անցեալն է, այլեւ կրօնական տարբերութիւնները: Այս պարագային, ըստ TESEV-ի վերլուծաբաններուն, հայերուն չօգնեց անգամ կրօնափոխութիւնը: Իսլամ ընդունած հայկական ընտանքիներէն մէկուն անդամները գեկոյցի հեղինակներուն պատմեր են. - «Անգամ կրօնափոխութենէն չետոյց (թուրքերը) թոյլ չեն տար մեզի մոռնալ մեր հայկական ծագման մասին: Ողջ կեանքիդ ընթացքին, քեզ անընդհատ կը ռմբահարեն, ըսելով՝ «կրօնափոխ եղիր, եւ կեանքդ աւելի դիւրին կը դառնայ», դուն ի վերջոյ կ'երթաս այդ քայլին, սակայն որեւէ բան չի փոխուիր. Քեզ կը սկսին անուանել ձփռոց, այսինքն՝ կրօնափոխ եղած»:

Զեկոյցի հեղինակները նաեւ կը նկատեն, - «Թուրքերու շրջանին մէջ կայացած հարցազրոյցի մը համաձայն՝ երկրի բնակիչներու 30 տոկոսը համոզուած է, որ հայերը Թուրքիոյ մէջ յայտնուել են խորհրդակցի Միութեան փլուզումէն յետոյ միայն, եւս 30 տոկոսն ալ ընդհանրապէս գաղափար չունի, թէ հայերն ինչպէս են դարձեր Թուրքիոյ բնակիչներ: Եթէ հաշուի առնենք, որ Անատոլիայի մէջ, հայկական ներկայութիւնը առնուազն մ.թ.ա. 6-րդ դարուն է սկիզբ առեր, ապա այդ 60 տոկոսի անտեղեակութեան պատճառներն աւելի հասկնալի կը դառնայ»:

Սոցիալական եւ տնտեսական հետազոտութիւններու թրքական հիմնադրամի մասնագէտները նաեւ կ'արձանագրեն, որ թրքական պետական համակարգը ամէն ինչ

կ'ընէ հայերու մոտքը կառավարական կառույցներ կանխելու համար: Յայտնի են դէպքեր, երբ հայ ուսանողներու քննական գնահատականները արհեստականօրէն իջեցուցն են՝ զիրենք պետական թափուր պաշտօններու համար կայացող մրցութիւններէն հեռու պահելու համար:

Այս բոլոր քայլերը, ի վերջոյ, հայերու մօտ պաշտպանական հակազդեցութիւն առաջ կը բերեն:

«Թրքահայութեան մօտ առաւել զգալի եւ մեծ տարածում գտած քայլերէն մէկը հանրային շփումներու ընթացքին ի ծնէ տրուած հայկական անուան փոխարէն, թրքական անունով ներկայանալն է: Շատերն իրենց երեխաներու անուանակոչութեան ժամանակ կ'առաջնորդուին մէկ սկզբունքով, որ տուեալ անունը առկայ ըլլայ թէ՛ թրքական եւ թէ՛ հայկական մշակութիւններուն մէջ», - կը գրեն հիմնադրամի մասնագէտները:

Ընդհանուր առմամբ, TESEV-ի վերլուծաբաններու համոզմամբ, հայկական ծագմամբ Թուրքիոյ մէջ ապրիլը լի է ամենօրեայ հակասութիւններով:

«Մենք միաժամանակ պէտք է ապացուցենք, որ մեզ կոտորեր են, զուգահեռաբար ապացուցելով, որ դեռ ողջ ենք», - նշեր է հարցուած թրքահայերէն մէկը:

Զեկոյցի հեղինակները հանդէս կու գան նաեւ յստակ խորհուրդներով՝ նշելով քայլերու շարք մը, որոնք հնարաւորութիւն կու տան գոնէ փոքր-ինչ մեղմելու փոքրամասնութիւններու վիճակը:

«Հայերու եւ միւս փոքրամասնութիւններու դէմ կիրառուող խտրականութեան հիմնական աղբիւրը երկրի Սահմանադրութիւնն է, ուստի նորացուած հիմնական օրէնքը պէտք է յստակ դրոյթներ սահմանէ, որոնք թոյլ կու տան մշակութային տարբեր խումբերուն գոյատեւել երկրի տարածքին, - կը նշեն TESEV-ի մասնագէտները: Բացի ատկէ, իրենց կարծիքով, դատական համակարգը պէտք է սահմանափակուի բացառապէս «թրքական ինքնութեան ոտնահարման» յօդուածներով քրէական գործեր չարուցելով. - «Հարկաւոր է պատժել նաեւ այլ ինքնութիւններու դէմ ուղղուած ելոյթներու համար»:

Միւս քայլը, որ կրնայ օգնել փոքրամասնութիւններու խնդիրներու լուծման, թրքական խորհրդարանէն ներս, կրօնական փոքրամասնութիւններու, մասնաւորաբար՝ հայերու, ներկայացուցիչներու ընդգրկումն է: TESEV-ի մասնագէտները, սակայն, կ'արձանագրեն, որ թրքահայ համայնքին մէջ, այս խնդրին շուրջ որոշակի տարածայնութիւններ են առկայ. - «Թրքահայերու մէկ մասը կը կարծէ, որ հայ պատգամաւորը միայնակ ի վիճակի չըլլար որեւէ խնդիր լուծելու: Ոմանք ալ, ընդհակառակը, կը նշեն, որ ատիկա իւրատեսակ խորհրդանշական քայլ կ'ըլլայ՝ ցոյց տալով, որ փոքրամասնութիւնները, մասնաւորաբար՝ հայերը, թրքական հանրութեան օրինական մասնիկն են»:

ՄՍԱՄՊՈՒԼՈՒՍ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ «ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՐԹԸ 105 ՏԱՐԵԿԱՆ Է



1908 թ. ի վեր «Ժամանակ» թերթն աշխարհում փոքրամասնութեան ամենահին թերթ տիրողով շարունակում է հրատարակուել:

1908 թ. Հոկտեմբերի 28-ին Ստամպուլում հիմնուած թերթը 105 տարի շարունակ՝ առանց դադարի, շարունակում է լոյս տեսնել: Մեկդարեայ պատմութիւն ունեցող թերթը Թուրքիայում կրում է ամենահին փոքրամասնական թերթ տիրողը:

Այս պահին Միսաք - Սարգիս Գոչունեան եղբայրների հիմնած թերթը գլխաւորում են ընտանիքի չորրորդ սերնդի թոռները: Ֆերիթյոյի իրենց գրասենեակում լոյս տեսնող «Ժամանակ» թերթը 10 հոգուց բաղկացած անձնակազմով անդրադառնում է այնպիսի բազմազան թեմաների, ինչպիսիք են քաղաքականութիւնն ու արուեստը, կրօնական կեանքն ու տնտեսութիւնը, սպորտը:

Կարմիր տարբերանշանով 4 էջից բաղկացած սեւ ու սպիտակ թերթը ընթերցողի հետ հանդիպում է շաբաթական վեց օր: 2000 օրինակով լոյս տեսնող թերթը Ստամպուլում 6-7 հոգի բաժանում են հայ քաղաքացիների տներին եւ աշխատավայրերին: Թերթը, որը կարելի է ձեռք բերել որոշակի կէտերից, վաճառու է Շիշլիի, Քաղաքյոյի, Բեշիքթաշի, Բաքըրքոյի, ամուսն էլ՝ կղզիների կրպակներում: Ուղարկում է նաեւ արտերկիր:

«Ժամանակ» թերթի գլխաւոր խմբագիր Արա Գոչունեանը «Անադոլու» լրատուական գործակալութեան թղթակցի հետ զրոյցի ժամանակ նշեց, որ ստեղծման առաջին տարիներին մօտ 15 հազար ընթերցող ունեցող թերթը բաժանուել է Պալքաններից մինչ կովկաս, հարաւում մինչեւ Եգիպտոս ձգուող ընդարձակ աշխարհազրական շրջանում: Մինչեւ 1950-ական թթ. Եգիպտոսում լուրջ թուով բաժանորդագիր է ունեցել: Գոչունեանը նշեց, «Այդ ժամանակուայ հարցդակցութեան պայմաններում Սեւ ծով գնացող նաւը ճանապարհ էր ընկնում՝ առանց վերցնելու «Ժամանակի» տպագրութիւնը»:

Գոչունեանը շեշտեց, որ թերթը ստեղծման սկզբնական շրջանում փոքրամասնութեան թերթ չի եղել, սակայն հանրապետութեան հիմնադրումից յետոյ, Լոզանի պայմանագրի շրջանակում, դարձել է փոքրամասնութեան թերթ:

«Թուրք-հայկական յարաբերութիւններում մշտապէս դրական կողմերն ենք տեսնում»:

Գոչունեանը յայտնելով, որ «Ժամանակը» թրքական մամուլի մի մասն է կազմում, 105-ամեայ թերթի առաքելութեան մասին ասաց հետեւեալը. «Մեր թերթի կիրակէտում Թուրքիայի հայ համայնքի կեանքի արտացոլումն է: Ըստ էութեան, թերթի գոյութեան պատճառն էլ հենց այդ է: Փորձում

ենք անդրադառնալ ցանկացած թեմայի՝ սկսած համայնքի առօրեայ միջոցառումներից, համայնքային խնդիրներից մինչեւ համայնքի իրաւունքներ, կրթական համակարգ, հոգեւոր արարողութիւններ: Քանի որ Հայկական հարցն օրակարգում մնալուն տեղ է զբաղեցնում, այս իրավիճակը միեւնոյն ժամանակ անմիջականօրէն ազդում է նաեւ «Ժամանակի» գործունէութեան վրայ: Ինքնաբերաբար թերթի դիրքորոշումը, գրածը ընկալում է որպէս համայնքի ձայն: Բացի այդ, այս թեմայով թրքական եւ հայկական մամուլի միջեւ կարեւոր գործառնոյթ է կատարում: «Ժամանակ» թերթը թրքական մամուլի աւանդութիւնների ձեւաւորման մէջ կարեւոր բաժին ունի: Միեւնոյն ժամանակ



Թուրքիայում առանց ընդհատումների տպագրութիւնը խորհրդանշական նշանակութիւն ունի: Կարծում ենք, որ «Ժամանակ» թերթն անգամ թուրք-հայկական յարաբերութիւնների ամենավատ ժամանակ անգամ դրական կողմի վերաբերեալ ազդանշան, խորհրդանիշ է եղել»:

Ըստ Գոչունեանի՝ «Ժամանակ» թերթի ինտերնետային կայքն ու շաբեկ է, սակայն տեխնիկական աշխատանքներն աւարտելուց յետոյ մօտ ապագայում թերթը հասանելի կը լինի նաեւ համացանցում, ինչն էլ աւելի շատ ընթերցող կապահովի:

Արա Գոչունեանը նշելով, որ «Ժամանակ» թերթն արեւմտահայերէն է, յայտնեց՝ հայկական համայնքի միջոցառումներին անձամբ հետեւում են որպէս թղթակից եւ ֆոտոթղթակից, իսկ միւս լուրերը լրատուական գործակալութիւնների եւ համացանցի միջոցով են հաւաքում:

Ծախսերը հայ համայնքն է հոգում:

Գաչունեանը նշեց, որ այժմեական թեմաներն ընթերցողները վայրկենական իմաստում են հեռուստատեսութիւնից եւ համացանցից. «Մեր ընթերցողների համար ընտրում ենք թեմաները եւ այդպէս փորձում ցոյց տալ «Ժամանակի» տարբերութիւնը»:

Գոչունեանն ասաց, որ թերթի եկամուտներն ամբողջութեամբ ստանում են Թուրքիայի հայ հա-

«ՀՈՂԵՐՈՒ ԿԱՆՉԸ»

Ճամբորդական տպաւորութիւններ Դոկտ. Մինաս Գոճայեանի

Մեր պաշտօնակից «Նոր Օր» շաբաթաթերթի խմբագրութեան անդամ, անցնող տարեշրջանին այցելած էր մեր պատմական Հայաստանի յուշարձանները: Այս առթիւ ան վերջերս Կլենտոնի Հանրային գրադարանին մէջ իր տպաւորութիւններն ու խոհերը ներկայացուց հոն հաւաքուած խոսնակները:



Սոյն միջոցառումը կազմակերպուած էր ՌԱԿ-ի Հայ Իրաւանց Խորհուրդի կողմէ, «Նոր Օր» շաբաթաթերթի 90-ամեակի միջոցառումներու ծրագրէն ներս:

Օրուան հանդիսավար Հրայր Սեբեթեանի բացման խօսքէն ետք, ելոյթ ունեցաւ Հայ Իրաւանց Խորհուրդի ատենապետ՝ Տօքթ. Ռաֆֆի Պալեան: Ան շեշտեց նման նախաձեռնութեանց կարեւորութիւնը մեր նորահաս սերունդին մօտ:

Ելոյթ ունենալով Դոկտ. Մինաս Գոճայեան իր տպաւորութիւններն ու ապրումները ներկաներուն փոխանցեց իւրապատուկ ձեւով: Յուզիչ էր տեսնել իր սահիկներուն մէջէն իսլամացած եւ քրտացած հայերու զաւակներն ու թոռները, որոնք կ'ապրէին մեր պայծառական հողերու վրայ, երբեմն կիսաքանդ եկեղեցիներու կամ անոնց կողքին հասակ առած մզկիթներու շուքին տակ: Պարագան նոյնն էր քիչ մը ամէն տեղ՝ Սիս, Մուշ, Ատանա, Այնպէս, Սասուն, Կարս, Վան կամ այլուր...

Գործադրուեցաւ գեղարուեստական պատշաճ յայտագիր մը, որուն մաս կազմեցին Տիկ. Նազելի Գոճայեան (ընթերցում), Դաւիթ Սամուէլեան (երգ) եւ Արամ Լեփեճեան (դաշնամուր):

Արժ. Տ. Յովսէփ Քհնյ. Յակոբեան այս առթիւ կարդաց Արեւմտեան Թեմի առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի ողջոյնի գրութիւնը, որուն մէջ բարձր կը գնահատուէր Դոկտ. Մինաս Գոճայեանի վաստակը, կրթական, մշակութային եւ հասարակական բնագաւառներու մէջ:

Տեղի ունեցաւ նաեւ հարցում-պատասխանի պահ մը, որուն ընթացքին շօշափուեցան մեր բռնագրաւուած հողերու եւ ցեղասպանութեան հետ առնչուող հարցեր:

Կ'իմանանք թէ Դոկտ. Մ. Գոճայեան ծրագրած է առանձին հատորով մը, հրատարակել «Նոր Օր»-ի մէջ լոյս տեսած իր տպաւորութիւնները, Կիլիկիա եւ Արեւմտեան Հայաստան կատարած իր գոյգ ուղեւորութիւններուն մասին, գոր կատարած էր 2011 եւ 2012 թուականներուն:

Բարի երթ եւ նորանոր ջանքերով իրենց վաստակաշատ գործիչին:

Գ. Մ.

ՈՒՆՏԻ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ ԱՐԹԻԿԻ ՆՈՐԱՅՈՂԱԿ ԹԵՄԻՆ ՄԷՋ

Դեկտեմբեր 9ին Արթիկի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եւ Սուրբ Աստուածածին Եկեղեցիներու հարեւանութեամբ գործող բազիլիկի մէջ տեղի ունեցաւ Ուխտի Սուրբ Պատարագ, որ մատուցեց Արթիկի Թեմի Առաջնորդ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միջ-Եկեղեցական ջարբերութիւններու բաժնի Տնօրէն՝ Գերշ. Տ. Յովակիմ Եպիսկոպոս Մանուկեան:

Սրբազան արարողութեան ընթացքին կատարուեցաւ նաեւ նոր նշանակուած Առաջնորդի գահակալութեան արարողութիւնը: Սուրբ Պատարագի ընթացքին «Եւս առաւել» աղօթքէն առաջ խորան բերուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Սրբատառ Կոնդակը, որ կարդացուեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսարարապետ Գերշ. Տ. Յովնան Եպիսկոպոս Յակոբեանի կողմէ:

Հրաժեշտի խօսքով հանդէս եկաւ Շիրակի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Միքայէլ Եպիսկոպոս Աջապահեան, որու խօսքին մէջ մասնաւորապէս կ'ըսուէր. «...13 տարիներ ի մեր ծառայութեան արդիւնքը եղաւ այն, որ Արթիկը իր տարածաշրջանով հանդերձ հասունացաւ անկախ թեմ դառնալու համար եւ այսօր մենք հպարտութեամբ, բայց թախիծը սրտներու մէջ բաժանուած ենք Արթիկից...»:

Միքայէլ Սրբազանի խօսքին յաջորդեց Թեմակալ Առաջնորդի խօսքը, որ շնորհակալութիւն յայտնեց Սրբազան Հօր եւ այն անձերուն, որոնք նախորդ տարիներուն հոգ տարած էին Արթիկի տարածաշրջանի հոգեւոր կեանքին: Սրբազան Հայրը իր գոհունակութիւնը յայտնեց Արթիկի մէջ գտնուող եկեղեցասէր եւ պատրաստակամ ժողովուրդին, ինչպէս նաեւ անդրադարձ կատարեց եկեղեցաշինութեան հրամայականին, Թեմի յառաջիկայ ծրագրերին ու նաեւ ուղղութիւններուն: Սուրբ Պատարագի արարողութեան ներկայ էին Փոխ Մարգարէտ Մէլքիսեան Պետրոսեան, Ազգային Ժողովի պատգամաւոր Մուշեղ Պետրոսեան, Արթիկի Քաղաքապետ Արսէն Աբրահամեան, տեղական ինքնակառավարման մարմիններու ներկայացուցիչներ, բարերարներ, հիւրեր եւ սպասաւորներ Քոյր Եկեղեցիներու:

Սուրբ Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որու ընթացքին հիւրերը առիթ ունեցան ծանօթանալու Առաջնորդ Յովակիմ Սրբազանի հետ:

Սուրբ Պատարագի աւարտին տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որու ընթացքին հիւրերը առիթ ունեցան ծանօթանալու Առաջնորդ Յովակիմ Սրբազանի հետ:

ՍՐԲՈՑ ԴԵՒՈՆԴԵԱՆՑ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ «ՓՈՔՐԻԿ ՀՐԵՀՏԱԿՆԵՐ» ՇԱԲԱԹՕՐԵԱՅ ԴՊՐՈՑԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ



Թեմակալ Առաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեանի օրհնութեամբ վերակազմակերպուած եւ Առաջնորդանիստ Սրբոց Ղեկնողեանց Մայր Տաճարի Հովանիին ներքեւ գործող «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցին մէջ միշտ զգալի է լոյսն ու բարին: Վարժարանը բացառիկ առաքելութիւն ունի համայնքի կրթական կեանքին մէջ: Ըլլալով Լոս Անձելըսի Մայր Շաբաթօրեայ Հաստատութիւնը՝ կ'իրականացնէ ո'չ միայն հայերէնի որակեալ դասընթացներ, այլ նաեւ դպրոցին կից գործող գիտա-կրթական յանձնախումբի հետ՝ պարբերաբար կը կազմակերպէ Գալիֆորնիայի մէջ գործող շաբաթօրեայ դպրոցներու տնօրէններու եւ ուսուցիչներու վերապատրաստումն ու կատարելագործումը: Դասախօսութիւններու շնորհիւ մայրենի լեզուի մշակները կը ծանօթանան արդի ամերիկեան դասաւանդման, մանկավարժական ու մեթոտաբանական չափորոշիչներուն եւ ծրագրերուն:

Սակայն «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ վարժարանի հիմնական առաքելութիւնը Մայրենի լեզուի ուսուցումն է: Շուրջ 170 աշակերտն է ըստ լեզուական իմացութեան, բաժնուած են հինգ դասարաններու, ուր դասընթացները կը կատարուին Հայաստանի Հանրապետութեան հանրակրթական դպրոցներու դասագիրքերով՝ ապահովելով որակեալ կրթութիւն: Հաստատութիւնը կը հոգայ նաեւ հոգեւոր դաստիարակութեան խնդիրը: Թեմի հոգեւորականները մշտապէս իրենց հոգեւոր պատգամները կը փոխանցեն դպրոցականներուն եւ անոնց ծնողներուն:

Արհեստավարժ ուսուցչական կազմի կրթօճախին մէջ հայոց լեզուի, գրականութեան եւ ազգային երաժշտութեան ուսուցման կողքին, տարիներու ընթացքին ձեւաւորուած են նաեւ մնայուն աւանդութիւններ, որոնցմէ մէկը Տարեմուտի եւ Սուրբ Ծննդեան տօնակատարութիւններն են:

Նոր Տարին եւ Մեր Տիրոջ ու Փրկչին Սուրբ Ծնունդը անհնար է պատկերացնել առանց աւետաւոր հրեշտակներու: Սրբազան աւանդութեան համաձայն, ամէն տարի Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Ծնունդին հրեշտակները ուրախութեամբ կը սաւառնին, մարդկութեան աւետելով Բարի Լուրը, իսկ երկրի վրայ «Փոքրիկ Հրեշտակներ» իրենց երգ ու

պարով մասնակից կը դառնան այդ աւետիսին:

Դեկտեմբեր 15ին Սրբոց Ղեկնողեանց Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցի Ամանորի եւ Սուրբ Ծննդեան նուիրուած հանդիսութիւնը: Ողջոյնի խօսքով հանդէս եկաւ Մայր Տաճարի Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Խաթակ Քահանայ Շահապեան, ապա աւանդական «Հայր Մեր»-ով սկսաւ օրուան յայտագիրը: Մայրենի լեզուի հնչիւնները կենդանութիւն կ'առնէին եւ փոքրիկներու շրթներէն կը հնչէին՝ որպէս իւրօրինակ աղօթք եւ օրհներգութիւն: Օտարութեան մէջ հայերէնն ու հայկական հոգեւոր արմատները չմոռնալու լաւագոյն առհասակեան եկեղեցի-դպրոց սերտ համագործակցութիւնն է, որուն մերօրեայ չափօրինակը «Փոքրիկ Հրեշտակներ» շաբաթօրեայ դպրոցն է: Ահա այս է պատճառը, որ վարժարանի կենսատու կանխեղը Թումանեանական ու Թէքէեանական բնորոշմամբ կը վառուի Հայ Եկեղեցուց հայրենի հրաշագործ ու հոգեյոյզ աղօթքներէն:

Ձեռնարկի ընթացքին աշակերտները իրենց սրտամորմոք արտասանութիւններով ու խանդավառ երգերով տօնական տրամադրութիւն կը փոխանցէին ներկաներուն, որովհետեւ լաւագոյն առիթն էր ներկայացնելու այն ամէնը, որ սորված էին այս կիսամեակի ընթացքին:

Հանդիսութեան աւարտին իր շնորհակալութեան խօսքը ուղղեց դպրոցի տնօրէն՝ Բարեշնորհ Յովհաննէս Սարկաւազ Գումրուեան, ապա Առաջնորդ Սրբազան Հայրը ներկաներուն իր օրհնութիւնը բաշխեց: Վերջաւորութեան փոքրիկները ծափահարութիւններով դիմաւորեցին առատաձեռն, աւանդական Ձմեռ Պապիկը:

Գալուստդ բարի 2013 թուական, թող Աստուծոյ օրհնութիւնը եւ «Փոքրիկ Հրեշտակներ»-ուն աղօթքները բարեբեր եւ յաջող տարի դարձնեն քեզ մեր կրթօճախի համար: Եկեղեցուց մէջ վառած մոմերը թող լոյս ու բարութիւն սփռեն դպրոցի ներսը եւ ամէն տեղ՝ մեր Հայրենիքին, մեր աշխարհասփիւռ հայրենիքի ընտանիքներուն եւ օճախներուն մէջ:

(Գայիկեան Մնացականեան, «Փոքրիկ Հրեշտակներ» Շաբաթօրեայ Դպրոցի Ուսուցչուհի)

Massis Weekly

Volume 32, No. 48

Saturday, DECEMBER 29, 2012

Levon Ter-Petrosian Bows Out of Presidential Race Raffi Hovannisian and Hrant Bagratian Announce Their Candidacy



Levon Ter-Petrosian will not run for president again

YEREVAN -- Ending months of speculation about his political future, Levon Ter-Petrosian, Armenia's first president, announced on Tuesday that he will not make another bid to return to power in next February's presidential election.

In an interview with the "Chorrord Ink'nishkhanutyun" daily, Ter-Petrosian did not voice support for any other presidential candidate. Nor did his Armenian National Congress (ANC) alliance immediately make any statements on its election-related plans.

The ANC leader, who will turn 68 on January 9, cited his age as the main reason for his decision not to run in the election. "As far as I know, so far nobody has raised the question of whether a person respecting their own people can aspire to the post of president at the age of 68," he said. "Such a thing usually does not happen in developed democratic countries."

"Whatever you say, a 68-year-old person cannot be as energetic and prolific as those aged between 40 and 60, which is probably the optimal age for politicians aspiring to the post of president. Therefore, individuals younger than me should enter the arena," he told the pro-HAK paper.

Ter-Petrosian said there is also another "insignificant and purely technical reason" for his decision. "But I don't want to disclose it because very few will believe in it in our cynical reality," he said.

Ter-Petrosian added that his withdrawal from the presidential race, anticipated by observers, will upset many of his supporters. "But I am sure that some time later my supporters will realize that my decision was honest and right," he said.

Speaking to "Chorrord

Continued on page 4

Armenian Expert Predicts Conflicts After Presidential Polls

YEREVAN -- The Armenian authorities are likely to come up with an internal conflict after the presidential election, according to Richard Giragosian, the president of the Regional Studeis Center.

At a news conference on Wednesday, the expert said he predicts a very profound conflict, which he thinks will be the logical continuation of the Prosperous Armenia leader's decision to pull out of the presidential race.

Giragosian thinks the conflict will persist, with the Prosperous Armenia party losing its strength. The expert has no doubt about the incumbent president's re-election potentials, but said he doesn't think the possible non-competitiveness will necessarily prevent the conduct of free and fair polls.

Summing up the 2012 domestic policy developments at, Giragosian said that the oligarch's role in the economy

is likely to decrease. Giragosian thinks the authorities have realized that the oligarchic system is the country's number one enemy, with the public growing to think more negatively of their anti-social conduct.

Giragosian evaluated 2012 as a positive year in terms of domestic economic developments. He particularly highlighted the importance of the Armenia-EU negotiations over visa facilitation and the free trade agreement. In the meantime, he pointed out to the shortage of economic opportunities, and jobs, with the economy being largely dependent on foreign transfers.

Speaking of the May parliamentary election, the analyst characterized htem as positive but not satisfactory. He said that the despite the oligarchs return to the legislature, the polls also saw a clever and strong opposition win seats.

Armenian Military Reports Major Arms Acquisitions in 2012

YEREVAN -- The Armenian military on Monday reported "significant" arms acquisitions in 2012 and said it will continue to modernize its forces with precision weaponry in the coming years.

"At the beginning of this year we declared that we have acquired new rocket systems capable of neutralizing active [armor] protection of enemy tanks," said Artsrun Hovannisian, the spokesman for Armenia's Defense Ministry. "This is just one example new-generation precision-guided weapons."

"Naturally, we do not declare some things immediately. But those acquisitions are significant and they will be unveiled little by little," Hovannisian told a news conference.

"The focus remains on extremely precise means of firepower that have serious preemptive functions," he said of the army's plans for 2013. "It's an ongoing process. You will have a chance to see all that later on."

The mostly secret acquisitions stem from a five-year plan to modernize Armenia's armed forces with long-range weapons and other hardware that was approved President Serzh Sarkisian's administration two years ago. Defense Minister Seyran Ohanian said early this year that the plan is being successfully put into action. Prime Minister Tigran Sarkisian likewise spoke of an on ongoing military buildup shortly afterwards.

Some of the long-range weapons possessed by Armenia were demon-



S-300 air-defense systems

strated for the first time during a military parade in Yerevan in September. 2011 Those included Russian-made Scud-B and Tochka-U missiles capable of hitting strategic targets deep inside Azerbaijani territory.

The Armenian military said in October this year that it has simulated missile strikes on military targets as well as oil and gas installations in Azerbaijan during major exercises held in Armenia and Nagorno-Karabakh throughout that month. It implied that those facilities will be struck in the event of a new Armenian-Azerbaijani war.

The Armenian army also appears to have been reinforced with more advanced versions of Russian-made S-300 air-defense systems. IMINT and Analysis, a U.S. defense newsletter using open-source satellite imagery, reported in October that such systems have been deployed in the last two

Continued on page 2

"Taraf" Columnist Accuses Turkey in Blacking Out Information on Armenian Genocide

YEREVAN -- Lately Turkish columnists are frequently referring to the position of former and current Turkish governments over Armenian Genocide. This time the issue was highlighted my "Taraf" columnist Serdar Gaya.

As reports Armenpress referring to "Marmara" daily, published in Istanbul, in his article Gaya has reminded that in 1915 Young Turks deported or massacred the majority of Armenians living in Anatolia eliminating thousands of Armenians living in this area for years.

"Even though year after year Anatolia's Muslims lived with Armenians they very easily forgot Armenians. Armenians, as well as their villages and churches very quickly vanished from their memory," writes columnist. He highlights only after 1973 numerous demands on recognizing Armenian Genocide made Turkey "remember" its past with Armenians.

"For Turkish Armenian identity is nothing else but a political meaning formed



with sense of hostility," Gayan writes.

Columnist refers to UN Declaration on Genocide signed by Turkey in 1950, underlining that Turkish side signed the document without acknowledging the meaning of word "genocide". For such a situation he accused Turkish state which "blocked all sources of information".

"That is why Turkish citizens are surprised and then angry when hearing about events of 1915," Gayan writes, adding that reaction of Turkish residents is not surprising when facing the issue of Kurdish Genocide committed on physical or cultural territories.

Karabakh Reports Sharp Drop in Combat Deaths

STEPANAKERT -- The number of Armenian soldiers killed in skirmishes with Azerbaijani forces around Nagorno-Karabakh has drastically fallen this year despite increased ceasefire violations along the "line of contact," a top military official in Stepanakert said on Wednesday.

Lieutenant-General Movses Hakobian, the commander of Karabakh's Armenia-backed Defense Army, said only two of soldiers were shot dead by Azerbaijani snipers in the course of 2012, compared with 11 such cases reported in 2011.

"The measures which we have taken to ensure that our soldiers perform their service on the frontline safely have borne fruit," Hakobian told a news conference. "Today soldiers can confidently carry out observations on all Defense Army positions and they face no dangers if they don't violate safety rules."

Hakobian added that "large-scale work to reinforce frontline positions" has also helped the Karabakh Armenian military substantially reduce the number of incursions by Azerbaijani commando units. "This year there were seven attempts by enemy sabotage groups to penetrate our positions but only one of them partly succeeded in



inflicting damage on Defense Army servicemen," he said. "In the six other cases, those groups were detected and pushed back to their starting positions after suffering casualties."

Armenian military fortifications along Armenia's border with Azerbaijan have also reportedly been beefed up this year. Defense Minister Seyran Ohanian personally inspected in August what his press office described as "exemplary defense structures and posts" constructed at various border sections.

The most volatile, western section of the Armenian-Azerbaijani frontier saw an upsurge in deadly fighting in June, which left more than a dozen Armenian and Azerbaijani soldiers dead. U.S. Secretary of State Hillary Clinton expressed serious concern over those incidents when she visited the South Caucasus later in June.

ACNIS Releases the Third issue of Public Policy Journal: "The Changing World: Viewpoints from Yerevan"



YEREVAN -- The Armenian Center for National and International Studies (ACNIS) has released the third issue of ACNIS quarterly public policy publication, entitled "The Changing World: Viewpoints from Yerevan," during a special presentation-seminar held at the Center's office. The meeting brought together the quarterly's contributors, other leading analysts, policy specialists, and members of the press.

ACNIS director of research Manvel Sargsyan welcomed the audience with opening remarks and conveyed hope that the volume will serve the needs of political experts, policy commentators and the public at large by offering a broad overview on a comprehensive set of critical issues, challenges and opportunities—both domestic and foreign—entwined with Armenia's policy imperatives, options and interests. It was also hoped that the publication would assist the decision-makers in Armenia and help de-

fine Armenia's foreign and domestic policy issues in a broad and farsighted way.

The ceremony featured brief presentations from the volume authors Saro Saroyan, Vardan Jaloyan, Armine Ghazaryan, Edgar Vardanyan, and Arman Yeghiazaryan who provided brief summaries of key points underlying their works and flashed out the major avenues for further research and inquiry in other aspects of Armenia's socio-political milieu. The addresses were followed by a series of questions and answers, and featured a lively exchange with the audience.

The presentation was concluded by the closing remarks of Raffi K. Hovannisian, Armenia's first minister of foreign affairs and ACNIS founder, who emphasized the important tradition of nonpartisan research that ACNIS has constantly demonstrated through its progressive performance by serving as a useful venue and a professional forum for building knowledge,

Armenian Varujan Vosganian Appointed Romania's Minister of Economy

SOFIA -- Romanian Parliament has endorsed new Cabinet of Victor Ponta on December 21, in which Armenian Varujan Vosganian was appointed as the Minister of Economy of the country.

"We think that he is one of the great individuals of Diaspora who has a lot of achievements and represents as real Armenian," said the leader of one of Armenian community organizations. According to him Varujan continues the tradition of Armenians who have been ministers, parliamentarians and politicians in Romania. "I am a 100 % Armenian and 1000% Romanian," he has once jokingly noted.

Born in Craiova to a family of Armenian ethnicity, Vosganian studied at the Alexandru Ioan Cuza High School in Focsani. He then studied Commerce at the Bucharest Academy of Economic Studies (graduated 1982) and Mathematics at the University of Bucharest (graduated 1991), gaining a Ph.D. in economics in 1998.

In 1990, he became president of the Armenians' Union of Romania and he was twice (1990-1992 and 1992-1996) elected a member of the Chamber of Deputies, and twice a Senator (1996-2000 and 2004-2008), on the lists of the National Liberal Party.

Between 1996 and 2003, he was the leader of Uniunea Fortelor de Dreapta, a small right wing liberal party, which was eventually merged into the National Liberal Party.

Vosganian has written several books, especially on economics and politics, but also fiction and poetry. He is a member of the Romanian Writers'



Varujan Vosganian

Union, and since 2005, he has served as its vice president. Vosganian is also a leading member of the Romanian Humorists' Association.

In December 2006, he was named Minister of Economy and commerce.

Vosganian's political views can be characterized as right-wing conservative.

Vosganian has written several books, especially on economics and politics, but also fiction and poetry. He is a member of the Romanian Writers' Union, and since 2005, he has served as its vice president. Vosganian is also a leading member of the Romanian Humorists' Association.

One of his achievements is his book titled "The book of whispers" about Armenian Genocide. Varujan Vosganian noted that it was a victory for him to speak Armenia. According to him culture is the most important tool to fight injustice, because the book is more powerful than thousands of political speeches, talks and diplomatic efforts. In the author's words his book is about the Armenian identity.

Ancient Armenian Coins Discovered in Turkey

The police at Turkey's Kastamonu Province found numerous objects of historical value.

Based on a call that was received, the law enforcement officers stopped a vehicle that was entering Kastamonu city. Upon searching the vehicle, the police discovered 424 pieces of historically significant objects, jewelry, and coins plus two illegal guns, Haberler news agency of Turkey reports.

Also, there were three pieces of ancient Armenian coins among the objects that were discovered.

"In actual fact, at least the crimi-



nals do not deny that Armenians have lived in these lands," Istanbul Armenian journalist Aris Nalci wrote in his Twitter account in this connection.

Armenian Military Reports

Continued from page 1

years in Armenia's southeastern Syunik province adjacent to Karabakh. The online publication said their sophisticated surface-to-air missiles not only cover the entire Karabakh airspace but can also thwart air travel between Azerbaijan and its Nakhichevan exclave.

Armenia is able to stay in an intensifying arms race with oil-rich

Azerbaijan mainly because of close military ties with Russia that entitle it to receiving Russian weapons at discount prices or even free of charge. A new Russian-Armenian defense agreement signed in August 2010 commits Moscow to helping Yerevan obtain "modern and compatible weaponry and special military hardware."

Over the past decade, Baku has spent billions of dollars in oil and gas revenues on a military buildup.

where ideas can be openly generated, shaped and shared. The progressive activity of the Center and the wealth of knowledge it has contributed to the

research community of Armenia and beyond reveal that the activity of the Center is respected and required, he concluded.

Foreign Policy Journal

Preventing the Coming U.S. Disaster
in the Caucasus

By David Boyajian

The United States is risking a disastrous renewal of war in the Caucasus between Armenians and Azeris over the breakaway Armenian-populated Republic of Mountainous Karabagh (RMK, or Artsakh in ancient Armenian).

A new war between Azerbaijan and RMK (with its ally, Armenia) would undoubtedly destroy much of Azerbaijan's energy industry. This includes key Azeri oil and gas pipelines that lie just a few miles north of RMK and snake through Georgia and Turkey.

Azerbaijan's economy and corrupt government are massively dependent on oil and gas revenue and would be in deep trouble. The already conflict-ridden Caucasus—recall the Abkhazia stalemate and 2008's Russian-Georgian war over South Ossetia—would be hopelessly destabilized. U.S. policy, in particular, would lie in tatters.

Not surprisingly, Western energy giants such as BP, Chevron, ConocoPhillips, ExxonMobil, and Total (France) own huge stakes in Azerbaijan's energy infrastructure.

As expected, the conflict's mediators—the U.S., Europe, and Russia—have an insatiable greed for Azerbaijan's substantial oil and gas deposits. Yet had they, especially the U.S., formally recognized RMK's independence from Azerbaijan, the conflict would have been resolved years ago. Such recognition remains the only practical and just solution.

Azerbaijan would be unhappy, yes, but would continue to sell most of its oil and gas to the West. Azeris will never sell only to Russia. That would bind them too tightly to their former overlord.

Azeri Violence

The conflict in Mountainous Karabagh broke out in the late 1980's just after its Armenian majority, long abused by Azerbaijan, peacefully declared its desire for union with Armenia.

Azerbaijan replied with murderous attacks against Karabagh civilians. Mobs hunted down and killed Armenians in the Azeri cities of Sumgait and Ganja. After the USSR dissolved in 1991, RMK held a referendum boycotted by Azeris. It voted for independence. Azerbaijan's response was full-scale war.

Even with help from Turkish military officers and paramilitaries, and Afghan Mujahedin, Azerbaijan lost the war. A ceasefire was declared in 1994. Yet almost daily Azerbaijan threatens a new war and snipes across the contact line.

Pumped up with billions in oil and gas revenue, Azerbaijan's \$3 billion military budget dwarfs Armenia's entire national budget. But Armenian troops are universally acknowledged to be better trained and to possess much greater esprit de corps because they are defending their ancient lands.

But the U.S., Europe, and Russia might be coming to their senses. A few years ago, they proposed that RMK's 100,000 mostly Armenian citizens de-

side its formal status in a referendum. In return, Armenians would hand over vast tracts of territory to Azerbaijan.

Azerbaijan rejected this compromise. It insisted, unreasonably, that its entire population of nearly 10,000,000 must participate in such a referendum so as to outvote RMK's 100,000 people.

How solid is RMK's case for independence? Very.

RMK's Best Case

On every measure—history, demographics, and sheer decency—RMK has as good a case as other nations, such as South Sudan, East Timor, and the republics and regions of the former Yugoslavia, that have recently been freed from their overlords.

During pre-Soviet, Soviet, and post-Soviet times, Azeris have persecuted and murdered Mountainous Karabagh's Christian Armenians.

Since 1994, RMK has been a functioning, democratic, de facto independent state.

Ancient Greek and Roman historians—Strabo, Pliny the Elder, and others—testify that Artsakh/Mountainous Karabagh was part of Armenia since before the time of Christ, and has always had an Armenian majority.

Only a thousand years later did Turkic-speaking nomadic tribes from Central Asia begin dribbling into the Caucasus. At no time, however, did they or Muslims constitute more than a fraction in Mountainous Karabagh itself. An 1823 Russian survey reported it to be 97% Armenian.

From 1918-20, Azeris—in a pan-Turkic alliance with Turkey—attacked and massacred thousands of Armenians in and around Karabagh. Shortly thereafter, Russian Bolsheviks—allied with Kemalist Turkey at that time—Sovietized the Caucasus.

Lt. Col. John C. Plowden, a British military representative in the Caucasus, reported in 1919 that Mountainous Karabagh is “the cradle of their [Armenians'] race ... Armenian in every particular and the strongest part of Armenia, both financially, militarily and socially.”

But in 1921, Stalin, the Soviet Commissar for Nationalities, gifted Mountainous Karabagh to Azerbaijan, probably to curry favor with Turkey. Karabagh was thereby artificially and physically severed from Armenia, mere miles to the west.

Azerbaijan deliberately neglected not only Karabagh's economy and roads, but also its communication and transport links with Armenia. Law enforcement positions were filled with Azeris, even though they were a minority. Armenians protested to Moscow in vain.

An Azeri policy of depopulation caused 30% of Karabagh's Armenian villages to disappear between 1926 and 1980.

Azeris were also brought in to shift the demographics. Mountainous Karabagh's Armenian population dropped to 94% in 1921, 89% in 1926, 80% in 1970, and 76% in 1989.

Were RMK to fall under Azeri control again, it would inevitably suffer



Map of Caucasus Region (Jeroencommons/Wikipedia)

the same fate as Nakhichevan, another Armenian province that Stalin gifted to Azeris.

Nakhichevan Emptied

Under Azeri rule over the past decades, Nakhichevan has been totally emptied of its Armenians.

One Azeri official has actually declared that “Armenians have never lived in Nakhichevan.” Since the existence of Armenian buildings, churches, and monuments disprove such absurd claims, Azeris have undertaken to deface or level them in Nakhichevan and elsewhere.

In 2005, for example, Azerbaijani servicemen used sledgehammers and machinery to completely destroy thousands of ancient Armenian Khachkars (intricately carved stone crosses) in a cemetery in the city of Julfa. The Azeris were caught in the act from across the border. The astonishing video is on the Web.

The destruction has been compared to the Taliban's dynamiting of ancient Buddhist statues in Afghanistan. Azerbaijan has banned foreign observers and ambassadors from the site.

Due to their falsifying others' history and culture, we are compelled, sadly, to examine Azeris' own roots.

The Invention of Azerbaijan

Most people are unaware that “Azerbaijan” was created as a country—out of thin air—in 1918, just after Russia's Bolshevik Revolution.

The region's Muslims had never been known as “Azeri,” an ethnicity that had never existed. Rather, they called themselves Turks, Tartars, or simply Muslims. Large numbers of Armenians, Georgians, and others also inhabited that same territory.

Prior to 1918, “Azarbayjan” referred merely to two provinces—not a country—in northwestern Persia (Iran). These were always located strictly to the south, below the Arax River, of the artificially-created Azerbaijan of 1918.

The so-called Azeris speak a Turkic language. But the word Azerbaijan is actually Persian, not Turkic. It is derived from the name Atropates, a Persian governor appointed by Alexander the Great around 327 BC.

The Soviets probably chose the

name “Azerbaijan” in 1918 to further their designs on Iran. Indeed, during and after WW 2, the Soviets tried unsuccessfully to carve out a “People's Republic of Azarbayjan” in Iran's north-west.

The Sordid U.S. State Department

The U.S. State Department's policies toward Azerbaijan have a particularly sordid aspect involving personal gain and undue influence.

In 2010, for example, President Obama appointed Matt Bryza as interim American ambassador to Azerbaijan, despite Bryza's questionable ties to Azeri officials.

Not surprisingly, after a year in Baku, Bryza joined the Istanbul-based Turcas Petrol Corporation, a partner of the State Oil Company of Azerbaijan (SOCAR).

The United States-Azerbaijan Chamber of Commerce (USACC) has always been crammed with former U.S. officials such as Vice President Dick Cheney, former Secretaries of State James A. Baker and Henry Kissinger, Richard Armitage, Zbigniew Brzezinski, Richard Perle, and Brent Scowcroft. They rub elbows with USACC fat cats from corporations that invest in Azerbaijan's energy industry.

Israel, known for its influence on U.S. policy, and some Jewish American organizations, have allied themselves with Azerbaijan. 30% of Israel's oil imports come from Azerbaijan. Israel is selling \$1.6 billion dollars' worth of advanced weapons, including drones, to Azerbaijan, which is threatening to use them against RMK.

The RMK conflict is not unsolvable. The facts are clear. Azerbaijan has no valid claim to RMK. Yet U.S. support of Azerbaijan may drag it into war.

America must take the lead and formally recognize RMK's independence. Europe and Russia will follow. The alternative may be another U.S. war whose cost in blood and money we Americans cannot afford.

The author is a freelance journalist. Many of his recent articles are archived at http://www.armeniapedia.org/wiki/David_B.Boyajian.

AVC Professional Corps: “If You Can Dream it, You Can Do it!”



YEREVAN -- Thirty years in corporate publishing was enough. But what wasn't enough for Suzanne Daghlian, 53, of New Jersey was the two weeks she spent volunteering in Armenia each summer. She'd been travelling to Armenia every summer since 2006 and building houses with the Fuller Center for Housing. As a team leader, her time in Armenia was full attending to the volunteers she'd recruited, organizing their days working on construction sites, their evenings out on the town, and their touring days visiting the great sights of Armenia. She felt the time always flew by and she was never able to really enjoy the pace of Armenia, to learn the language, to really relax into it. So when she lost her job along with many other veterans of the old guard of New York publishing, she knew it was time to realize a dream she'd always had to live somewhere outside of the US for a little while and do something good for others.

Suzanne has lived in New Jersey her whole life, commuting to Manhattan for work. Her parents were founding members of the Armenian Church in Tenafly, New Jersey and Suzanne has always been active in her church. Her travels have taken her from the Andes and the Amazon to Kenya and Tanzania, from Scandinavia to Hawaii, as well as all over the continental United States for her work. For the past seven years, however, Suzanne's heart has been in Armenia.

“I always dreamed of taking off and moving to a different place with a different point of view. And then I fell in love with Armenia. I found the Armenian Volunteer Corps (AVC) website years ago and would leave it open on my computer at work and fantasize about being a long-term volunteer in Armenia. But I didn't think I would ever have the guts to leave my life behind and go. When I lost my job, the stars aligned for me and I just knew I had to do it.”

Suzanne made all the arrangements—she produced a budget, arranged to pay her bills online, found a house sitter to take care of things at home, and applied to AVC. Once

accepted, she began to tell people about her plan to go to Armenia to volunteer for four months.

Her family and friends were ecstatic for her. Many of them knew of her desire to live abroad for a time, all of them knew of her love for Armenia, and some of them admitted that they dream of this kind of adventure themselves. “It's amazing how many of my friends and cohorts say they want to do something like this, but they feel they can't get away from their responsibilities. But I haven't left my responsibilities—I am paying my bills and keeping in touch with all I need to, and I'm living here in Armenia for four months. In this day and age, with all the technology we have access to, it's really easy to be in two places at once.”

The Armenian Volunteer Corps has coordinated her volunteer placements while she is here. Suzanne is volunteering at the American University of Armenia in their Extension Program. She's helping them promote a new branch of the program in Karabagh. She's also working at the Fuller Center for Housing Armenia, where she knows the mission and the need and is able to help them with editing, writing, and marketing.

“Not only has AVC provided me with job placements that are in alignment with my experience, but they provide me with an amazing community of friends made up of the other volunteers in-country. We have language classes together, go on weekend excursions out of the city, and attend cultural events. In addition, the AVC office is a home away from home—a place where we are always welcome and will always find a friend.”

“Armenia got inside me and called me back, over and over again. I love it here—the pace, the people, the scenery, the very soul of it has me in its sway and won't let go. Having the opportunity to come here and work for Armenia is a gift I gave myself. I'm learning so much, but the most important lesson is that if you can dream it, you can do it!”

Founded in 2000, the Armenian Volunteer Corps (AVC) is Armenia's premiere volunteer placement organization.

Noor Champagne Brunch and Rose Parade Viewing to Benefit Armenian Film Foundation's Digitization Project



LOS ANGELES -- Pasadena's award-winning events venue Noor will host its 3rd Annual New Year's Day Champagne Brunch with spectacular views of the 124th Rose Parade route from its Sofia Ballroom. This year, proceeds from the brunch will benefit the Armenian Film Foundation's Armenian Genocide Digitization Project.

Spectators will enjoy close-up views of the world-famous Rose Parade from Noor's balcony and Sofia Ballroom. “This is such a unique event – there is nothing else like it. Where else can you enjoy a wonderful brunch and champagne while having a bird's eye view of the Rose Parade in a beautiful warm setting? And at the same time, support a cause near and dear to our hearts,” said Robert Shahnazarian, Senior Vice President of Noor.

Noor, overlooking the famed Colorado Boulevard in Pasadena, was voted Most Stylized Venue 2012 by Pasadena Magazine and Best Wedding Location and Banquet Hall for 2011 and 2012 by Pasadena Weekly. Last

year's Champagne Brunch sold out early.

Ticket price is \$250 per person and includes a Champagne Brunch, Parking and spectacular views of the 124th Rose Parade.

“What could be better than viewing the famous Rose Parade up close – and helping to preserve our survivors' testimonies? We are thrilled to be part of this event, and the recipient of the generosity of Noor,” said filmmaker Carla Garapedian, who is leading the AFF's digitization project.

Donations from the event will help fund the digitization of the 400 testimonies of Armenian Genocide survivors and witnesses recorded by the late documentary filmmaker J. Michael Hagopian. These rare interviews will become part of the USC Shoah Foundation Institute's Visual History Archive –available to scholars, students and researchers online.

The New Year's Day event begins at 7 a.m. on Tuesday, January 1, 2013. Tickets are limited and available at www.itsmyseat.com/roseparade2013.

Levon Ter-Petrosian Bows Out of Presidential Race

Continued from page 1

Inknishkhanutyun,” Ter-Petrosian branded Armenia's political leadership “a bunch of criminals who seized power” and promised to comment on “all important issues preoccupying the society” after the presidential election. It was not clear, however, whether he will resign as ANC leader and leave the political arena altogether.

On Saturday, Raffi K. Hovannisian formally announced his candidacy for the Armenian presidency. In advance of the elections, scheduled for February 2013, he publicized his decision during a Citizens' Assembly convened at the Armenia Marriott Hotel.

“All of us must become more citizen than civil, more nation than nationalistic, more liberty than liberal, more spirit than spiritual, and more Republic than republican. Because Armenia is free, independent, and united through us, our will power, and our common path. Armenia: the one and only. On February 18, 2013, our people finally must take action--one time and together,” he said.

Upon conclusion of Raffi Hovannisian's keynote remarks, the previous

day's decision of the Heritage Party's executive board was presented to the assembled citizens for affirmation. The civic assembly and the Heritage Party delegates, as one, raised their hands in unanimous approval.

On Monday, former Prime Minister of Armenia Hrant Bagratian also announced his candidacy for President during the Azatutyun (Freedom) political party convention. Bagratian, who served as prime minister from 1993-1996, indicated that he will accept the nomination.

Bagratian said late last week that he would like to run for president if Ter-Petrosian decides not to enter the fray. He was less categorical on that score on Monday.

“I have an excellent rapport with President Ter-Petrosian, and I don't think we will ever have problems by standing in each other's way. I have no such intention,” he told Azatutyun delegates. “But life is moving on and there are new realities.”

The ex-premier added that his main goal is to consolidate “liberal” opposition groups and present them as a credible alternative to the Sarkisian administration.

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՄԵԾ ՅԵՐՈՍՆԵՐԷՆ ԱՂԱՍԻ ԿԱՍ ՅԱՍՕ (ԿԱՐԱՊԵՏ ԹՈՒՐՍԱՐԳԻՍԵԱՆ)

Գ. ՄՈՒՆՈՅԵԱՆ

Հնչակեան կուսակցութեան դարաւոր պատմութիւնը հարուստ է ազատագրական բազմապիսի սիրագործութիւններով: Իր բազմազար ազատամարտիկներու հոյլին մէջ, մասնաւորաբար Զէյթունի եւ Մուսա Լեւրան ինքնապաշտպանութեան ճակատագրական օրերուն, հանրայայտ դարձաւ հերոս Աղասին:

Մուսա Լեւր կամ այլ անունով ալ ճանչցուած ճէպէլ Մուսան, համաշխարհային ճանաչում ստացաւ յանուն ազատութեան իր մղած քառասունօրեայ պայքարով:

Աղասին բուն անունով Կարապետ Թուրսարգիսեան, ծնած է 1871ին, Հաճըն: Եղած է ուշիմ եւ արթնամիտ ուսանող մը: Պոլիս մեկնելով կը յաճախէ Կեղերոնական վարժարանը, աշակերտելով մեծահամբաւ ուսուցիչներու: Ան կը մնար Մեծն Մուրատի (Համբարձում Պոյաճեան) տունը: Այստեղ կը հանդիպի յեղափոխական ուսանողների եւ անոնց հետ կը մասնակցի յեղափոխական ժողովներու եւ շարժումներու:


Պոլսոյ մէջ Աղասին կը ճանչցուի «Հասօ» անունով որ Հաճնոյ բարբառով «Հասա» կը նշանակէ: Ան կ'ուխտէ իր ընկերներուն հետ ծառայել յեղափոխութեան սուրբ գործին:

Մարտական գործողութիւններ նախաձեռնելուն համար Աղասի կը ձերբակալուի եւ ապա կաշառքի միջոցով, ազատ կ'արձակուի: Շրջան մը Փրանսա կը հաստատուի եւ յետոյ Կուսակցութեան հրահանգով կ'անցնի Աթէնք:

Հասոն, իր բացակայութեան, մահուան դատապարտուեցաւ Պոլսոյ մէջ, սակայն կերպով մը Պէյրութի վրայով, 1892ին կ'անցնի Կիլիկիա: Այստեղ նախապէս եղած կարգադրութեանց համաձայն կը հանդիպի Մուսա Լեւրան հայութեան եւ իր առաքելութիւնը կը ծանօթացնէ անոնց: Հասոն իր անունը կը փոխէ Աղասի: Աղասիի շրջանակը կ'ընդլայնի եւ իր օգնականը՝ Ապահը կը զրկէ Աթէնք, 5000 «շաբօ» տիպի հրացաններ բերելու տեղուցն Հնչակեան կեղերոնէն:

1893ի ամրան կը հանդիպի Սիսի Կաթողիկոս Մկրտիչ Քէյֆօսիզեանին, որ այդ շրջանները կ'այցելէր: Վեհափառը սկիզբը ծանօթանալէ ետք Աղասիի ծրագրերներուն, կը խրախուսէ գինք եւ կը խոստանայ կարեւոր դրամական օգնութիւն մը ընձեռել իրեն: Աղասի որոշ հիասթափութիւններ կ'ունենայ, քանի որ Վեհափառը չէր կրցած իր խոստումը լրիւ կատարել...:

Հակառակ նիւթական դժուարութիւններուն՝ Աղասի շարունակեց իր առաքելութիւնը: Խօսեցաւ, քարոզեց եւ ինքնապաշտպանու-



թեան հրաւիրեց ժողովուրդը: Սկսաւ գինավարժութիւններ կատարել տալ երիտասարդներուն: Տասնապետական դրութեամբ բաժանումներու ենթարկեց գանոնք: Այս բոլորը կը կատարուէին գինուորական խիստ կարգապահութեամբ:

Արդարեւ, Աղասիի նման Հնչակեան գործիչները ինքնավստահութիւն ներշնչեցին եւ ոգեւորեցին ժողովուրդը, որպէս զի ան ինքնապաշտպանութեան նուիրուի: Անոնք իրենց անսահման ոգիով, պայքարելու անկարագրելի տոկունութեամբ եւ անսակարկ հայրենասիրութեամբ, դարձան ոչ միայն հերոսներ, այլ առասպելական դէմքեր: Այդ աստղահոյլին մաս կազմողներէն եղան Նազարբեկեաններ, Ռուբէն Պէրպէրեաններ, Խանազատներ, Զաքարեաններ, Ժիրայր-Մուրատներ, Աղասիներ, Ժըզպաշեաններ, Կարապետեաններ, Զիլլօներ, Մինաս Օղլուներ, Փարամազներ, Գայեր (Հայկ Բժշկեան) եւ բազմաթիւ ուրիշներ:

Արդարեւ, կարելի է տասնեակ մը հատորներով բնութագրել անոնց քաջագործութիւնները:

Աղասի Թուրսարգիսեան իր յանդուգն նախաձեռնութիւններով, վիթխարի գործունէութիւն մը ունեցաւ Կիլիկիոյ տարբեր շրջաններու ազատագրութեան պատմութեան մէջ: Ան իր հաւատարիմ գինակիցներով, հակայական ազդեցութիւն ձգեց իրենց ժամանակակից դէպքերու եւ իրադարձութիւնների վրայ:

Մինչ թրքական բիրտ ոյժերը անգթօրէն կ'իջնէին հայ աշխատաւոր զանգուածներու վրայ, միւս կողմէ Հնչակեան կուսակցութեան նախաձեռնութեամբ, յեղափոխական տրամադրութիւնները հետզհետէ կը ծաւալէին Թուրքիոյ գրեթէ բոլոր շրջաններուն մէջ:

Հոս եւս Զէյթունի ապստամբութեան գործը կը յանձնուի Աղասիին: Արդարեւ այս հերոսական քաղաքը 1862էն սկսեալ մաքառեցաւ շրջանի անկախութեան հա-

մար եւ ժամանակաւորապէս ապահովեց կիսանկախ կարգավիճակ մը, որ հաստատուեցաւ արքայական հրովարտելով: Սակայն շատ երկար չի տեւեց այս դրութիւնը: Կրկին շարունակուեցան կեղեքումներն ու հարստահարութիւնները, որոնց դէմ էլան գէթուցիները եօթ հազարնոց գինուած ոյժերով: Թրքական 40 հազարնոց բանակն անգութ յարձակումներով նոր արշաւանք մը շղթայագրեց Զէյթունի վրայ: Սակայն ժամանակաւոր կերպով ընդմիջուեցաւ ֆրանսական կառավարութեան միջամտութեան շնորհիւ, որ արդիւնքն էր փոխադարձ զիջումներու համաձայնագրութեան:

1895ին զանգուածային ջարդեր կազմակերպուեցան Թուրքիոյ մէջ, որոնց հետեւանքով գէթուցիները դարձեալ դիմեցին ինքնապաշտպանութեան: Այս անգամ ապստամբական շարժումը գլխաւորելու պարտականութիւնն ստանձնած էին իշխանապետ Ղազար Խովրոյեանն ու Աղասի Թուրսարգիսեանը: Թուրք զօրքերը քանի մը անգամներ ի գուր փորձեցին, Ռեմզի փաշայի գլխաւորութեամբ վերագրաւել իրենց կորսնցուցած թրքական զօրանոցը, բայց ապարդիւն: Աւելի քան երկու ամիս գէթուցիք յամառ պայքար մղեցին իրենցմէ տասնապատիկ կերպով աւելի զօրաւոր բանակի դէմ ու մնացին անընկճելի եւ Զէյթունը դարձաւ անառիկ քաղաք: Օտար պետութիւններու միջամտութեամբ 1896ի Յունուարին, թուրք զինուորները հեռացան գաւառէն եւ ընդհանուր ներքում շնորհուեցաւ բանտարկեալներուն: Նշանակուած քրիստոնեայ կառավարիչին շնորհիւ բնակչութիւնը հինգ տարեան համար, տուրքերէ զերծ մնաց եւ կրցաւ ապրիլ խաղաղ ու ապահով շրջան մը:

Թէեւ գէնքն ու գինամթերքը քիչ էր, սակայն շրջանի հայերը, առանց կուսակցական խտրականութեան, գերադասեցին դիմել անձնագործ պայքարի, քան թէ յայտնուիլ թշնամիի ողորմածութեան: Ընդհանուր առմամբ Սվետիոյ հայութիւնը թրքական իշխանութիւններու դաւերէն հեռու մնալու համար՝ բարեխղճօրէն կատարած է իր քաղաքացիական ծանր պարտքը, սակայն երբեք չէ խոնարհած թրքական եաթաղանի առջեւ եւ բազմաթիւ անգամներով ընդվզած է ջարդարարներու դէմ:

Դրութիւնը աւելի լարուած վիճակ մը ունեցաւ, երբ սկսաւ

1915ի արեւմտահայութեան ջարդը: Նոյն տարուան Յուլիսի 26ին հրաման տրուեցաւ Քեսապի հայութեան տեղահանութեան կազմակերպումը: Հայերը յամառեցին անդրդուելի մնալ: Թշնամին երկրորդ անգամ յարձակեցաւ Օգոստոսի 10ին, հինգ հազարնոց զօրքի եւ թնդանօթներու ուղեկցութեամբ: Բաւականին ծանր դրութեան մէջ հայ կտրիճները ցոյց տուին հերոսական մարտնչումներ եւ թշնամին ծանր կորուստներ տեսաւ: Օգոստոսի 19ին թշնամին ձեռնարկեց աւելի խոշոր յարձակումի՝ 9 հազար զօրքով եւ հրոսակախումբերով, հրամանատարն էր Ֆախրի փաշան: Ահեղ մարտերու ընթացքին թշնամին կրցաւ ճեղքել հայոց պաշտպանութեան դիմը եւ տուաւ 1000 հոգիէ աւելի կորուստ: Թուրքերն այս անգամ դիմեցին նոր ռազմավարութեան մը պաշարեցին լեւր 15 հազար հոգիով: Կացութիւնը շատ ծանրակշիռ էր...: Սկսած էր պակսիլ գինամթերքն ու սնունդը: Հնարաւոր բոլոր միջոցները ի դերեւ ելած էին: Միակ փրկութիւնը արտաքին օժանդակութիւնն էր քրիստոնեայ երկիրներէն: Մարտանաւերու երեւման համար սպասումը շատ երկար ու տաժանելի եղաւ: Հայերը թուրքերու կողմէ եղած վերջնազիրներուն դիմադրեցին մեծ քաջագործութիւններով եւ ջախջախիչ հակահարուածներ տուին թուրք յառաջապահներուն: Իսկ մնացեալները խուճապահար նահանջեցին: Սեպտեմբերի 13-15 հերոս մուսալեռցիները (շուրջ 4000 հոգի) փոխադրուեցան ֆրանսական «Ժան տ'Արք» եւ այլ նաւեր, հաստատուելու համար եզրապատական Փոլ Սայիտ քաղաք: Անոնք ջերմօրէն ընդունուեցան եզրապատահայ գաղութի ներկայացուցիչներուն կողմէ եւ ստացան պատշաճ օգնութիւն: Այս փրկարար գործի կազմակերպումին մեծապէս օգտակար հանդիսացաւ ֆրանսական նաւատորմի մէջ ծառայող հայ սպայ Տիգրան Թէքէեանը:

Հայ ժողովուրդի ազգային ազատագրական շարժման մեծագոյն դրուագներէն մին կը հանդիսանայ Մուսա Լեւրան հերոսամարտը:

Արդարեւ այս հերոսամարտը իր գեղարուեստական ցայտուն արտացոլումը գտած է աւստրիացի գրող Ֆրանց վերֆելի 1934ին գրած «Մուսա Լեւրան 40 օրերը» վէպին մէջ: Սոյն վէպն արդէն ֆիլմի վերածուած է 1984ին, նախաձեռնութեամբ եւ բեմադրութեամբ Սարգի Մուրատեանին:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ
(200 ՀՈԳԻ ԸՆՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻՅԵՐՈՒ ԸՆՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՍԱՆՐԱՍԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝
ԸՆՈՒԱՅՆԵԼ (626) 797-7680

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 for USA
* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.
* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

«ՃՇՄԱՐԻՑ ՄՇԱԿՈՅԹԸ»

ՀՐԱՅՐ ՃԷՊԷՃԵԱՆ

Մշակույթի եւ անոր տարբեր գործօններուն ու յարաբերութիւններուն հասկացողութիւններուն հետ սկսայ ընտելանալ համալսարանի տարիներուն, Հայկազեան համալսարանին մէջ, Պէյրութ: Թէեւ մասնագիտական նիւթերս հետաքրքրական էին, բայց եւ այնպէս նոյնքան հաճելի էին միջմշակութային յարաբերութիւններու եւ սերտորոշութիւններու դասընթացները, ընդամենը՝ չորս դասանիւթերու վրայ երկարած: Ասիկա անբաժանելի մէկ մասն էր պսակաւոր արուեստից եւ գիտութեանց համալսարանական ծրագիրին, ուստի իւրաքանչիւր ուսանող պէտք էր հետեւէր այս դասընթացին՝ իր մասնագիտութեան աւելցնելով:

Գասանիւթերը կը սկսէին նախաքրիստոնէական շրջանի դիցաբանական ու արուեստի նիւթերով, բայց աւելի ուշ կը հասնէին առաջին դար եւ միջին շրջաններ՝ մինչեւ ժամանակակից մտաւոր-կրօնական, փիլիսոփայական, գրական եւ ընկերային տարբեր բնագաւառներ: Մէկ կողմէ վեր կ'առնէին քրիստոնէական աստուածաբանութենէն Աստուածաշունչի որոշ հատուածներ, բայց նաեւ՝ իսլամական քուրանի մասեր: Երեւոյթներու վերլուծումին ընդմէջէն կը սորվէինք եւ կ'անդրադառնայինք տարբեր հաւաքականութիւններու մտածողութեան, ապրելակերպին ու կենցաղին: Բայց այն, ինչ որ հետաքրքրական կը դարձնէր դասապահերը, այն էր, որ նիւթերու առնչութեամբ կը կատարէինք դասարանային «բաց» վերլուծումներ, որոնք յաճախ կը վերածուէին բանավէճերու՝ ներառելով այդ օրերու մեր երիտասարդական եռանդն ու կորովը, չբացառելով նաեւ երիտասարդական տաքարիւնութիւնը եւ նոյնքան անհանդուրժողականութիւնը...

Հաւանաբար պէտք էր ընդգծելինք

հանդուրժողականութիւնը՝ այդ տարիներուն եւ այդ դասընթացներուն ընդմէջէն: Հայկազեանի մէջ կար հայր՝ իր կուսակցական-միութենական եւ եկեղեցական-համայնքային տարբերութիւններով, այս շեշտուած իրողութիւն էր հայկական համալսարանի միջավայրին մէջ: Բայց կար նաեւ ոչ հայր՝ իր քրիստոնէայ եւ իսլամ յարանուանական պատկանելիութեամբ, ասոր վրայ պիտի աւելնային կուսակցական ու քաղաքական հակումները, որոնք բազմազան էին, կային նաեւ պաղեստինեան եւ այլ քաղաքացիներու առկայութիւնը: Այս բոլորը կը կազմէին մէկ մեծ խճանկար մը: Թէեւ 70-80-ական թուականներուն լիբանանեան պատերազմի թոհուբոհի տարիներն էին, բայց եւ այնպէս բոլորս այդ տարբերութիւններով կ'ապրէինք միասին համալսարանի շրջափակին մէջ, անկախ «դուրս»-ի եւ անոր «քսոս»-ի տարբեր իրավիճակներէն ու իրականութիւններէն...

Ապրեցանք միասին տարբեր մտածողութիւններով, ապրելակերպերով եւ կենցաղներով: Սորվեցանք, թէ ինչպէ՞ս կրնանք ստանալ տեղեկութիւն, բայց նաեւ՝ փոխանցել զայն: Ականատես եղանք տարբեր կենցաղներու, անոնց հոլո-

վոյթներուն, ենթադրութիւններ կատարեցինք ու տարբեր տեսակի փորձառութիւններ ապրեցանք: Այս մշակույթի դասապահերուն ընթացքին եւ անոր վերլուծումներուն ընդմէջէն «ստեղծուեցաւ» կառուցմը, ուր իւրաքանչիւր կենցաղն ու միտք դրուեցաւ հաւաքական արժէքի պարունակին մէջ, որուն միջոցով իրարու կը կամրջուէին փոխհասկացողութիւններն ու հանդուրժողականութիւնը:

Այս մշակութային երկիւստութեան եւ կամրջումին ընդմէջէն թէեւ դրուատիքի արժանացաւ իմս, բայց նաեւ կարելիութիւն ստեղծուեցաւ անցնելու անկէ անդին ու տեսնելու դիմացիները՝ «ուրիշ»-ը, որ նաեւ արժէք է, եւ գոր պէտք է հասկնալ: «Ուրիշ»-ը տեսնելով՝ սորվեցանք հաղորդակցութիւնը, անոր ընդմէջէն՝ «ուրիշ»-ին պայքարը, յոյզերը, յոյսերը, միտքերը:

Եւ այդ «ուրիշ»-ը հասկնալու եւ անոր հետ ապրելու երթը կը փորձեմ շարունակել եւ ապրիլ մինչեւ օրս: Արաբական ծոցի մէջ անցուցած ասպարէզային իմ կեանքս պէտք է նկատել աւելի քան հարիւր տարբեր մշակույթ, լեզու եւ ինքնութիւն համախմբած դաշտ մը: Այդ բոլորին հետ պէտք է ստեղծել մշակութային յարաբերութիւններու եւ հասկացողութիւններու համոյթ մը, որպէսզի ստեղծուի մարդկային պիտանի պատմութիւնը:

Բռնագրաւուած Կիպրոսի շրջանի թրքական Նիկոսիոյ մամուլէն եկաւ լուրը: Նոյն շրջանի Մերձաւոր Արեւելք համալսարանը որոշած է Նիկոսիոյ Ս. Աստուածածին հայկական եկեղեցին վերածել ու գործածել իբրեւ «մշակույթի կեդրոն»:

Ս. Աստուածածին եկեղեցին հիմնուած է 1308 թուականին: 1504-էն սկսեալ եկեղեցին դարձած է հայութեան սեփականութիւնը եւ մինչեւ 1963 եղած է հայ համայնքի հոգեւոր ու ազգային ամբողջ՝ իր կողքին ունենալով Ազգային Մելքոնեան-Ուզունեան նախակրթարանը եւ Յեղասպանութեան յուշակոթողը: Հայր ապրեցաւ, սորվեցաւ եւ սորվեցուց այս շրջանին մէջ մինչեւ 1963, երբ յունական եւ թրքական բախումները պատճառեղան գաղութներու տեղափոխութեան: Իսկ 1974-ի թրքական ներխուժումով բռնագրաւուածի տակ մնացին հայկական եկեղեցին ու դպրոցը, եւ այդպէս է մինչեւ օրս:

Նկատի ունենալով եկեղեցու պատմական ժառանգութիւնը, Միացեալ ազգերու կազմակերպութիւնն ու անոր յարակից միութիւններ 2009 թուականին ձեռնարկեցին եկեղեցական կառուցի վերաշինութեան եւ բարեկարգման՝ նկատի ունենալով երկար տարիներու վրայ երկարած անոր լքեալ ու փլատակ վիճակը: Եւ այսօր վերանորոգուած հայկական եկեղեցին որոշուած է տրամադրել իբրեւ «մշակութային կեդրոն» գործածուելու համար:

Պատմութիւնը դարձեալ ինքզինք կը կրկնէ...

Եթէ բռնագրաւուած է շրջանը, բռնագրաւուողը կը վարուի այնպէս, ինչպէս որ կ'ուզէ եւ կը փափաքի: Թերեւս նոյնիսկ պահ մը մենք զմեզ միխթարենք «երկու չարեաց փոքրագոյնը» հասկացողութեամբ եւ փորձենք տեսնել, թէ աւելի լաւ է, որ դառնայ մշակույթի կեդրոն, քան... վերջապէս, այս վերջինը փորձուած ու ապրուած իրականութիւն է Արեւմտահայաստանի եւ պատմական Կիլիկիոյ շատ մը սրբատեղիներու համար:

Մերձաւոր Արեւելքի համալսարանի ինստիտուտի վարիչ Իրֆան Կիւնսելի կը շարունակէ՝ ըսելով. «Մենք որոշեցինք եկեղեցին դարձնել մշակույթի կեդրոն, ուր շատ մը մշակութային ձեռնարկներու միջոցով շրջանին պիտի տանք տարբեր դիմագիծ»:

Եթէ բռնագրաւուող իր բռնագրաւած կառուցին հետ կրնայ վարուիլ այնպէս, ինչպէս որ կ'ուզէ, կառուցին իսկական սեփականատէրը, թէկուզ հեռուէն, մէկ հիմնական հարցում մը կ'ուղղէ. «Ի՞նչ տեսակ մշակույթ եւ դիմագիծ պիտի տաք այս շրջանին»:

Մշակույթ մը, որ ճշմարիտ է՝ հիմնուած փոխյարաբերութիւններու եւ հասկացողութիւններու յատկագրի վրայ, եւ ուր կարելի կ'ըլլայ տեսնել քեզմէ զատ նաեւ «ուրիշ»-ը՝ անոր տագնապը, կենցաղը ու տակաւին...

Աննա Քաթրինան՝ իտալացի ընկերամշակութային յարաբերութիւններու մասնագէտը, մշակույթը կը նմանցնէ սառցալեռան: Ան կ'ըսէ. «Ճիշդ այնպէս, ինչպէս կայ սառցալեռան վերի գագաթը, որ կ'երեւի, նոյնպէս մշակույթի երեւելի մասերը կարելի է տեսնել, ինչպէս՝ դրսեւորումը, անուն, արտաքին... Բայց կայ սառցալեռան ընդատակեայ մասը, որ չ'երեւի: Նոյնպէս կայ մշակույթին չ'երեւող բաժինը՝ արժէքը, հաւատամքը, սովորութիւնը, փորձառութիւնը, տագնապը, ներշնչումը, որոնք պէտք է պղծել, ապրիլ, սորվիլ ու հասկնալ, թէ ի՞նչ են անոնք եւ ինչպէ՞ս կ'ըլլան»: Աննա կ'եզրակացնէ. «Այս


գործընթացն է, որ մեզի կը սորվեցնէ աւելի ատակ ըլլալ համաշխարհային ու համամարդկային իրավիճակներու եւ կանխել անհասկացողութիւններն ու այն բոլորը, որ կը խաթարէ յարաբերութիւնները»:

Խօսք մը եւս՝ Իրֆանին. «Ճշմարիտ մշակույթն է, որ կը գոյատեւէ: Եթէ մշակույթին երեւցած մասը յստակ է, այս պարագային՝ եկեղեցին, շէնքը եւ անունը, բայց տակաւին կայ սառցալեռան չ'երեւող մասը, այսինքն՝ հայ եկեղեցու հայկական մշակույթի չ'երեւցած մասը: Պէտք է օգնէք ձեր աշակերտներուն եւ դուրս բերէք այս չ'երեւցած մասը՝ «ուրիշ»-ը, եւ անոնց սորվեցնէք նոյնինքն այս եկեղեցու իմա ձեր մշակութային կեդրոնին, մշակույթը եւ անոր կորիզը եղող հաւատքը: Հայուն հաւատքը, որ տարիներու վրայ երկարած, ամուր կեցած ու գոյատեւած էր, նոյնիսկ երբ ան ահաբեկուած ու ցեղասպանուած է: Եւ հարց տաք, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս եղաւ այդ մէկը: Եւ այս բոլորին հետ հաղորդակցելով է, որ պիտի կարենաք տեսնել իրականութիւնը եւ ընդունիլ ձեր պատմութեան մեծ սխալները:

«Եւ վերջապէս, մշակույթի կեդրոնը կը դառնայ ճշմարիտ, երբ ան կ'օժանդակէ պատմութեան շարունակականութեան, եւ ոչ՝ նոյնինքն պատմութեան կրկնութեան: Հայուն հաւատքին կուտանը կը կայանայ նոյնինքն այս իրականութեան մէջ, որովհետեւ ան՝ հայը, հաւատաց իր հաւատքին ու մշակույթին շարունակականութեան ու տակաւին կը հաւատայ:

«Եթէ Ս. Աստուածածին եկեղեցին պիտի վերածէք մշակույթի կեդրոնի, ջատագովը եղէք գէթ ձեր աշակերտներուն սորվեցնելու ճշմարիտ մշակույթը... եւ անպայման կերտեցէք ճշմարիտ դիմագիծը»:

ԼՈՅՍ ՏԵՍԱԲ ՅՈՒՇԱՐԶԱՆ ՈՒՍՈՒՑՉԱՊԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ ԺԱՄԿՈՉԵԱՆԻ



Մրտաբուխ ցուցով գիրքէն օրինակ մը ստանալու համար հեռաձայնել՝
(626) 797-7680 կամ
(818) 429-2322 քիւերուն

Լաքսակազմ, մաքուր տպագրութեամբ, 580 էջերէ բաղկացող գիրքը: Ժողովածուն լոյս ընծայուած է Բենիամին Ժամկոչեանի նախկին սաներուն կողմէ, որպէս երախտիքի տուրք անոր ծննդեան 115 ամեակի առիթով:

Յուշարձան ժողովածուն, նաեւ իր մէջ կ'ամփոփէ իրենց սիրեցեալ տնօրէնի կրթական, մանկավարժական, ազգային-մշակութային, Պէյրութի Սահակեան վարժարանի կէս դարեայ կենսապատումը:


Յուշարձան ժողովածուն կը մատուցէ Բենիամին Ժամկոչեանի ժամանակիցներուն յուշերու ծաղկաբաղը:

ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԸ ԸՍՏ ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԻ ԾՆՆԴԵԱՆ 70- ԱՄԵԱԿԻ ԵՒ ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ԶՐԱՏԱՐԱԿՄԱՆ ԱՌԻՊՈՎ

«Մասիս»-ի խմբագրութիւնը կը շնորհաւորէ Ազատ Մաթեան գրողի ծննդեան 70 ամեակը մաղթելով քաջաոգիւտութիւն եւ նորանոր յաջողութիւններ: Ներքոյ կ'ընկերակցուին գրողութիւնը (ինքնակենսագրութիւն) արտատպուած է Թեհրանի «Յոյս» երկչափաթիւքով (համար 137) յապաւումներով:

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ

Ծնունդը եմ 1942ին Թեհրանում, ծնողներս՝ Ծատուր եւ Սապեա Մաթեաններ իրանի Չարմահալ գաւառի վերին Գոնարք գիւղից... Թեհրանից ինչ որ բաներ չիշում եմ, բայց այնտեղ ապրած իմ կեանքի առաջին չորս-հինգ տարիները բաւական չէին, որ Թեհրանը դառնար իմ քաղաքը: Սկսուեց 46-ի ներգաղթը, մենք էլ էինք «գրուած», մեզ հերթ էր հասաւ, Բայց Հայաստանը մեխուեց իմ ուղեղում, կամ աւելի բանաստեղծական, իմ հոգին մեխուեց Հայաստանի խաչին: Հայաստանը դարձաւ ինձ համար կարօտի ու երազանքի հեքիաթային եզերք:



Սորբոնի համեմատական գրականութեան ամբիոնի հայագի վարիչ Պրոֆ. Շարլ Դեղէնեանը: Առաջին տարին աւարտեցի յաջողութեամբ: 1972-ի Յուլիանի, այսինքն ուղիղ չորս տարի յետոյ վերադարձայ իրան, որտեղ ինձ առաջարկ եղաւ աշխատանքի անցնել Սպահանի համալսարանում... Այս տարի լրացաւ ճիշտ քառասուն տարին, որ դասաւանդում եմ այնտեղ:

Ամուսնացել եմ Նոր Պուղաչում 1973 թվին Արաքս Խուղա վերդեանի հետ, ունեմ մէկ տղայ, որի անունը դրել եմ Մաթիա:

ՀԱՅԱՍՏԱՆ 1991- 1994

Հայաստանը ինձ համար հոգեւոր իրողութիւն դարձաւ հէնց 46-ի ներգաղթից սկսած, ես, որ անվերջ որոնում եմ ամենավերացական բաների նիւթական հիմքը, մինչեւ օրս էլ չեմ կարողանում հասկանալ, թէ ինչպե՞ս Հայաստանը եկաւ ու բնակուեց իմ մէջ չորս տարեկանում... Փարիզն էլ չդարձաւ իմ քաղաքը, գուցէ հենց այն պատճառով, որ ես ունէի իմ հոգեւոր հայրենիքը՝ Հայաստանը, որն էլի ինձանից աննկատ ստացաւ «սովետական» վերադիրը...

Այդուհանդերձ, առաջին անգամ Հայաստանում եղայ 1991-ին, որպէս ԻԱՄՄ-ի պատուիրակութեան անդամ: Հրաւիրողն էր «Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէ»-ն, մեզ ընդունեց կոմիտէի առաջին տեղակալ՝ ընկեր, եթէ չեմ սխալուում, Ղազարեանը... Տպաւորութիւններս շատ հակասական էին, բայց ընդհանուր առմամբ մեծ, շատ մեծ էր ուրախութիւնս: Ես իմ կարօտների երկրում էի, որը հող էր, ծառ էր, տուն էր, մարդիկ էին: Երեւանը իմ երեւակայածից աւելի գեղեցիկ էի տեսնում:

Երկրորդ անգամ Հայաստան գնացի 94.6.23 կնոջ Արաքսի հետ: Դա մութ ու ցուրտ տարիներից մէկն էր, եւ մենք առիթը ունեցանք այն ճաշակելու...

Հայաստանում ունեցայ այլ ծանօթութիւններ ու շփումներ, որոնց մասին հնարաւոր չէ խօսել այս նեղ շրջանակում, կարող եմ ասել միայն, որ հենց այդ ամիսներին ծնուեցին իմ չորս երկար բանաստեղծութիւնները՝ «Երեւան 93», որը պիտի լինի 94, ես թւականը շփոթել եմ, «Վտարանդին», «Ուխտաւորները», «Այնուամենայնիւ»:

ՉԱՐԵՆՑ

Բացարձակապէս անգրագէտ մայրս, իմ շատ փոքր հասակից արտասանում էր «Ես իմ անուշ...»ը իր գրեթէ անաղարտ պահանջած գիւղական հնչերանգով: Հասկանալի է, ոչ նա գիտէր, եւ ոչ էլ ես, թէ դա ու՞մ բանաստեղծութիւնն է... Չարենցը յեղափոխական էր եւ բարձրաձայն յայտարարում էր այդ մասին, իսկ դա լիովին համընկնում էր իմ այդ օրերի տրամադրութեանը: Կար, իհարկէ, նաեւ խօսքի հմայքը... Լեռը ճանաչելու համար հարկաւոր է մօտենալ նրան, մագլցել բարձունքները... 1983-ին Թեհրանում հրատարակեցի իմ «Ո՞վ է Չարենցը» գրքոյկը, այն անուանելով ներածութիւն...

ԱՆԱՊԱՏԻ ԾԱՂԻԿՆԵՐԸ ԵՒ ԴՐԱՆԻՑ ԱՌԱՋ

Բանաստեղծութիւններ սկսեցի փորձել 16-17 տարեկանում... Առիթը ներկայացաւ, որ ծանօթանամ «Նոր էջ»-ի շրջանակի հետ... Դաւթարս տուեցի Դեւին, որի մէջ նշումներ է կատարել. Լաւ, վատ, բաւարար: մի քանի բան ուղարկեցի Բեյրութի «Շիրակ» ամսագրին, որոնք տպագրուեցին 66-67 թուերի երեք համարում... Այլեւս ոչ մի տեղ ոչ մի բան չտպագրեցի, մինչեւ «Անապատի Ծաղիկներ» ժողովածուն 1981-ին: Այստեղ արդէն ես իմ ասելիքն ունէի, եւ ասել եմ, վախենում էի ասել, որովհետեւ ասելիքս դառն էր ու յոռետեսական... Գրքի միակ լուրջ արձագանքը լսելի դարձաւ տասնչորս տարի յետոյ: Գրախօսողը Վահէ Օշականն էր, «Ազգակ»-ում, որը, Տէրեանի խօսքերով ասած, լսել էր տազնապները իմ հոգու, եւ բաւականին բարձր էր գնահատել իմ բանաստեղծութիւնը: Նորովին էլ, շատ աւելի ուշ, երբ ծանօթացանք, ասաց, որ գիրքը ժամանակին հետաքրքրել է Թեհրանի երիտասարդ բանաստեղծներին:

ՉԸՆԴՀԱՏԻՈՂ ԵՂԱՆԱԿ

Երկրորդ՝ «Չընդհատող եղանակ» ժողովածուն բոլորովին այլ բնույթի է: Այն ամբողջովին քնարական շնչով է գրուած... Գիրքը լոյս տեսաւ Երեւանում, 1995-ին հազար օրինակով, որից մի 200-ը իմ ձեռքը հասաւ... Այս ժողովածուի առաջաբանը գրել է Գեորգ Էմինը, գրքի մասին գրեցին նաեւ Սուրէն Դանիէլեանը, Մետաքսէն եւ Վահէ Օշականը: Գեորգ Էմինը գրեց. «Հնդիկ մեծ բանաստեղծ Ռաբինդրանաթ Թագորի... «Պարտիզային» գրքից յետոյ ես այսքան մաքուր, գեղեցիկ-վեհացնող եւ միաժամանակ մտերմիկ ու յուզիչ սիրոյ բանաստեղծութիւններ չէի կարդացել...»:

ԱՇԽԱՐՀԻ ԳԵՐԲԸ

Սա իմ բանաստեղծութիւնների երրորդ ժողովածուն է: Այն, հակառակ նախորդ երկու գրքերին, տարաբնույթ է: Գիրքը կազմուած է երեք գլխաւոր մասերից՝ ցարդ գրքով չհրատարակուած գործեր եւ նախկին երկու գրքերից ընտրուած կտորներ: Մի տեսակ ստուգատես աւելի քան քառասուն տարուայ իմ բանաստեղծական մտածո-

ղութեան...

ԾԱՏՈՒՐՈՂԻ

Իմ երգիծական մականունն է: Այս ժանրի մէջ գրել եմ նաեւ այլ մականուններով, բայց իբրեւ թէ թաքուն եմ պահում: Ծատուրը հօրս անունն է: Այս մականունն հետ հետաքրքիր բան պատահեց: «Յոյս»-ը տպագրեց իմ «Մերն ուրիշ է» բանաստեղծութիւնը, որը նախապէս տպագրուած էր Ծատուրի ստորագրութեամբ, եւ որի վերջին տան մէջ ըստ աշուղական բանաստեղծութեան աւանդոյթի կար նոյն անունը, բայց «Յոյսը» թիւրիմացաբար այն տպագրեց իմ իսկական անունով, այսպիսով կասկածողներին էլ յայտնի դարձաւ Ծատուրի ինքնութիւնը:

Իմ «Ամերիկացի Փեսացուն» 50 բեմադրութիւն է ունեցել Պուղաչում, Շահինշահում եւ Թեհրանում, բեմադրութիւնը դադարեցուել է հնարաւորութիւնների սղութեան պատճառով: 5 բեմադրութիւն եւս ունեցել է ԱՄՆ-ում:

ՆԱՐԵԿԱՑԻ

Արդէն ասացի, որ «Նարեկ»-ի թարգմանութիւնը սկսել եմ Սպահանի համալսարանում սովորելու տարիներին Դր. Մեսրոպ Բալայեանի առաջարկով: Լսել էի այդ գործի դժուարութեան մասին, բայց լսելը բաւական չէ ճիշտ պատկերացում կազմելու համար, որեւէ բանի մասին: Ինձ գործի մղողը մանկուց եկող այն գուցէ եւ մեծամիտ համոզումն էր, որ որոշ իմաստով ինձ ամէն ինչ յաջողուած է:

Իսկ թէ ի՞նչ է ինձ համար «Նարեկ»-ը, կասեմ հետեւեալը: Եթէ Խորենացու «Պատմութիւնը» մեր աշխարհիկ պատմութեան գիրքն է, ապա Նարեկացու մատեանը մեր հոգեւոր պատմութիւնն է: Եթէ Խորենացու պատմութիւնը աւարտուած է ողբով, ապա Նարեկացու մատեանը ամբողջութեամբ ողբ է: Այս տխուր տրամաբանութեամբ մեր երրորդ գիրքը հաւանաբար պիտի համարել Արեւիկայի «Ողբ Հայաստանի»-ն, եւ սա մեզ պիտի լուրջ մտածել տայ, մանաւանդ, երբ այդ երեք գրքերի կողքին դնենք նաեւ Ե. Չարենցի գիրք ճանապարհին: Ես այլ առիթով էլ ասել եմ, որ Նարեկացու «Մատեան Ողբերգութեան»-ը Անիի անկման մարգարէութիւնն է: Այն ժամանակ, երբ Անին հազար ու մէկ եկեղեցիների քաղաք էր, Նարեկացին ողբում է մեր բարոյական անկումը, ինչը եւ շատ չանցած յանգեցրեց Անիի վաճառքին:

ՉՈՒՋԻ

2010- ի գարնանը Սպահանի ժամանակակից արուեստի թանգարանում բացուեց իմ փայտեայ քանդակների ցուցահանդէսը «Չուչի» անունով: Սա կարելի է ասել իմ «հոբին» է, հայավարի ասած՝ պարապ վախտի խաղալիքը, նկարիչ դառնալու իմ երազի իւրովի իրականացումը: Զանազան կենդանական եւ մարդկային ֆիգուրներ եմ պատրաստում ամբողջովին չմշակուած փայտի կտորներից...

Շաբ.ը էջ 20

VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE

THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES

ԳՐԱԴԱՐԱՆԻՍ ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐԸ 18-ՐԴ ԵՒ 19-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ ՏՊՈՒԱԾ

Խ.Ծ. Ուրբաթ, 14 Դեկտեմբեր, 2012, երեկոյեան ժամը 7:30իմ, Կլեմտյէլի Կեդրոնական Գրադարանին մէջ, Դոկտ. Զաւէն Ա. Քինյ. Արգումանեան համալսարանի դասախօսութեամբ մը, գոր կը ներկայացնեն մեր ընթերցողներուն անոր շահեկանութեան համար:

ԴՈԿՏ. ԶԱՒԷՆ Ա. ՔԻՆՅ. ԱՐԶՈՒՄԱՆՆԱՆ

Յիւնամեակ մը անցեր է արդէն եւ իմ անձնական գրադարանին մէջ ի պահ կը մնան հայերէն ձեռագիր մը եւ 28 հնատիպ հայերէն գիրքեր: Կը ներկայացնեմ զանոնք տպագրուած թուականի եւ վայրի կարգով՝ Կ. Պոլիս, Վենետիկ, Վաղարշապատ, եւ Երուսաղէմ, որոնք իրենց հնութեամբ եւ բովանդակութեամբ պատմական եւ կրօնական կարեւոր արժէք կը ներկայացնեն: Անոնց մէջ կան պատմագրութիւններ, մեկնութիւններ, շարակնոցներ, հաւատքի եւ Ս. Գիրքի վերաբերեալ դասագիրքեր, գրաբար լեզուի քերականութիւն, բառարաններ, եւ այլ բովանդակութեամբ գիրքեր 18-րդ դարէն սկսեալ, ոմանք նոյնիսկ իրենց հին կազմով, տախտակեայ կաշեպատ:

Յաճախապատում - 1737 Մայիս 20 Կ.Պոլիս. Կը բովանդակէ Ս. Գր. Լուսաւորչի «յոզնապատում» 23 ձառերը: Յիշատակարանին մէջ գիրքը «հոգեւոր ճանապարհի ընթացութիւն» կը կոչուի իր ծախսով Յակոբ ամուսնան, հաւատարիմ պաշտօնատար Ս. Յակոբայ Վանքին, տպագրել տուած է Կ. Պոլիս մէջ քանի որ Երուսաղէմ ակեւ ռէ՝ 1833-ին առաջին տպարանը հաստատուեցաւ օրուան Չաքարի Կոփեցի Պատրիարքին օրով:

Փիլիսոփայութիւն երկու հատոր - 1750 Վենետիկ. Թարգմանութիւն լատիներէնէն Միլիթար Աբբասօր աշակերտ՝ Կ. Պոլսեցի Վրթանէս Վրդ.ի կողմէ: Հատորները կը պարունակեն 13-երորդ դարու լատին աստուածաբան Ս. Թովմաս Ագուինացիի վարդապետութիւնը: Անկէ դար մը առաջ նկատելի է որ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետը Ագուինացիի համագոր աստուածաբանը հանդիսացաւ Հայ Եկեղեցւոյ ուր եւ փայլեցաւ մեծ փառքով դար մը առաջ:

Զեռաց Շարական - 1790 Նոյեմբեր 11 Կաշեկազմ Կ. Պոլիս. «Ի Վեհափառութեան Գերագահ Աթոռոյն Սրբոյ էջմիածնի Տեառն Դուկատու Ամենայն Հայոց Կաթողիկոսի», եւ հրամանով արքայանիստ քաղաքին Կ. Պոլսոյ Պատրիարք Չաքարի ազգասէր եւ կարգացեալ աստուածաբան Պատրիարքին: Տպուած է 1790 Նոյեմբեր 11-ին: Կը յիշուի հանգուցեալ Աստուածատուր եւ որդին Յովհաննէս եւ գործակից տպագրիչ Պողոս եւ Յարութիւն եղբայրները:

Յովհաննէս Իմաստասէր Օձնեցի Հայրապետի ՃԱՌ Ընդդէմ Երեւութեանաց - 1807 Վենետիկ. Հրատարակողն է Միլիթարեան վարդապետներէն Հայր Մկրտիչ Վրդ. Աւգերեան: Երեւութեաններ աղանդաւորներ էին որոնք քրիստոնէութեան հիմքը առ երեւութիս կը հաւատային՝ մեր ժողովուրդն անտեսելով պատմական հիմքը: «Առ ճշմարտասէրս» վերնագրուած յառաջաբանին մէջ

հրատարակիչը անճշմարիտ կերպով մեր Օձնեցի Հայրապետին կը վերագրէ Քաղկեդոնի ժողովին հաւատարիմ ըլլալը, եւ իբր թէ սոցն գործը սքանչելի ապացոյց մըն է Հայրապետի ողջմտութեան:

Բռնագրօսիկ եւ անճիշդ վերագրումը Օձնեցի Հայրապետին տգիտութիւն է առ նուազն երբ նկատի ունենանք Հայրապետին հաւաքած առաջին «Կանոնագիրք Հայոց» ժողովածուն, ուր Հայ Եկեղեցւոյ ժողովներ միշտ հերքած են Քաղկեդոնի որոշումները միանգամ ընդմիշտ: Օձնեցի Հայրապետ Հայ Եկեղեցւոյ իսկութեան եւ անկախութեան պաշտպան կանգնած է, մերժելով առաջին երեք Տիեզերական ժողովներէն յետոյ եկած ամէն ժողովի յաւելումները:

Վարժութիւն Մանկանց - 1831 Վենետիկ. Հեղինակն է Հ. Մինաս Վրդ. Բժշկեան եւ գործն ալ հայերէն լեզուի նախնական դասագիրք մըն է այս, սկիզբը հայերէն երեք տեսակ տառերու օրինակներով՝ նոտրգիր, բոլորգիր եւ երկաթագիր: Ապա կը բովանդակէ հայերէն լեզուի նախնազոյն տարերք: Գիրքը երկու բաժին ունի՝

1. Այբբենական կարգով բարոյախօսական խրատներ, եւ
2. բարոյական գործերու վարժութիւն: Օրինակ՝ ԱՅԲ «Արիստոտէլ փիլիսոփային հարցոցին թէ ստախօսները ի՞նչ վաստակ ունին: Պատասխան տուած թէ անոնց չհաճ այն է որ ճշմարիտ ալ ըսեն, մարդ իրենց չի հաւատար»:

Մեկնութիւն Ժամակարգութեան - 1840 Կ. Պոլիս, Տպարան երեք որդիներու Պօղոս Արապեան Ապուլէիցիի. Հեղինակն է Խոսրով Անձեւացի Եպիսկոպոս որ մանրամասն մեկնաբանած է Հայ Եկեղեցւոյ ժամերգութիւնները՝ Գիշերային, Առաւօտեան, Ճաշու եւ Երեկոյեան: Առաջին հրատարակութիւնն է այս հատորը որ տող առ տող կը բացատրէ մեր առօրեայ ժամապաշտութիւնները, 10-րդ դարուն՝ հնագոյն եւ ամենէն վաւերական մեկնութիւնը ըլլալով:

Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի Ներսէս Լամբրոնացի Տարսնի Արքեպիսկոպոսին - 1842 Երուսաղէմ. Երկու տարի ետք, այս անգամ Երուսաղէմի մէջ, 1842-ին լոյս կը տեսնէր առաջին տպագրութիւնը սոցն Պատարագամտոյցին ամբողջական մեկնաբանութեամբ՝ տող առ տող Երուսաղէմի տպարանի հիմնադիր Չաքարի Կոփեցի Պատրիարքի ձեռամբ եւ հեղինակութեամբ Ներսէս Քամբրոնացիի: «Յառաջաբանութիւն» վերնագրին տակ կ'ըսուի թէ Լամբրոնացիի գիրքը տպուած է «Հայաստանեայց Կաթողիկէ Մայր Եկեղեցւոյ բարեկարգ պայծառութեան համար»: Ներսէս Արքեպիսկոպոս 12-րդ դարուն յայտնի Կիլիկիոյ Տարսն քաղաքի Առաջնորդն էր որ 24 տարեկանին գրեց ծաւալուն այս մեկնաբանութիւնը՝ վասն զի բազմազան զանազան նորահար աղանդաւորք եւ սփռեցան յամենայն

տեղիս», ինչպէս ինք կը գրէ: Ետին ունի մեզի բոլորովին անծանօթ երկարաշունչ չորս խրատներ եկեղեցագիտական եւ բարոյագիտական բովանդակութեամբ

Պատմագրութիւն Յովհաննու Կաթողիկոսի Ամենայն Հայոց Դրասխանակերտցոյ - 1843 Երուսաղէմ. Տարի մը անց, Երուսաղէմի Հայոց Ս. Յակոբեանց Պատրիարքարանի տպարանէն լոյս տեսած երկրորդ գիրքն է այս, տպարանի հիմնադիր Չաքարի Պատրիարքի ձեռքով: 10-րդ դարու յայտնի Բագրատունեաց շրջանի ամենէն վաւերական Հայոց Պատմութիւնն է, գրուած Յովհաննէս Դրասխանակերտցի Հայոց Կաթողիկոսի կողմէ: Չաքարի Պատրիարքի «Յայտարարութեան» մէջ կը կարդանք:

«Այժմ տեսնելով մեր եւ ազգիս գաւակներուն ջերմ փափաքը մեր պանծալի հին գրականութեան վերաբերեալ, փութացինք վսեմ այս պատմագրութիւնը հրատարակել, գոր «բարեացապարտ հոգեմեծ» կը կոչէ, եւ Կաթողիկոս հեղինակն ալ՝ «Յովհաննու Մայրազոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց»: Վերջերս Հայր Գրիգոր Մագսուտեանը անգլերէնի թարգմանեց լրիւ պատմագրութիւնը:

Պատմութիւն Սեբէոսի Եպիսկոպոսի Ի Հերակլն - 1851 Կ. Պոլիս. 7-րդ դարու այս պատմագրութիւնը Սեբէոս Բագրատունի Եպիսկոպոսին կողմէ գրուած միջազգային բացառիկ արժէք ունեցող աղբիւր մըն է, ժամանակակից պատմութիւնը Բիւզանդիոնի Հերակլ Կայսեր, արաբներու արշաւանքներուն եւ Հայաստանի դիմադրութեան համադրեալ բովանդակութեամբ: Հրատարակուած է Միհրդատ Տ. Աստուածատուրեանի կողմէ՝ Ներսէս Աշտարակեցի Ամենայն Հայոց Կաթողիկոսի հրամանով: Զեռագիրը գրուած է Բագրեշի յայտնի Յովհաննու Կարապետ Ամրտոլի վանքին մէջ Գրիգոր անուն քահանայի ձեռքով:

Զեռաց Շարական Հոգեւոր Երգոց Սուրբ եւ Ուղղափառ Հայաստանեայց Եկեղեցւոյ - 1853 Կ.Պոլիս. Վերեւ նկարագրուած Կ.Պոլիս տպուած ակեւ ին 1790 թուականի Շարակնոցին յետագայ տպագրութիւնն է այս, կաշեպատ եւ քիչ մը ակեւ ծաւալուն, երկուքն ալ խազագրուած ու ականդական եղանակները ճշգրիտ արձանագրուած: Յաւելեալ սա տեղեկութիւնը ունի 879-րդ էջին վրայ. «Ժամանակագրութիւն շարականներու հեղինակ սուրբ վարդապետներուն»՝ թիւով 23, սկսեալ Ս. Մահակ Պարթեւ Հայրապետէն (426 թ.) մինչեւ վերջին հեղինակը՝ Կիրակոս Վրդ. Երզնկացի (1478 թ.): Կը կարծեմ թէ սոցն ժամանակագրութիւնը հեղինակներու անուններով առաջին անգամն է որ աստուգուած է այս Շարակնոցին մէջ: Շարակնոցը տպուած է Կ.Պոլսոյ Յովհաննէս Միւհէնտիսեանի տպարանին մէջ:

Տարերք Հայերէն Քերականութեան Դպրատանց Տղոց Համար - 1856 Վենետիկ Ս. Ղազար. Հոգեւոր դպրանոցներու տղոց համար սոցն քերականութիւնը յօրինած է Հայր Արսէն Բագրատունի: Հեղինակը Յառաջաբանին մէջ կը գրէ. «Մեր օրերն ազգիս իր լեզուն աղէկ սորվելու մեծ փոյթը տեսնելով եւ յազգասիր-

րաց ստիպեալ, սա համառօտ քերականութիւնս հանեցինք մեր նոր կարգով ակեւ զարգացելոց համար շինած ընդարձակ գրաբար քերականութեան»:

Ըստ երեւոյթին մեր ժամանակներու քերականութեան դասագիրքերուն նախակարապետն է այս հատորը, որուն հետեւած են մեզի ծանօթ քերականութեան բոլոր դասագիրքերը: Կատարելագոյնը անոնցմէ մեզի ծանօթ Եղիշէ Դուրեան Պատրիարքի «Ընթացքի Գրոց Բարբառ»-ներու լրիւ շարքն է:

Մատեան Ողբերգութեան Սրբոյ Հօրն Մերոյ Գրիգորի Նարեկայ Վանից Վանականի - 1858 Կ. Պոլիս. Ընտիր տպագրութիւն իր սկզբնական կաշեկազմ վիճակով: Տպուած նոյն Յովհաննէս Միւհէնտիսեանի տպարանին մէջ: Հիւսնալի տառատեսակի եւ բացառիկ հայերէն տպագրութեան նմոյշ մըն է այս ՆԱՐԵԿԱ: Ունի մեզի անյայտ յաւելումներ 50 էջերու մէջ: Առաջինը՝ «Տէր Առաքէլ վարդապետի ասացեալ ներբողեան ի Ս. Գրիգոր Նարեկացին» է, այբբենական յանգաւորումներով: Կը սկսի այսպէս «Արփիական լոյս երկնային. Յիսուս Քրիստոս Հօր Միածին. Լցեր շնորհիւ քո անքննին. գտուր Գրիգոր Նարեկացին»:

Իսկ վերջին համարը Ք տառով, կ'ըսէ. «Քեւ զՔրիստոս փառաբանեմք. ընդ Հօր հոգով երկրպագեմք. Երրորդութեանն փառս վերերգեմք. աստուածութեամբ մեր դաւանեմք»:

Այս գրական գոհարը կը պակսի յետագայ ՆԱՐԵԿԱ-ներու հրատարակութեանց մէջ: ՆԱՐԵԿԱ վերջաւորութեան կայ նաեւ բառարան մը յատուկ մատեանին երեք լեզուներով՝ գրաբար, աշխարհաբար, եւ թրքերէն:

Տարեգիրք Սմբատ Սպարապետի Հայոց Որդի Կոստանդեայ Կոմսի Կոռիկոսի - 1859 Փարիզ. Կարապետ Վրդ. Շահնագարեանց 1859-ին, ծանօթագրութիւններով հրատարակած է Սմբատ Գունդաստապլի սոցն Տարեգիրքը Փարիզի մէջ: Յառաջաբանին մէջ ան կը գրէ թէ Կիլիկիոյ Թագաւորութեան սպարապետին գիրքն է այս որ վեց դար խաւարին մէջ մնալէ ետք լոյս կը տեսնէր նախ Մոսկուայի եւ ապա Փարիզի մէջ: Հրատարակիչը կը բացատրէ Գունդաստապլ տիտղոսին ստուգաբանութիւնը թէ անգլիացի կազմեցին Constable բառը որ նախապէս արտաստեալ կամ կոմս արտոյ արքային կը ծանցուէր եւ յետոյ՝ գորքի ընդհանուր հրամանատար, ուսուցիչ, եւ թնդանօթածիզ բանակին պետը:

Պատմութիւն Հին եւ Նոր Կտակարանաց Երկու մասերով - 1864 Երուսաղէմ. Իմ այս օրինակին առաջին էջին վերի անկիւնը Երուսաղէմի Եսայի Կարապետեան Պատրիարքի կարմիր կնիքը կը մնայ անթերի 1864 թուականով ու զայն յատկապէս արժէքաւոր կը դարձնէ: «Զեկուցում» խորագրին տակ կ'ըսուի թէ «նախ փոյթ տարինք որ ամէն եղելութեան յիշատակութիւնք գտնուի: Երկրորդ՝ կարելի եղածին չափ ժամանակագրական կարգով պատմուին, եւ երրորդ՝ տեղ տեղ ծանօթութիւններ ու դիտողութիւններ դրած ենք պարզելու համար:

ԱՄԵՆ ԲԱՆ ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Մսից եւ կենդանական ծագման այլ աննդատեսակներից հրաժարվողների թիվն աշխարհում օրըստօրէ անուշ է, ինչը աննդատեսակների եւ լայն հասարակութեան շրջանում իրարամերժ քննարկումների տեղիք է տալիս: Արդիւնքում հարց է ծագում. «Միս ուտել, թէ՞ չուտել»:

Փիլիսոփայութիւն, քմահաճութիւն, թէ՞ ուշադրութիւն սեփական առողջութեան նկատմամբ Տարբեր մեկնաբանութիւններ ունի «բուսակերութիւն» (լատիներէն vegetatio՝ բուսականութիւն բառից) բառը, եւ բոլորի իմաստը նոյնն է. մարդկային օրգանիզմի համար բնական է համարուել միայն բուսական ծագման սնունդը, իսկ կենդանական ծագում ունեցող անթոյլատրելի երեւոյթ է, քանզի այն հետեւանք է կենդանու մահուան:

Բուսակերներին կարելի է բաժանել մի քանի հիմնական խմբերի:

Առաջին խմբի ներկայացուցիչները «վեգաններն» են, որոնք իրենց աննդակարգում խիստ սահմանափակումներ են մտցնում: Վերջիններս իրենց աննդից իսպառ բացառում են կենդանական ծագման մթերքը՝ օգտագործելով միայն բանջարեղէն, միրգ, հատիկաւոր եւ այլ բոյսեր: Նոյնիսկ կաթնամթերքի ստացման ժամանակակից տեխնոլոգիաները, ըստ վեգանների, իրականացում են կենդանիների շահագործման հաշուին, ինչը խախտում է բուսակերութեան հիմնական կանոնները: Այս խմբի որոշ ներկայացուցիչներ ծայրայեղ բուսակերներ են, որոնց «հումակեր» կամ «նստուրբուսներ» են անուանում: Նրանք բուսական աննդամթերքն ուտում են միայն իրենց բնական ձեւով՝ առանց որեւիցէ մշակման, եւ ընդունում են միայն հատիկաւոր բոյսերի խոշոր աղացման տարբերակը:

Երկրորդ խմբի ներկայացուցիչներն, այսպէս կոչուած, լակտոբուսակերներն են, որոնք իրենց աննդակարգում բուսական ծագման աննդից զատ ներառում են նաեւ կաթն ու կաթնալիւն հիմք ունեցող մթերք: Այս խմբի «փիլիսոփայութիւնը», ըստ աննդաբանների, աւելի խելամիտ է:

Գոյութիւն ունի նաեւ լակտոբուսակերների մէկ այլ խումբ, որը չի բացառում նաեւ ձու ուտելը: Վերջիններիս անուանում են լակտոֆուսակերներ:

Երբեմն, սխալմամբ, բուսակեր են անուանում նաեւ այն մարդկանց, ովքեր չեն ուտում միայն խոշոր եւ մանր եղջերաւոր կենդանիների եւ թռչնի միս, սակայն իրենց աննդակարգում մեծ տեղ են տալիս ձկնեղէնին եւ ծովային այլ բարիքներին: Այսպիսի «կիսաբուսակեր» մարդկանց թիւը մեծ է, սակայն նրանց ո՛չ իրական բուսակերները, ո՛չ էլ միս նախընտրողներն իրենց «բանակից» չեն համարում:

Բուսակերութեան ֆիզիոլոգիա

Անցեալում մարդիկ հրաժարուում էին «սպանդային» կերակրից՝ լոկ կրօնական կամ փիլիսոփայական նկատառումներից ելնելով, համաձայն որոնց, իւրաքանչիւր կենդանի արարած, ինչպէս եւ մարդը, ապրելու իրաւունք ունի: Կաթոլիկ եւ ուղղափառ ժողովուրդների մօտ բուսակերութիւնը հիմ-

նականում տարածուած է վանականների շրջանում: Աշխարհիկ մարդկանց համար գոյութիւն ունեն պահքի շրջաններ, որոնց ժամանակ միս ուտելն արգելուած է: Բուսակերութիւնը տարածուած է նաեւ մահմեդական երկրների մոլեռանդ կրօնապաշտների շրջանում: Բուդդայականների եւ հինդուականների գրեթէ մեծամասնութիւնը բացառում են միս ուտելը (այդ թւում նաեւ կրիշնայիտները): Հաւատալով հոգու վերածնմանը, նրանք այն կարծիքին են, որ սպանուող իւրաքանչիւր ձկան, եղջերաւոր անասունի կամ նոյնիսկ գորտի հոգին կարող է այնուհետեւ «հանգրուանել» մարդու մարմնում. ահա թէ ինչու կենդանուն սպանելը հաւասարագօր է մարդ սպանելուն:

Ընդհանուր առմամբ, գրեթէ բոլոր կրօնական համակարգերում մսակերութիւնից հրաժարուելը հոգին մաքրելու եւ կատարելութեան հասնելու կարեւոր նախապայման է: Որոշ դէպքերում նման գոհողութեան գնալը միայն ընտրեալների համար է, որոշ դէպքերում էլ՝ պարտադիր տուեալ ուսմունք դաւանող իւրաքանչիւր մարդու համար:

«Բուսակերութիւն» տերմինը շրջանառութեան մէջ է դրուել 1842 թ. «Բրիտանացի բուսակերների միութեան» կողմից, ընդ որում, ի սկզբանէ այն նշանակել է ոչ թէ զուտ բուսակերութիւն, այլ բարոյական եւ փիլիսոփայական առումներով ներդաշնակ կենսակերպ: Մեր օրերում մսակերութիւնից հրաժարուելու են ոչ այնքան էթիկայի եւ բնապահպանութեան նկատառումներով, որքան առողջութիւնը պահպանելու եւ երկարակեցութիւն ապահովելու համար: 1987 թ. գերմանական համալսարաններից մէկի կողմից իրականացուած սոցիոլոգիական հարցումների արդիւնքում պարզուել է, որ արեւմտեան երկրներում բուսակերութեան անցնելն ունի հետեւեալ դրդապատճառները.

- առողջութիւնը պահպանելու ձգտում (78%),
- էթիկա (69%),
- բնապահպանութիւն (35%),
- էսթետիկա (28%),
- կրօնական (23%),
- փիլիսոփայական (22%),
- տնտեսական (19%) եւ
- հիգիենիկ (9%)

Ամէնից շատ բուսակերներ կան երկու տարիքային խմբերում, որոնք են՝ 16-24 եւ 55-64 տարեկան մարդիկ: Որպէս կանոն, երիտասարդներն աւելի հոգատար են կենդանիների հանդէպ եւ չեն ուզում նոյնիսկ անուղղակի առումով «մասնակից» լինել վերջիններիս սպանդին: Ինչ վերաբերում է տարեցներին, ապա նրանք աւելի շատ հոգ են տանում իրենց առողջութեան մասին:

Մեր օրերում բուսակերութեան ջատագովների թիւն աշխարհում օրէցօր աճում է եւ շուտով կը հասնի 1 մլրդ-ի: Այս առումով առիւծի բաժինն ընկնում է Հարաւ-Արեւելեան Ասիայի բնակիչներին (միայն Հնդկաստանի բնակչութեան մօտ 80%-ը միս չի ուտում): Եւրոպայում եւ Ամերիկայում մսակերութեան դէմ պայքարողների թիւը տասանուամէ 7-10%-ի միջեւ: Բուսակերներն այլ լեւս «սպիտակ ազուաններ» չեն. գնալով աւելանում է բուսակերներ-

ըր համար նախատեսուած ճաշարանների եւ ռեստորանների թիւը, իսկ այդ վայրերում ճաշողների համար ստեղծուել է յատուկ միութիւն, որը պաշտպանում է բուսակերների շահերը: Այդ միութեան անդամներն ակտիւ մասնակցութիւն են ցուցաբերում հանրային եւ գիտական քննարկումներին եւ փորձում են հնարաւորինս լաւ ներկայացնել բուսակերութեան առաւելութիւնները: Սակայն, այնուամենայնիւ, բիֆշտեքսների սիրահարները չեն շտապում զիջել իրենց դիրքերը:

Բուսակերութեան զարգացման գործում մեծ դեր է խաղացել կենդանիների պաշտպանութեանն ուղղուած շարժումը եւ, մասնաւորապէս, աւստրալիացի գիտնական Պիտեր Սինգերի աշխատութիւնները: Իր «Կենդանիների ազատութիւն» գրքում Սինգերն ամենայն մանրամասնութեամբ նկարագրում է կենդանիների ու թռչունների բուժման եւ սպանդի աննկարագրելի դաժան պայմանները: Հեղինակը նշում է, որ միայն անգլութիւնը, անտարբերութիւնն ու անզուսպ որկրամոլութիւնն են մարդուն ստիպում չհրաժարուել այնպիսի տգեղ սովորութիւնից, ինչպիսին մսակերութիւնն է: Պիտեր Սինգերի գիրքը մեծ յեղափոխութիւն առաջացրեց մարդկային գիտակցութեան մէջ:

Միսը Կողմ Թե՞ Դեմ

Ժամանակակից աննդաբանութիւնը, հիմնուելով ֆիզիոլոգիայի եւ բիոքիմիայի դասական հետազոտութիւնների վրայ, խորհուրդ է տալիս սնուել թէ՛ բուսական եւ թէ՛ կենդանական ծագման աննդամթերքով: Գիտնականները պարզել են, որ կենդանական ծագման մթերքում մարդու օրգանիզմի բնական գործունէութեան համար անհրաժեշտ ամինաթթուների քանակը կրկնապէս անգամ աւելի շատ է, քան բուսական ծագման մթերքում: Բուսակերութեան պարագայում օրգանիզմի սպիտակուցների եւ, յատկապէս, ամինաթթուների պակասը լրացնելու համար անհրաժեշտ է ուտել շատ մեծ քանակութեամբ հատիկաւորներ, իսկ մարսողական համակարգի օրգանների համար բջջանիւթի մեծ քանակութիւնը կարող է լուրջ խախտումների

յանգեցնել: Բացի այդ՝ բուսական ծագման սպիտակուցն աւելի դժւարութեամբ է մարսուում, քան կենդանական ծագմանը:

Աւելին, ձուն, միսը, լեարդը եւ ձկան իւրոտ միսը հարուստ են մի շարք կենսական կարեւորութիւն ունեցող վիտամիններով: Այս պարագայում աննդաբանների մի խումբ եկել է այն եզրակացութեան, որ բուսակերութիւնը չլի է օրգանիզմում B12 վիտամինի քաղցի առաջացմամբ, վիտամին, որը կարեւորագոյն դեր ունի արիւնաստեղծման համար:

Այսպիսով, հետեւելով այն տեսակետին, որ մսից եւ ձկնեղէնից հրաժարուելը կարող է յանգեցնել օրգանիզմում սպիտակուցների եւ որոշ վիտամինների պակասին, եւրոպացիները շարունակում են կենդանական ծագման սնունդ օգտագործել:

Բուսակերները, սակայն, այս տեսակետին թերահաւատութեամբ են մօտենում եւ պարզաբանում, որ հազարամեակներ շարունակ աշխարհի շատ ու շատ ժողովուրդներ «մի կտոր միս» անգամ չեն կերել եւ, այդուամենայնիւ, առողջ եւ երկարակեաց են եղել:

Մսի օգտագործումը աննդի մէջ աւելի մեծ զարգացում է ապրել յատկապէս XX դարում, երբ մարդկութիւնը յայտնագործել է սառնարանը: Մսակերութեան ընդդիմադիրները միաձայն պնդում են, որ ֆիզիոլոգիական տեսանկիւնից մարդ արարածի օրգանիզմն աւելի լաւ է մարսում բուսական ծագման սնունդը: Որպէս կանոն, մսակերների մօտ շատ յաճախ փորկապութիւններ եւ աղիքային ինտոքսիկացիաներ են արձանագրուում, ինչը պայմանաւորուած է օրգանիզմի կողմից մսամթերքի դանդաղ մարսելու հետ:

Մսի չարահաման պարագայում օրգանիզմում կուտակուում են մեծ քանակութեամբ ազոտական միացութիւններ, ինչի արդիւնքում թթուահիմնանային հաւասարակշռութիւնը խախտուում է, եւ կարող են զարգանալ այնպիսի հիւանդութիւններ, ինչպիսիք են՝ միզաթթուային դիաթեզը եւ պոդագրան:


Ինչպէս բուսակերներն են նշում,

Շար.ք էջ 19

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնել՝ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian
1870 E. Layton St. • Pasadena, CA 91104
626-354-5924 • vamedia@yahoo.com

ԳՐԱԴԱՐԱՆԻՍ ԶՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐԸ

Շարունակում էք 16-էն

Մեր նպատակը Ս. Գրոց պատմական մասը ճիշդ ցուցնել եղած է սոյն համառոտութեան մէջ»:

Իմ կարծիքով Աստուածաշունչի պատմութեան հայերէն առաջին դասագիրքն է այս որ Երուսաղէմի ժառանգաւորաց Վարժարանին յատուկ եղած է, եւ ապա տարածուած Արմաշու Դպրեվանք եւ Կիլիկիոյ Աթոռին դպրեվանքը՝ Սիս:

Առձեռն Բառարան - 1865 Վենետիկ Ս. Ղազար. «Գիտելիք»ին մէջ կ'ըսուի. «Հայկազեան Լեզուի այս երկրորդ բառարանը կը լրացնէ նախորդին ինչ ինչ թերիները՝ ի նորոյ կարգաւ մեր նախնեաց մատենագրական գիրքերը: 5000-է աւելի բառեր աւելցուցինք նոր ոճով: Աւելին կը թողունք ժամանակի ընթացքին հետագոտողներուն: Իսկ ինչ որ այժմ կատարեցինք թող հայերէն լեզուի յաւաքացման նպատակով: Իւրաքանչիւր բառ երկու հոմանիշներով ցոյց կը տրուի, եւ անպայման նաեւ անոր թրքերէնը կը յաջորդէ:

Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցոյ - 1869 Երուսաղէմ. «Յառաջաբան»ին մէջ կը կարդանք թէ Մատթէոս նախ ինք իր մասին կը խօսի որպէս Ուռհայեցի (Եղեսիացի) վանական մը, որ գրեց իր ժամանակագրութիւնը 10-12րդ դարերուն: Գիրքը կը բովանդակէ 952 թուականէն մինչեւ 1136 տարիներու հայոց պատմութեան ժամանակահատուածը: Բազմաթիւ թագաւորութեան մասին գրած է, ինչպէս նաեւ առաջին խաչակիրներու եւ Բիւզանդիոնի ու Արաբ ընդհարումներու մասին: Երկու ձեռագիր օրինակներէ բաղկացած որոնք գրուած պիտի ըլլան, կ'ըսէ, 17-րդ դարու սկիզբը:

Ուխտանէս Եպիսկոպոսի Սեբաստիոյ Պատմութիւն Երեք Մասերով - 1871 Վաղարշապատ. Առաջին մասն է «Հայոց Հին Թագաւորաց Պատմութիւնը»՝ մինչեւ քրիստոնէութեան դարձը, երկրորդն է «Վրացիներու եկեղեցական գետնի վրայ բաժանումը Հայ Եկեղեցիէն 607 թուին», եւ երրորդը՝ Մաղ կոչուած ազգին քրիստոնէայ դարձը որ սակայն բոլորովին կորսուած է: Բ. մասը շատ աւելի արժէքաւոր է քան առաջինը՝ ուր վաւերագրութիւններ, նամակներ, կոնդակներ ցոյց կուտան վրացիներու անհաւատարմութիւնը եւ Կիւրիոն անուն եպիսկոպոսին ըմբոստութիւնը հայոց Աբրահամ Կաթողիկոսին դէմ որմէ ինք ձեռնադրուած էր:

Գիրքին այս միակ հրատարակութիւնը՝ սխալաշատ եւ հիմնու-

վին սրբագրելի քովս կը մնայ 50 կամ աւելի տարիներէ ի վեր: Ես ալ ուշադրութիւն չէի դարձուցած անոր, մինչեւ այն օրը երբ ձեռքս առի եւ որոշեցի անգլերէնի թարգմանել՝ սրբագրելէ ետք 200-է աւելի տառասխալներ, լեզուական, քերականական, իմաստի վերաբերեալ, եւ յատուկ անուններու այլանդակ տառադարձումներ: Ստիպուեցայ հատորը լիովին սրբագրել ու ապա ձեռնարկել թարգմանութեան: Երկու հատորներով լոյս տեսաւ սոյն թարգմանութիւնը:

Ընդհանրական Թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալույ - 1871 Երուսաղէմ. Կոնդակներու փունջ մըն է աստուածաբան եւ ներհուն Շնորհալի Մեծ Սուրբին կողմէ գրուած 12-րդ դարուն: «Յառաջաբան»ին մէջ կ'ըսուի. «Ս. Ներսէս Շնորհալիի առաքելաշունչ նամակներու հաւաքածոն է այս որ «Ընդհանրական» կը կոչուի ուր ամփոփուած են Յոյն կայսեր եւ Յոյն պատրիարքին, եւ հայոց Գրիգոր Տղայ Կաթողիկոսին ուղղեալ նամակներ՝ զանազան առիթներով եւ ժամանակներով: Ութ ձեռագիր օրինակներու հետ բաղկացած հրատարակութիւն մըն է այս որ ծանօթ է որպէս գերագանց եւ վերջնական հրատարակութիւն:

Ուսումն Համաբարբառ Աւետարանի Ներսէս Պատրիարք Վարժապետեան - 1875 Արմաշ. Ներսէս Պատրիարք Վարժապետեանի այս հատորը Չորս Աւետարաններու մեկնութիւնն է որ պարզ լեզուով ժողովուրդին հասկնալի կը դարձնէ Յիսուսի Առաքելութիւնը եւ Աւետարաններու բովանդակութիւնը: Համեստօրէն ըսած իր գրութեան սկիզբը թէ անկատար գործ մըն է իրը, եւ կը յուսայ որ իրմէ աւելի կարող անձ մը աւելի լաւ կը պատրաստէ յետագային: Ճիշդ եղաւ իր մարգարէութիւնը: 35 տարիներ ետք նոյն Օրմանեան Մաղարիա Արքեպիսկոպոս, որ ի'ր, Ներսէս Վարժապետեան Պատրիարքէ ընդունուեցաւ երբ հոռմէղաւանութեան հայադաւանութեան անցաւ, գրեց իր «Համապատում» ծաւալուն հատորը ուր լիովին քննարկած է Չորս Աւետարաններու բովանդակութիւնը աւելի մասնագիտական հիմունքով:

Նոր Բառգիրք Հայերէն-Անգլերէն Մատթէոսի Վրդ. Պետրոսեան - 1875-1879 Վենետիկ. 140 տարի անցեր է այս գրաբարէ անգլերէն ընդարձակ բառարանի հրատարակութեան, եւ տակաւին նոր մը երեւան չէ ելած, եւ այս մէկը կը մնայ լաւագոյնը երբ ուզես մեր նախնեաց գրաբար պատմագրութեան անգլերէնի

թարգմանութիւնը կատարել: Ինքս թարգմանած ըլլալով երկու պատմիչներու գործերը՝ Ղեւոնդ Երէցի արաբներու արշաւանքի 8-րդ դարու երկն ու Ուխտանէս պատմիչի 10-րդ դարու գոյգ գիրքերը, գործածած եմ այս բառարանը:

Պետրոսեանէն յիսնամեակ մը առաջ նոյն գործը կատարած էր Հայր Փասգալ Աւգեր, որմէ օրինակ մըն ալ ունիմ, սակայն Պետրոսեանի գործը կը մնայ աւելի ամբողջական եւ ճշգրիտը:

Աթոռ Հայաստանեայց Մաղարիա Եպիսկոպոս Օրմանեան - 1889 Վաղարշապատ. Ամենայն Հայոց Մակար Ա. Կաթողիկոսին նուիրած է հեղինակը այս համառոտ եւ լիակատար գործը՝ երբ իրմէ 1886-ին եպիսկոպոս ձեռնադրուեցաւ Մայր Աթոռի մէջ: Օրմանեան Մակար Կաթողիկոսին կուտայ սա տիտղոսը «Գահակալ նախամեծար լուսաւորչահիմն աթոռոյ սրբոյ էջմիածնի, Եպիսկոպոսապետ Մեծ եւ Քահանայապետ Հայաստանեայց Ս. Եկեղեցոյ, Հովուապետ արթուն բանաւոր հօտիս Քրիստոսի, Հայր մեր եւ Տէր Հոգեւոր»:

Օրմանեան «Եզրակացութեան» մէջ կ'ըսէ: «Հայց. Եկեղեցին իւր սեպհական կանոններով եկեղեցական դասակարգութեան ամենախիստ պահպանն է եղած՝ եկեղեցական նուիրապետութեան բարձրագոյն նշանակութիւն տուած ըլլալով: Ան ո'չ նորութեանց ետեւ մոլորեցաւ, եւ ո'չ բարեկարգութեանց պէտք ունեցաւ, մնալով ինքնակախ՝ բոլոր եկեղեցեաց վրայ գերագանցապէս փայլելով միշտ»:

Պատմութիւն Ղեւոնդեայ Մեծի Վարդապետին Հայոց - 1887 Ս. Պետրբուրգ. Հրատ. Կարապետ Եղեանցի, Աշխատ. Ստեփան Մալխասեանցի

Վերջին ժամանակներուս ինքս կատարեցի Ղեւոնդի Պատմագրութեան անգլերէնի թարգմանութիւնը ֆրիւտելիքի մէջ ներածականով եւ ծանօթագրութիւններով որպէս դոկտորական աւարտաճառս Գոլոմպիա Համալսարանի: Ունեցաւ երկու տպագրութիւն՝ 1982 եւ 2007 թուականներուն: Թարգմանութեան ընթացքին բաղադրեցի Երեւանի Մատենադարանի 13-րդ դարու հնագոյն ձեռագիրը եւ տողատակերուն նշեցի տարբերակները:

Պատմութիւն Տարօնոյ Չենոբ Ասորի Գլակայ Վանքի - 1889 Վենետիկ, Ս. Ղազար. «Զեկուցում»ին մէջ կ'ըսուի թէ «այս Չենոբ Ս. Գր. Լուսաւորչին աշակերտեցաւ եւ ապա իրմէ նշանակուեցաւ առաջնորդ իննականեան վանքին»: Իսկ «Յիշատակարան»ին մէջ կը տրուի ձեռագրին գրութեան ժամանակն ու վայրը՝ Հերակլ թագաւորի օրով եւ Պարսից Խոսրով Փարվեզ թագաւորի մեռնելէն ետք, եւ հրամանով Ներսէս Գ Շինող Կաթողիկոսին Գլակայ Ս. Կարապետ Վանքին մէջ, ուր կան, կ'ըսէ, Ս. Յովհաննէս Կարապետ Մկրտչի նշխարները: Կը տրուի նաեւ կա-

րեւոր պարագայ մը ուր գրութիւնը լրացնող հեղինակը կը յայտնուի՝ Յովհան Մամիկոնեան Եպիսկոպոս որ 35-րդ վանահայրն էր Չենոբէն սկսեալ:

Այս պատմագրութիւնը անգլերէնի թարգմանեց Լեւոն Աւտոյեան, այժմու Library of Congress-ի հայկական բաժնի վարիչը:

Հայաստանեայց Եկեղեցին եւ Բիւզանդեան Ժողովոց Պարագայք, Դր. Արշակ Տէր Միքէլեան - 1892 Մոսկուա. «Յառաջաբան»ին մէջ հեղինակը կը շեշտէ թէ «Հայց. Եկեղեցին ոչ մի եկեղեցու կամ ազգի թշնամի չէ, սակայն իւր անաղարտ հոթեան եւ կերպարանքի մէջ մնալով, նոցա գրկախառնելուց հիմնապէս եւ մահու չափ զգուշանում է: Մեր Եկեղեցին մեր փառաւոր աւանդարանն է, եւ ամէն մէկ եկեղեցու բարոյական պարտքն է ցոյց տալ եւ խելամուտ անել իւր որդւոց իւր հիմնական սկզբունքներն ու դաւանանքը»:

Աստուածաշունչ Մատեան Հին եւ Նոր Կտակարանաց - 1895 Կ. Պոլիս. Սոյն Աստուածաշունչը Ոսկան Վրդ. Երեւանցիի տպագրութեան կրկնօրինակն է կատարուած երբայցէն եւ յունարէն բնագիրներուն վրայէն՝ Հինը երբայցէն եւ Նորը Յունարէն: Հրատարակած է Ներսէս Պատրիարք Վարժապետեան՝ Ս. Գրոց Ընկերութեան միջոցաւ:


Մատեանիս Հին եւ Նոր Կտակարաններու միջեւ «ընտանեկան արձանագրութիւններ»ու բաժնին մէջ արձանագրութեան են մեր էվէրէկի տոհմի Գահրէի ամուսնութիւններն ու ծնունդները, ձեռնադրութիւններն ու մահերը, պատահած 1930-1954 թուերուն, ձեռամբ հօրս՝ Եղիա Արզումանեանի:

Ծիծաղ Յակոբ Յ. Պարոնեանց - 1899 Թիֆլիս (480 էջ). «Երկու Խօսք»ին մէջ մեծ երգիծաբան Յակոբ Պարոնեան հետեւեալը կ'ըսէ իր այս երկին մէջ որ յետ մահու հրատարակուեցաւ Թիֆլիսի մէջ: Ինք մահացաւ 1892-ին: Այնտեղ կ'ըսէ.


«Ներկայ գործս պիտի խօսի կենդանիներու վրայ, ի բաց առնելով միայն այն կենդանիներուն մարդ կ'ըսեն տասնեկիններորդ դարուն մէջ: Ինքնին կը հասկցուի ուրեմն թէ դիւցազներուս խումբը պիտի կազմուի կատուէ, գորտէ, կապիկէ, աղուէսէ, գայլէ, կէշէ, սագէ, բաղէ եւ վերջապէս այն ամէն կենդանիներէն որոնց մարդ չեն ըսեր:

«Փիլոն հագած կապիկներ, առաջնորդութեան թեկնածու ազուաներ, իրենց անձը ուղղութեան օրինակ հուշակող ուղտեր, ներդաշնակութեան ճաշակ տարածող աւանակներ, պանիրի պահպանութեան համար իրենք զիրենք ընտրելի ներկայող կատուներ, եւ այլն, որոնք ի տես պիտի գան եւ իրենց դերերն պիտի կատարեն Ծիծաղի ասպարէզին մէջ»:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Քայրոփրաքթիք բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցուրտ:
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատահած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր ստահողութիւնն է

SEROP'S CAFE
GREEK & LEBANESE FOOD
SERVING BATON ROUGE SINCE 1979

ՇՆՈՐԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Տէր Եւ Տիկ. Ժիրայր Եւ Սիմա Կիրակոսեան շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, հեռաձայնով, ցաւակցական գիրերով իրենց վշտակցութիւնները յայտնեցին իրենց եղբոր **ՎԱՐԴԳԷՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ** մահուան տխուր առիթով:

Առ այդ կը նուիրեն՝
 «Մասիս» շաբաթաթերթին՝ 300 տոլար:
 «Արսէն Կիտուր» մասնաճիւղին՝ 200 տոլար:

ՑԱԿԱԿՑՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԳԷՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԻ մահուան տխուր առիթով Յովհաննէս Պալաչեան իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ընտանեկան պարագաներուն եւ հարազատներուն, յատկապէս եղբոր **Տէր Եւ Տիկ. Ժիրայր Կիրակոսեանին**:

Առ այդ \$50 կը նուիրեն «Մասիս»-ի ֆոնտին:

ՈՂՂՈՒՄ

«Մասիս»-ի նախորդ թիւին ցաւակցականի մէջ Յովհաննէս Գոնտուրուճեանը կարդալ Յովհաննէս Գոնտարճեան:

ԱՄԷՆ ԲԱՆ ԲՈՒՍԱԿԵՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՍ

Շարունակուած էջ 17-էն

կենդանու քաշն աւելացնելու եւ մի շարք հիւանդութիւններ ղէմ պաշարելու նպատակով անասնաբուժները յաճախ նրանց հորմոնալ միջոցներ են տալիս, տարբեր պատուաստումներ են կատարում եւ կապալիտիներ ներարկում, որոնց ազդեցութիւնը մարդկային օրգանիզմի վրայ, որպէս կանոն, հաշուի չի առնուում: Շատ յաճախ մարդու մօտ վարակիչ հիւանդութիւնների պատճառ կարող են դառնալ կենդանական ծագման սննդի օգտագործումը:

Այժմ խօսենք սպիտակուցների մասին: Եթէ հաշուի առնենք այն հանգամանքը, որ մարդու օրգանիզմի համար սպիտակուցների օրական անհրաժեշտ պաշարը միջինում պէտք է կազմի 150 մգ, ապա միայն բուսական ծագման սնունդը ընդունելու պարագայում սպիտակուցային քաղցի զարգացումը լիովին հաւանական է դառնում: Սակայն ճապոնիայում, Մեծ Բրիտանիայում եւ Միացեալ Նահանգներում անցկացուած որոշ հետազոտութիւններ ցոյց տուեցին, որ օրական 50-85 մգ սպիտակուցն էլ լիովին բաւարար է, որպէսզի մարդ արարածը լաւ ինքնազգացողութիւն, դիմադրողականութիւն եւ աշխատունակութիւն ունենայ: Ըստ այդ հետազոտութիւնների՝ միայն կերակրող մայրերի եւ դեռահասների օրգանիզմն է, որ օրական առնուազը 100 մգ սպիտակուցի կարիք ունի: Այս թուերն անիրական են գուտ բուսակերութեամբ ապրող մարդկանց համար, եւ իսկապէս, շատ դժուար է օրգանիզմին անհրաժեշտ ամինաթթուների պաշարը լրացնել միայն բուսական ծագման սպիտակուցներով: Այդ իսկ

պատճառով սննդաբանները բուսակերներին խորհուրդ են տալիս չհրաժարուել կաթնամթերքից, որը լիարժէք սպիտակուցների բնական աղբիւր է: Կաթի եւ ձուի մէջ մեծ քանակութեամբ B12 վիտամին կայ, ուստի լակտոբուսակերները հնարաւորութիւն ունեն խուսափել դրա քաղցից: Իսկ նրանց համար, ովքեր իսպառ հրաժարուած են կենդանական ծագման սննդից, B12-ի անհրաժեշտ պաշարն ապահովելու համար յատուկ նպատակով մշակուել եւ ստացուել է մթերք, որի մէջ մեծ քանակութեամբ սոյսյ եւ հատիկաւորներ կան:

Ի Շահ Առողջութեան

Մսից հրաժարուելու օգտակարութիւնը գնահատելու նպատակով ներկայացնենք ընդամենը վիճակագրական հետազոտութիւնների որոշ տուեալներ, որոնցում համեմատում են բուսակերների եւ խառը սնունդ նախընտրողների շրջանում տարբեր հիւանդութիւնների առաջացման հաւանականութիւնը:

Բուսակեր տղամարդիկ շաքարային դիաբետով հիմնականում չեն հիւանդանում, իսկ խառը սնունդ նախընտրողների մօտ՝ հիւանդացութիւնը կազմում է 2,6%: Խառը սննդին նախապատուութիւն տուող կանանց շրջանում հիւանդանալու հաւանականութիւնը բուսակերների համեմատ կրկնակի բարձր է:

Խառը սնունդ նախընտրող տղամարդիկ 2, իսկ կանայք՝ 5 անգամ աւելի շատ են տառապում զարկերակային գերճնշմամբ, քան բուսակերները:

Բազմաթիւ գիտական հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ բուսակերների արեան մէջ խոլեստերինի եւ այլ աթերոգէն լիպիդների քանակութիւնը նուազագոյն է, ինչը նրանց հնարաւորութիւն է տալիս խուսափել մի շարք հիւանդութիւններից: Վիճակագրական տուեալների համաձայն, մսակեր տղամարդկանց շրջանում սրտամկանի ինֆարկտի հաւանականութիւնը 5 անգամ աւելի մեծ է, քան բուսակեր տղամարդկանց մօտ:

Բջջանիւթով հարուստ բուսական սնունդ օգտագործելը նպաստում է մարտդական համակարգի օրգանների օպտիմալ գործունէութեանը եւ խոչընդոտում փորկապութիւնների առաջացմանը: Խառը սնունդը ընդունող տղամարդկանց մօտ լեարդի, լեղապարկի, լեղուղիների եւ ենթաստամոքսային գեղձի հիւանդութիւնները 2 անգամ աւելի շատ են գրանցուած, քան բուսակեր տղամարդկանց մօտ:

Բժշկական գրականութիւնը եւս պնդում է, որ չարորակ նորագոյացութիւնների առաջացումը ինչ-որ չափով պայմանաւորուած է մսի, ձուի, պանրի եւ կենդանական ծագում ունեցող ճարպերի ու սպիտակուցների չարաշահմամբ: Որոշ տուեալների համաձայն, շաքարային մէկ անգամ տաւարի, խոզի կամ ոչխարի միս ուտելը աղիների քաղցկեղով հիւանդանալու հաւանականութիւնն աւելացնում է 40%-ով, իսկ շաքարային 5-6 անգամ ուտելու պարագայում այդ հաւանականութիւնն աւելանում է 80%-ով:

Վերոնշեալ տուեալները բուսակերներին հիմք են տալիս կարծելու, որ իրենց սնունդը կարգն աւելի ուղիղն է, եւ այն թոյլ է տալիս երկարացնել կեանքի տեւողութիւնն ու կանխել մի շարք հիւանդութիւնների զարգացումը: Եթէ ժամանակակից սննդաբանները որոշակի վերապահութեամբ են մօտենում վեգանների սնունդը կարգին, ապա լակտոբուսակերների կողմից առաջարկող սնունդը մեթոդները ֆիզիոլոգիական տեսանկիւնից կատարելապէս ընդունելի են, քանի որ դրանք ամբողջութեամբ բաւարարում են օրգանիզմի բնական գործունէութեան համար անհրաժեշտ սննդի պաշարները: Ի դէպ, մսամթերքից հրաժարուելու անվտանգութիւնը պաշտօնագէտ հաստատուել է նաեւ ամերիկեան սննդաբանների ասոցիացիայի կողմից:

Ժամանակակից սննդաբանութիւնը, հիմնուելով ֆիզիոլոգիայի եւ բիոքիմիայի դասական հետազոտութիւնների վրայ, խորհուրդ է տալիս սնունդ թէ՛ բուսական եւ թէ՛ կենդանական ծագման սննդամթերքով:

Հնդկաստանի հնագոյն փիլիսոփայական ուսմունքներից մէկի՝ Չայնիզմի կանոնները, կեանքի բոլոր ձեւերի նկատմամբ հոգածութիւնն ու յարգանքը հասցրել են կատարելութեան: Անշուք միջոցներ կամ թրթուրին պատահաբար չվնասելու համար որոշ Չայնիստներ քայլելիս յատուկ փոքրիկ աւելներով աւելում են իրենց առջեւի հողը կամ իրենց հագուստին փոքրիկ գանգակներ են կախում, որպէսզի կենդանիներին «նախազգուշացնեն» իրենց մօտենալու մասին: Իսկ պատահաբար ջրի հետ որեւէ չնչին օրգանիզմ կուլ չտալու նպատակով Չայնիստները նախապէս ֆիլտրում են ջուրը:

Հնդկաստանի հնագոյն փիլիսոփայական ուսմունքներից մէկի՝ Չայնիզմի կանոնները, կեանքի բոլոր ձեւերի նկատմամբ հոգածութիւնն ու յարգանքը հասցրել են կատարելութեան: Անշուք միջոցներ կամ թրթուրին պատահաբար չվնասելու համար որոշ Չայնիստներ քայլելիս յատուկ փոքրիկ աւելներով աւելում են իրենց առջեւի հողը կամ իրենց հագուստին փոքրիկ գանգակներ են կախում, որպէսզի կենդանիներին «նախազգուշացնեն» իրենց մօտենալու մասին: Իսկ պատահաբար ջրի հետ որեւէ չնչին օրգանիզմ կուլ չտալու նպատակով Չայնիստները նախապէս ֆիլտրում են ջուրը:

ՀԱՃՆՈՅ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԿՐԹԱՆՊԱՍՏ ՀԱՃԸՆՑԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՈՒ

Հանճայն Հայրենակցական Միութիւնը յառաջիկայ տարեշրջանին համար կրթանպաստ պիտի տրամադրէ միջնակարգ, երկրորդական եւ համալսարանական ուսման հետեւողներուն: Դիմողները պէտք է ըլլան հանրային ծնողներու գաւակ եւ շարադրութիւն մը կցեն իրենց յառաջիկայ ծրագիրներու մասին: Թեկնածուներէն կը խնդրուի մեզի հետ հաղորդակցիլ հետեւեալ էլեկտրոնային հասցէով՝ unionofhadjin@gmail.com

OFFICES FOR RENT IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave
 Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով Գետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք զանոնք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հաճեցէք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N.ALLEN AVE. PASADENA, CA 91104

REQUEST FOR PROPOSALS (RFP)

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in the following opportunities:

RFP 7568
Banking Services
 (Issue 12/10/2012; Due 1/22/2013)
 To provide banking services

RFP 7570
ERP Upgrade Strategy
 (Issue 12/17/2012; Due 1/22/2013)
 To provide Enterprise Resource Planning (ERP) upgrade strategy
 Copies of the RFP's may be obtained via www.hacla.org/ps or call (213) 252-5405.
 12/20, 12/27/12
 CNS-2418434#
 MASSIS WEEKLY

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԴԱՏԱՐԿՈՒՄ Է ՍԱՐԴՈՒՑ, ՄՏՔԻՑ, ՏՐԱՄԱԲԱՆՈՒԹԻՒՆԻՑ

Շարունակում է 2-ին

ներին, եւ Իսրայէլին, եւ ԱՄՆ-ին, եւ Եւրոպային, եւ Չինաստանին (Չինաստանը ինդիոս ունի ուշ-գուրները հետ, որոնք էթնիկ թուրքեր են եւ թուրանի մաս լինելու լաւակնութիւններ կարող են ունենալ): Ես Քրտստանի ստեղծմանը դէմ որեւէ երկիր չեմ տեսնում, բացի թուրքերից (Իրանն էլ մի գուցէ գնայ որոշ գիշուներին, իր մասնատումը կանխելու նպատակով):

Իսկ քանի դեռ Քրտստանը չի ստեղծուել, մենք պէտք է մտածենք ներքին ռեսուրսների հաշուին փրկուելու մասին:

Կա՞ն արդեօք ներքին գործունէր, միջոցներ, քայլեր, որոնք կարող են կանխել Հայաստանի կործանումը: Տեսականօրէն ես այդպիսիք կարող եմ թուարկել, բայց գործնականում, այդ ամենի հաւանականութիւնը 100 տոկոս չէ:

ա. Եթէ օլիգարխիան ինքնակամ գիշի իր դիրքերը քաղաքացիական իշխանութիւններին, համաձայնուի համագործակցել նրա հետ եւ գործի օրէնքի շրջանակներում: Այսինքն, ստեղծուի իրապէս ազգային համաձայնութեան կառավարութիւն, որը արտակարգ իրավիճակի ռեժիմով երկիրը կարգի կը գցի:

Սրան հասնելու առաջին քայլը պէտք է լինի տնտեսական թաւանի ամնիստիան-ներումը, որը դժուար պատկերացնելի է եւ կասկածելի օլիգարխիայի համար: Նրանք գիտեն, որ թաւանն ուղեկցուել է բազմաթիւ սպանութիւններով, եւ դժուար հաւատան, որ գործը կը կանգնի միայն տնտեսականի վրայ: Եթէ քրէական յանցագործութիւնների համապարփակ ներում եւս արուել, ապա մի գուցէ

այսպիսի քայլի հնարաւորութիւն-հաւանականութիւնը, իմ գնահատմամբ, դառնայ մօտ 10-20 տոկոս: բ. Քաղաքացիական պատերազմով իշխանութիւնը վերցուել օլիգարխիայի ձեռքից. սրա հաւանականութիւնը 0,1 տոկոսից աւել չէ:

գ. Սերժը, Ռոբերտը, Լեւոնը համաձայնում են իրենց թիմերով երկիրը հանել էս վիճակից. Հաւանականութիւնն իմ կարծիքով բացարձակ գրօ է:

դ. Քաղաքացիական այլընտրանքային կառուցներ են ձեւաւորում, հանրութիւնը համախմբում է դրանց շուրջը, իշխանութիւնները եւս, տեսնելով որ երկիրը գնում է կործանման եւ իրենք են լինելու հազարամեակների պատմութեան ժողովրդի ու նրա երկրի տապալման մեղաւորը, ստիպուած վերադասաւորում են, գնում են սկզբունքային գիշուներին, եւ հիմնովին փոխում են իրենց գործելաոճը:

Նրանք պահում են իրենց դիրքերը որպէս պաշտօնեաներ, բայց ստիպուած են լինելու բոլոր հարցերում հաշուի նստել ալտերնատիւ կառուցների հետ: Սրա հաւանականութիւնը ես դիտարկում եմ որպէս 40-50 տոկոս:

Ես այսպիսին եմ տեսնում մեր ներկայ ինդիւրները:

Պարզ է, որ հիմա ռուսական, կամ եւրոպական կողմնորոշման ինդիւր չունենք: Մենք պետականութիւնը փրկելու անյապաղ ինդիւր ունենք, որի դէմ են դրսում, եւ որի դէմ են ներսում՝ մի շատ փոքր շերտ տգետներ, չտեսներ ու դեզնեքատներ:

Ողբերգական ընթացք է, որին շարունակում ենք անլուրջ մօտենալ:

«ԼՐԱԳԻՐ»

ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԸ ԸՍՏ ԱԶԱՏ ՄԱԹԵԱՆԻ

Շարունակում է 15-ին

ՀԱՅԵԶ, ԽԱՅԱՄ, ԻՐԱՆԱԿԱՆ ԱՐԴԻ ԲԱՆԱՍՏԵՂՈՒԹԻՒՆ

Իրանը բանաստեղծութեան երկիր է, իրանցիները բանաստեղծական ժողովուրդ: Պարսկերէնով են ստեղծագործել բանաստեղծական խօսքի այնպիսի հսկաներ, ինչպիսիք են Ֆերդոսին, Խայամը, Հաֆեզը, Սաադին, Մոլլաին եւ ուրիշներ: Հայաստանում յատկապէս սիրուած են Շամլուն, Փորուղը եւ Սեփեհրին: Անձամբ ինքս շատ բան եմ սովորել նրանցից: Անցեալ տարի իմ եւ Շափուր Ալինեթաղի թարգմանութեամբ լոյս տեսաւ Պարույր Սեւակի բանաստեղծութիւնների մի փունջ, որը շատ լաւ ընդունուեց պարսիկ ընթերցողի կողմից:

Իրանական արդի բանաստեղծներից թարգմանել եմ Ահմադ Շամլու, Ֆորուզ ֆարրուքադ, Ախաւան Սալես, Սոհրաբ Սեփեհրի եւ այլ բանաստեղծներից մի ժողովածու, որը տպագրութեան պատրաստ է արդէն մի երեսուն տարի: Դրանցից որոշ կտորներ տպագրուել են մամուլում...

Ինչ վերաբերում է Հաֆեզին, ապա նա միշտ էլ ինձ թուացել էր անթարգմանելի: Իմ բազմաթիւ փորձերի ժամանակ հրաժարուել էի հէնց առաջին տողից:

Խայամի քառեակների թարգմանութիւնը բացեց իմ ճանապարհը, աւելի շուտ լեզուն: Դա իրապէս

մեծ փորձութիւն ու փորձառութիւն էր ինձ համար: Իրապէս ստեղծագործական աշխատանք: Ամենակարեւորը այն, որ ես այդ գործով ինձ համար յայտնաբերում էի հայոց լեզուի անսպառ հնարաւորութիւնները այս երկու թարգմանութիւնների հիման վրայ:

«ՀԱՆԴԵՍ»

«Հանդէս» եռամսեայ պարբերականի հետ սկսել եմ աշխատակցել թերթի խմբագիր Վարուժ Սուրէնեանի առաջարկով եւ դա ես համարում եմ իմ գրական կեանքի ամենաերջանիկ պահը: Մինչ այդ պայմանների բերումով հեռու եմ եղել որեւէ գրական շրջանակից: Սփիւռքի, թէ Հայաստանի մամուլում նիւթեր եմ տպագրել գրեթէ պատահական կերպով: Խօսքս յատկապէս գրական նիւթերի մասին է: Միշտ ներքին մի զգացողութեամբ ցանկացել եմ, որ ձայնս լսուի իրանահայ մամուլից, որը, ինչպէս յայտնի է, երկար տարիներ սահմանափակուած է եղել միակ «Ալիք» օրաթերթով, իսկ այնուհետեւ նոր պայմաններում՝ «Փիւնիկ», «Արաքս» եւ այլն, աւելի շատ եղել են քաղաքական-հասարակական բնոյթի, հետեւաբար այդ թերթերում տպագրել եմ առաւելաբար հրապարակախօսական նիւթեր: «Հանդէս»-ը եղաւ այն միջավայրը, որտեղ ես արուեստի եւ գրականութեան առումով գտնում էի ինձ մօտ:

ՍՏԱՄՊՈՒԼՈՒՄ ԼՈՅՍ ՏԵՍՆՈՂ

«ԺԱՄԱՆԱԿ» ԹԵՐԹԸ 105 ՏԱՐԵԿԱՆ Է

Շարունակում է 7-ին

մայնքի կազմակերպութիւններից. «Առաջին հայերէն թերթը 210 տարի առաջ Հնդկաստանի Մատրաս քաղաքում է ստեղծուել: Հայ մամուլի այս 210 տարուայ պատմութեանը «Ժամանակն» ունի իր մասնակցութիւնը: Այս շրջանում լոյս տեսած հայերէն պարբերական մամուլի գրեթէ կէսը Ստամպուլում է տպագրուել: Այն ժամանակ կար համայնքային կազմակերպութիւնների ցանց, որը տարբերութիւն էր ստեղծում: Այս ցանցի նորութիւնները, տեղեկութիւնները մարդկանց հասնում էր մամուլի միջոցով: Եկամուտն էլ այսպէս էր ապահովուում: Թուրքիայի հայկական մամուլում նման աւանդույթ կայ, որը դեռեւս շարունակում է»:

Արա Գիւլերն իր առաջին լուսանկարները «Ժամանակ» թեր-

թի համար է նկարել:

Գոչունեանը նաեւ նշեց, որ յայտնի լուսանկարիչ Արա Գիւլերնի «Ժամանակ» թերթի 100-ամեակի միջոցառումների շրջանակում Հայաստանում լուսանկարած նկարներից բաղկացած ցուցահանդէսը նախ Պոլսոյ հայոց պատրիարքարանում, այնուհետեւ՝ Նոյեմբերի 10-ին, Հայաստանում է բացուել: «Սա հայ-թրքական յարաբերութիւններում մեր համայնքի ունեցած կառուցողական ներդրման մասին յիշեցնելու տեսանկիւնից խորհրդանշական էր»:

Գոչունեանի խօսքերով, թերթում տեղ են տուել Արա Գիւլերնին, ով ասում է, որ վարժարանում սովորելու առաջին տարիներին իր առաջին լուսանկարները «Ժամանակի» համար է արել, ռեպորտաժներին, ռեսուսմասիւրութիւններին, արվեստի քննադատութիւններին: Ա.դրիւր՝ Akunq.net

«ՔԱԶ ՆԱԶԱՐ» ՌԻՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ

Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30 Կլէմստէյլի 380-րդ կայանից

LIQUIDATION SALE!

Gianni Ladies Fashion

LATEST EUROPEAN STYLES

50-75% OFF ENTIRE STORE

Everyday Dresses • Evening Gowns
Accessories • Shoes • Belts

Store Closing... Everything Must Go!

6412 Hollywood Blvd.
Los Angeles, CA 90028
(323) 462-2090